European Training Foundation

ԵԿՀ-ԱՄԿ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԿՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

Փետրվար 2022

THE EU AGENCY SUPPORTING COUNTRIES TO DEVELOP THROUGH LEARNING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ 4

1. ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿԸ 7

1.1. ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 8

1.2. Համակարգի ակնարկը 11

2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ 15

3. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 19

3.1. Համակարգման, համագործակցության և արդյունավետ կառավարման խթանումը 19

3.2. Քաղաքացիական հասարակության հիմնական շահագրգիռ կողմերը 23

4. ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 26

4.1. Կրթությունը, ուսուցումը և աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը երիտասարդների համար 29

4.2. Աջակցությունը աշխատանք փնտրող, գործազուրկ և NEET անձանց 35

4.3. Աշխատանք ունեցող/զբաղված անձինք 37

5. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ 38

6. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 40

7. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 42

8. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 45

8.1. Չափորոշիչները 45

8.2. Կադրերի համալրումը 46

8.3. Տվյալների և տեղեկատվության որակը 49

8.4. Մշտադիտարկումը, գնահատումը և հետադարձ կապը 50

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 52

ՀԱՎԵԼՎԱԾ 63

ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 63

ՀԱՎԵԼՎԱԾ 66

ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ (ԿԱՐԻԵՐԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ66

ՀԱՎԵԼՎԱԾ 70

ՀԱՎԵԼՎԱԾ 75

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ 75

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ 79

1. ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

ԵԿՀ ցանկանում է շնորհակալություն հայտնել ազգային փորձագետ տիկին Հայկուհի Գևորգյանին՝ խորհրդատվության և վավերացման գործընթացը ղեկավարելու և այս զեկույցը կազմելու արժեքավոր հանձնառության համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար պարոն Ռուբեն Սարգսյանին և ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարար տիկին Ժաննա Անդրեասյանին՝ ԵԿՀ այս ստուգատեսի հաջողությունը երաշխավորելու համար: ԵԿՀ երախտապարտ է նաև ՀՀ այլ նախարարությունների ներկայացուցիչներին, ովքեր իրենց ներքին կանոնակարգի համաձայն տրամադրել են անհրաժեշտ տեղեկատվություն և տվյալներ: Այս զեկույցը հնարավոր չէր լինի առանց նրանց ներդրման:

Այնուհետև, ԵԿՀ ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի բոլոր հաստատություններին և անհատներին, ովքեր կիսվել են թեմայի վերաբերյալ տեղեկություններով և կարծիքներով ազգային վերանայման գործողության ընթացքում և մասնակցել են ԵԿՀ խորհրդակցության և վավերացման աշխատաժողովին: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում սոցիալական գործընկերների ներկայացուցիչներին, երիտասարդական կազմակերպություններին, կարիերայի խորհրդատուներին, խորհրդատվական աշխատաժողովում ներգրավված հետազոտողներին և դոնոր կազմակերպություններին, մասնավորապես Հայաստանում ԵՄ պատվիրակությանը և EU4Youth ծրագրի ներկայացուցիչներին, ԱՄԿ-ին, GIZ-ին, ՄԱԶԾ-ին և Հայաստանում Բրիտանական խորհրդին: Խորհրդատվության և վավերացման գործընթացում ներգրավված կազմակերպություններին՝ թվարկված ոչ այբբենական կարգով. հանրակրթական հաստատությունների, ՄԿՈՒ և բարձրագույն ուսումնական հաստատությունների կարիերայի ուղղորդման խորհրդատուներին, Կարիերայի ուղղորդման և կարողությունների զարգացման կենտրոնին, Կրթական հետազոտությունների և խորհրդատվության կենտրոնին, «Grow Edutainment» հասարակական կազմակերպությանը, Հայաստանի առևտրի և արդյունաբերության պալատին, էկոնոմիկայի նախարարությանը, ոչ ֆորմալ կրթության Երևանի քաղաքապետարանի ստեղծագործական կենտրոններին, «Նորք սոցիալական ծառայությունների տեխնոլոգիաների և իրազեկման կենտրոն» հիմնադրամին, Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն հիմնադրամին, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությանը, Կայուն զարգացման նպատակների նորարարական Լաբ հասարակական կազմակերպությանը, ՀՀ վիճակագրական կոմիտեին, Ռազմավարական զարգացման գործակալությանը, Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միությանը: Զեկույցը համալրվել է նաև է ԱՄԿ-ի ղեկավարությամբ սոցիալական գործընկերների (Արհմիության և Հայաստանի գործատուների հանրապետական միության) փորձագետների կողմից մշակված վերանայման զեկույցից քաղած տեղեկություններով:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում նաև արտաքին գրախոս Ռայմո Վուորինենին՝ Յիվեսկիլայի համալսարանի Կրթական հետազոտությունների ֆիննական ինստիտուտի (FIER) ծրագրի ղեկավարին և Կարիերայի զարգացման և հանրային քաղաքականության միջազգային կենտրոնի (ICCDPP) խորհրդի նախագահին, և ԵԿՀ ներքին գործընկերներ Քրիստիանա Բուրցիոյին, Քրիստիանա Մերուտային, Ֆրանկա Կրեստանիին, Իվոնա Գանկոյին և Ուտի Կարկայնենին:

Զեկույցը համակարգել, վերահսկել և վերջնական տեսքի է բերել Ֆլորիան Կադլեցը՝ ԵԿՀ մարդկային կապիտալի զարգացման փորձագետ:

Հապավումների ցանկը

ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԵԿՀ	Եվրոպական կրթական հիմնադրամ
ԶԱԶՎ	Զբաղվածության և աշխատուժի զարգացման վարչություն
ԶՊԳ	Զբաղվածության պետական գործակալություն
ԷՆ	Էկոնոմիկայի նախարարություն
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՄԿԿԶ	Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն
ՀԱԿ	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
ՀԳՀՄ	Հայաստանի գործատուների հանրապետական միություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
ՄՍԾ	Միասնական սոցիալական ծառայություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՎԿ	Վիճակագրական կոմիտե
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՏՀՏ	Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներ
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

1. ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿԸ

Նախապատմությունը

Կրթության, ուսուցման և աշխատաշուկայի համակարգերն ավելի ու ավելի մեծ մարտահրավերների առաջ են կանգնում գլոբալ զարգացումների արդյունքում, ինչպիսիք են թվային փոխակերպումը, գլոբալացումը, ժողովրդագրական փոփոխությունները, կլիմայի փոփոխությունը և այնպիսի գլոբալ արհավիրքները, ինչպես COVID-19 համաճարակը: Այս ամենը մեծ ազդեցություն է թողնում անհատների և հասարակության կյանքի վրա: Տեխնոլոգիաների, հատկապես տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացումը խթանել է տնտեսական գլոբալացումը և նոր հնարավորություններ բացել մարդկանց համար, բայց նաև նոր ռիսկեր:

Անորոշ հեռանկարներով այս բազմաթիվ զարգացումների մեջ որոշ խնդիրներ անխուսափելի են: Առաջին հերթին, արագ զարգացող աշխարհը և փոփոխվող աշխատաշուկան անհատներից պահանջում են դառնալ իրապես ցկյանս սովորողներ, ձեռք բերել նոր կարողություններ՝ միջավայրի փոփոխություններին հարմարվելու, դժվարությունները հաղթահարելու և նոր առաջացող կարողություններ յուրացնելու ու զարգացնելու համար: Եվ, երկրորդը, առկա է փոփոխվող աշխատաշուկաների և ապագա հեռանկարների վերաբերյալ վավեր տեղեկատվության աճող պահանջարկ: Սա զուգորդվում է մարդկանց աջակցելու աճող անհրաժեշտության հետ, որպեսզի նրանք կարողանան կառավարել իրենց ավելի հաճախակի դարձող և բարդ անցումները կրթության ու աշխատանքի միջև: Այս համատեքստում կարիերայի զարգացման աջակցության ավելի մեծ կարիք կա, քան երբևէ: Միևնույն ժամանակ, կարիերայի զարգացման աջակցությունը, որը ողջ կյանքի ընթացքում կարիերայի ուղղորդումն է, և, մասնավորապես, կարիերայի կրթությունը և աշխատողների կարիերայի զարգացմանն աջակցությունը, ինքնին բախվում է նոր հանգամանքներին հարմարվելու մարտահրավերներին:

Այս համատեքստում ԵԿՀ վերանայում է Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Ուկրաինայում կարիերայի զարգացման աջակցության ազգային համակարգերի վիճակը և հանգամանքները: Վերանայումների նպատակն է նկարագրել կարիերայի զարգացման աջակցության համակարգերի առկա կարողությունները և զարգացման ներուժը, ոչ միայն ծառայությունները կամ քաղաքականությունները, իրազեկել քաղաքականության և պրակտիկայի կատարելագործման համակարգային մոտեցումով, աջակցել երկրի առաջնահերթությունների ընտրությանը համակարգի հետագա զարգացման և ապագա պլանավորման գործում և տեղեկացնել ԵՄ և ԵԿՀ ընթացիկ և ապագա գործունեության մասին, ինչպիսին է EU4Youth ծրագիրը: Վերանայումների հայեցակարգային մոտեցման մասին լրացուցիչ տեղեկությունների

համար կարող եք ծանոթանալ ԵԿՀ-ԱՄԿ «Կարիերայի զարգացման ազգային համակարգերի մշակում» հրապարակման հետ:

Վերանայման գործընթացը ղեկավարվել է տեղական փորձագետների կողմից ԵԿՀ համակարգմամբ և ներառել է (ա) աշխատանքային հետազոտություն և անհատական խորհրդատվական հարցազրույցներ, (բ) ազգային խորհրդատվական համաժողով, որը ներգրավել է բոլոր համապատասխան շահակիցներին՝ նպատակ ունենալով պարզաբանել աշխատանքային հետազոտության ժամանակ բաց մնացած հարցերը, ավելացնել մանրամասներ և տրիանգուլացնել աշխատանքային հետազոտության արդյունքները՝ լսելով կրթության, աշխատանքի և երիտասարդության ոլորտները ներկայացնող նախարարությունների, սոցիալական գործընկերների, երիտասարդական կազմակերպությունների, կարիերայի ուղղորդման խորհրդատուների, գործատու կազմակերպությունների, ոլորտի ներկայացուցիչների, հետազոտողների տարբեր տեսակետները, (գ) զեկույցի վերջնական ձևակերպման վերանայումը, թարգմանությունը և տարածումը, (դ) արդյունքների քննարկումը ազգային իշխանությունների հետ՝ համակարգի հետագա զարգացման առաջնահերթ ոլորտները բացահայտելու համար, (ե) վավերացման լայնածավալ միջոցառումը՝ վերանայված արդյունքները և բացահայտված առաջնահերթ ոլորտներում առաջընթացը քննարկելու համար և (զ) զեկույցի վերջին խմբագրության հրապարակումը անգլերեն և ազգային լեզուներով:

1.1. Համատեքստը

Հայաստանում մասնագիտական կողմնորոշման գործուն և կայացած համակարգ երբևէ չի եղել: Թերևս միայն խորհրդային տարիներին գործող համակարգը, որն ավելի շատ իմիտացիոն, ձևական բնույթ ուներ, հիմնականում՝ ճանաչողական, խիստ գաղափարականացված էր, ոչ մարդակենտրոն և կապակցված չէր աշխատաշուկայի հետ: Հայաստանի անկախացումից հետո երկրում տեղի ունեցած համակարգային փոփոխությունների շնորհիվ ձևավորված շուկայական հարաբերությունները, կրթության, սոցիալական պաշտպանության, մշակույթի ու հոգևոր ոլորտներում գաղափարախոսական նոր մոտեցումներն ու գործելակերպը էապես փոխեցին նաև մասնագիտական կողմնորոշման խորհրդային համակարգը: Հին համակարգը դադարեց գործելուց, իսկ նորը, որպես այդպիսին, չստեղծվեց մինչև 2012թ.:

Հաշվի առնելով հայկական ընտանիքի բազմադարյա ավանդույթները, ներընտանեկան, միջանձնային հարաբերությունների որակն ու առանձնահատկությունները՝ երեխաների մասնագիտության ընտրության հարցում վճռորոշ է եղել ընտանիքի ավագների, մասնավորապես՝ ծնողների կարծիքը, ովքեր առանձին դեպքերում առաջնորդվել են սեփական նախասիրություններով, առկա նյութական հնարավորություններով, կամ կարևորել են ժամանակին հեղինակություն ունեցող մասնագիտությունները: Որոշակի նշանակություն է ունեցել նաև ծնողների մասնագիտական ավանդույթները շարունակելը: Դեր է ունեցել շրջապատի, ընկերների կարծիքները, նաև՝ պատահականությունն ու դիպվածը: Մասնագիտական

ուղղորդման կամ խորհրդատվության ծառայությունների նկատմամբ առանձնակի վստահություն չի եղել: Միակ խորհրդատուն համարվել է առարկայական մանկավարժը, ով, որպես կանոն, կարևորել է աշակերտի առաջադիմությունը:

Չնայած իրականացված բարեփոխումներին, տերմինաբանությունը շարունակում է խնդիր մնալ Հայաստանում: «Մասնագիտական կողմնորոշում» եզրույթը Հայաստանում օգտագործվել է խորհրդային ժամանակներից ի վեր և ամրագրված է փաստաթղթերում, տարբեր ծրագրերում, գիտական հոդվածներում: Միաժամանակ, «կարիերա» եզրույթն ըստ խորհրդային կարծրատիպի ընկալվում է որպես աշխատանքային առաջխաղացում: Իրականում, «մասնագիտական կողմնորոշում» և «կարիերայի ուղղորդում» եզրույթները համազոր են, ուստի զեկույցի տեքստում հիմք է ընդունվել ԵԿՀ-ի կողմից առաջարկված տերմինաբանությունը:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի մշտական բնակչության թիվը կազմում է 2 963.3 հազար մարդ, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների: Քաղաքային և գյուղական բնակչության մասնաբաժինները կազմել են, համապատասխանաբար՝ 64% և 36%: Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության 47.2%-ը տղամարդիկ են, իսկ 52.8%-ը՝ կանայք: 2021թ. տարեսկզբի դրությամբ բնակչության միջին տարիքը կազմել է 36.9 տարի, իսկ տղամարդկանց և կանանց համար, համապատասխանաբար՝ 34.8 և 38.8 տարի: Բնակչության 98.1%-ը էթնիկ հայեր են: Հայաստանում ապրում են եզդիներ, ռուսներ, ասորիներ, ուկրաինացիներ, քրդեր, հույներ, հրեաներ, վրացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ:

2021թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 63.8%-ը աշխատունակ բնակչությունն է (16-62 տարեկան), 21.5%-ը՝ աշխատունակ տարիքից ցածր (0-15 տարեկան), իսկ 14.7%-ը՝ աշխատունակ տարիքից բարձր (63 և ավելի տարեկան) բնակչությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության[1] (նախկինում՝ ՀՀ զբաղվածության պետական գործակալություն, որը 2021թ վերակազմակերպվել է) տվյալների համաձայն՝ 2021թ.-ի դեկտեմբերի 1-ի դրությամբ տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը կազմել է 89.9 հազար մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.7%-ով: Գյուղաբնակները կազմել են աշխատանք փնտրողների 38.7%-ը կամ 33.1 հազ. մարդ՝ նախորդ տարվա 33,2 հազ. մարդու փոխարեն:

ՄՍԾ-ում գրանցված գործազուրկների թվաքանակը կազմում է աշխատանք փնտրողների 66.7 %-ը, կամ 58.6 հազար մարդ: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 2.6 %-ով: Գործազուրկ կանանց թվաքանակը կազմում է գործազուրկների թվի 64,1 %-ը, կամ 37հազ. մարդ, երիտասարդների թվաքանակը՝ 18.8%-ը կամ 10.8 հազ. մարդ,

[1] https://employment.am/am/408/LinkPage.html

իսկ հաշմանդամություն ունեցող գործազուրկ անձանց թվաքանակը՝ 4.4% կամ 2.5 հազ. մարդ:

Տարածքային կենտրոններում հաշվառված են 24.9 հազ. առաջին անգամ աշխատանք փնտրողներ, որոնցից 16-29 տարեկան երիտասարդները կազմում են 34,6%: Ըստ կրթական կազմի բաշխվածության բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների թիվը կազմում են գործազուրկների թվի 13.1%-ը, միջին մասնագիտական կրթություն ունեցողների թիվը՝ 17.0%-ը, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողների թիվը՝ 4.9%-ը, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 55.5%-ը, հատուկ ընդհանուր, հիմնական ընդհանուր և տարրական կրթություն ունեցողները՝ 9.5%-ը:

Գործազուրկների թվաքանակում շարունակում է մեծ թիվ կազմել բարձրագույն կրթություն ունեցող՝ հումանիտար գիտությունների, կրթության և մանկավարժության, տնտեսագիտության և կառավարման, միջին մասնագիտական կրթություն ունեցող՝ կրթության, առողջապահության, տնտեսագիտության և կառավարման, սպասարկման, նախնական մասնագիտական կրթություն ունեցող՝ արվեստի և դիզայնի, էկոնոմիկայի և ղեկավարման, տրանսպորտային միջոցների, թեթև արդյունաբերության որակավորում ունեցող մասնագետները:

Մասնագիտություն չունեցող անձինք կազմում են ընդհանուրի 65.0% -ը:

ՄՍԾ_ում գրացված, 1-3 տարի գործազուրկի կարգավիճակ ունեցողների թվաքանակը կազմում է ընդհանուր թվաքանակի 27.1%-ը, 3 տարուց ավելի գործազրկության տևողություն ունեցողներինը՝ 47.1%-ը, մինչև 1 տարվա գործազրկության տևողություն ունեցողները՝ 25.8%-ը:

Ըստ տարիքային կազմի, գործազուրկների թվաքանակում 16-29 տարեկանները կազմում են 18.4%, 30-44 տարեկանները՝ 42.0%, 45-54 տարեկանները՝ 20.5%, 55-ից բարձր տարիքի անձինք՝ 19.1%:

Գործազուրկների 95.2%-ը աշխատաշուկայում անմրցունակ անձինք են: Սա փաստում է այն մասին, որ աշխատանքի անցնելու ժամանակ նրանք բախվում են մի շարք խնդիրների, և հմտությունների զարգացման կարիք ունեն:

Ըստ տնտեսության ճյուղերի, աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորման բաշխվածության ամենամեծ տեսակարար կշիռը կազմում է մեծածախ և մանրածախ առևտրի և ավտոմեքենաների ու մոտոցիկլների նորոգման՝ 19.0%, արդյունաբերության՝ 16.4% սպասարկման այլ ծառայությունների՝ 18.5%, կրթության՝ 9.7% և 36.4 %-ը այլ ոլորտներում:

Գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերի թվաքանակում մեծ թիվ են կազմել.

ա) Բարձր որակավորման՝ առողջապահության բնագավառի մասնագետները, դասավանդողներ, մասամբ նաև ճարտարապետները, ճարտարագետները և հարակից մասնագետները,

բ) Միջին որակավորման՝ միջին բժշկական անձնակազմի աշխատողները (օժանդակ անձնակազմ), ֆինանսների և առևտրի, արվեստի, զվարճությունների մասնագետները,

գ) Նախնական որակավորման՝ օպերատորները, գանձապահները և հարակից զբաղմունքների աշխատողները, խանութների վաճառողները և ապրանքների ցուցադրողները, այլ անհատական ծառայություններ մատուցող աշխատողները, սննդի արդյունաբերության, շինարարության և այլ որակավորված բանվորները:

Որակավորում չպահանջող աշխատատեղերը կազմել են ընդհանուրի 24.3%-ը:

1.2. Համակարգի ակնարկը

Վերջին տասը տարվա ընթացքում փոխվել է ինչպես հասարակության մտածելակերպը, այնպես էլ կարիերայի զարգացման համակարգի ուղղությամբ պետական կառավարման մարմինների դիրքորոշումները: Ներկայումս կարիերայի ուղղորդման ծառայությունները պահանջված են հատկապես դպրոցահասակ երեխաների և երիտասարդների շրջանում, ավելացել են համանուն ծառայություններ առաջարկող ընկերություններն ու անհատները, գրանտային տարբեր ծրագրերի շրջանակում ՀԿ-ների կողմից իրականացվում են իրադարձային (ոչ հիմնարար, շարունակական) միջոցառումներ, որոնք ավելի շատ մասնագիտությունների մասին իրազեկման բնույթ ունեն:

Հետխորհրդային Հայաստանում կարիերայի զարգացման աջակցության ազգային համակարգի ձևավորմանն ուղղված բարեփոխումները սկսվել են 2012 թվականին, երբ ՀՀ կառավարության կողմից հաստատվեց «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգը»[2]: Հայեցակարգով առաջին անգամ ամրագրվեց, որ ազատ շուկայական տնտեսության և արագ փոփոխվող աշխատաշուկայի պայմաններում կարիերայի զարգացման աջակցության համակարգը պետք է ապահովի ծառայություններ անձին իր ողջ կյանքի ընթացքում, անկախ տարիքից և սոցիալ-աշխատանքային կարգավիճակից: Սահմանվեց, որ համակարգի նպատակն է. «Անձի հետաքրքրություններին, կարիքներին և առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայում որակավորված և մրցունակ կադրերի պահանջարկին առավելապես համապատասխանող մասնագիտական գործունեության ազատ և գիտակից ընտրության հնարավորության ստեղծումը՝ ողջ կյանքի ընթացքում»: Հիմք ընդունելով Հայեցակարգով առաջարկվող կարիերայի զարգացման աջակցության համակարգի մոդելը՝ մինչ օրս շարունակվում են դրա ներդրման գործընթացները:

Կարիերայի զարգացման համակարգի քաղաքականության մշակման և ներդրման համար պատասխանատու պետական կառավարման մարմիններն են Աշխատանքի և սոցիալական հարցերի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները: Աշխատանքի և

[2] http://www.irtek.am/views/act.aspx?aid=68214

սոցիալական հարցերի նախարարությունն իր համակարգում գործող Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի (2013-2017թթ «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն), ներկայումս՝ ԱՍՀՆ, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի մասնաճյուղի՝ Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի (2018 - մինչ օրս[3]) միջոցով ապահովում է կարիերայի ուղղորդման և կարիերայի կրթության մոդելների, մեթոդաբանության և տեխնոլոգիաների մշակումը, ծառայություններ մատուցող կառույցների մասնագետների կարողությունների զարգացումը և միջոլորտային կապերի հաստատումը: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն ապահովում է կրթության և ուսուցման ոլորտում կարիերայի ուղղորդման ծառայությունների և կարիերայի կրթության գործընթացի ներդրման գործառնական և ինստիտուցիոնալ հիմքերը:

2013 թվականից ՄԿԿՁ կենտրոնը մշակել և փորձարկել է կարիերայի ուղղորդման և կարիերայի կրթության մոդելներ, մեթոդաբանություն հանրակրթությունում, ՄԿՈՒ հաստատություններում, զբաղվածության տարածքային կենտրոններում, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում համակարգի ներդրման համար: Մինչ Հայեցակարգի ընդունումը նշված հաստատություններում կարիերայի ուղղորդման աշխատանքները չեն կրել համակարգային բնույթ, իրականացվել են առանձին մասնագետների նախաձեռնությամբ, հաճախ ծառայությունները սահմանափակվել են տեղեկատվության տրամադրմամբ կամ մասնագիտական ուսումնական հաստատություններ այցելություններով:

Հանրակրթական դպրոցներում կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրման նպատակով ԿԳՄՍ նախարարության ներկայացմամբ ՄԿԿՁ կենտրոնի կողմից 2013-2020թթ վերապատրաստվել է ավելի քան 900 մանկավարժ՝ նախապատվությունը տալով տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալին, դպրոցների սոցիալական մանկավարժներին, հոգեբաններին: Վերապատրաստված մասնագետներին տրամադրվել է մեթոդական աջակցություն: Աշակերտների հետ աշխատանքներն իրականացվել են հիմնականում

---

[3] ՄԿԶԿ կենտրոնը հիմնադրվել է 2006 թվականին (Կառավարության 2006 թ դեկտեմբերի 14-ի No 1915-Ն որոշում) ՀԲ կողմից ֆինանսավորվող «Սոցիալական պաշտպանության վարչարարություն» ծրագրի աջակցությամբ, որպես «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ: 2013 թվականին կենտրոնը վերանվանվել է «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» , որից հետո այն պատասխանատու է եղել մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մեթոդաբանության և քաղաքականության մշակման համար: 2017 թվականի Սեպտեմբերի 22-ի Կառավարության No 1159-Ն որոշմամբ՝ այն վերակազմավորվել է որպես Աշխատանքի և սոցիալական հարցերի ազգային ինստիտուտի Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն: Մինչ 2013 թվականը ՄԿՄԿ-ն ծառայություններ է մատուցել շահառուներին՝ հանրակթության աշակերտներին, ՄԿՈՒ և բուհական ուսումնական հաստատությունների ուսանողներին, շրջանավարտներին և մեծահասակներին:

8-9-րդ դասարաններում (13-14 տարեկանների համար) և ավագ դպրոցում (15-17 տարեկանների համար), սակայն ոչ կանոնակարգված:

Փորձնական ծրագրերի արդյունքների գնահատումից հետո արդեն 2019-2020թթ ԿԳՄՍ նախարարության կողմից մեկնարկել է դպրոցներում կարիերայի կրթության ինստիտուցիոնալ համընդհանուր ներդման գործընթացը: ՄԿԿՁ կենտրոնի կողմից մշակված «Հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ իրականացնող մասնագետների համար ուսումնամեթոդական ձեռնարկը» երաշխավորվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի կողմից տպագրության և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով[4]՝ դպրոցներում կիրառման: 2020 թվականին մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է նաև «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի չափորոշիչն ու ծրագրերը՝ նախատեսված է 8-11-րդ դասարանների համար: 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական բոլոր 80 դպրոցներում ներդրվել են մասնագիտական կողմնորոշման ակումբները, որպես կրթական գործընթացի պարտադիր բաղադրիչ: ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով նախատեսվում է մինչև 2026 թվականը բոլոր 1345 պետական հանրակրթական դպրոցներում ապահովել կարիերայի կրթության բաղադրիչը: Մարզային դպրոցներում կարիերայի կրթության ներդրման ուղղությամբ աշխատանքները համակարգվում են մարզպետարանների կրթության վարչությունների կողմից:

ՄԿՈՒ հաստատություններում ուսանողների կարիերայի ուղղորդման աշխատանքները ևս համակարգային սկսվել են իրականացվել միայն 2013 թվականից հետո: Մինչ այդ ընտրանքային ՄԿՈՒ հաստատություններ տնօրենների նախաձեռնությամբ կազմակերեպել են փոխայցելություններ դպրոցներ, ներկայացրել են ՄԿՈՒ հաստատության մասնագիտություններն ու կրթություն ստանալու պայմանները, սակայն համընդհանուր ներդրումն իրականացվել է 2018-2020թթ., երբ ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել ՄԿՈՒ հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի մեկական հաստիքի համար: Ինստիտուցիոնալ ներդրման նպատակով ՄԿԿՁ կենտրոնի կողմից մշակվել է գործունեության կանոնակարգի, մասնագետի պաշտոնի նկարագրի օրինակելի ձևեր, որոնք հաստատվել են ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների կողմից: Շարունակաբար վերապատրաստվում են այդ մասնագետները՝ ստանալով ուսանողների անհատական և խմբային խորհրդատվության անցկացման մեթոդաբանություն, գործիքակազմ: Ներկայումս հանրապետության բոլոր 96 ՄԿՈՒ հաստատություններում առկա է համապատասխան հաստիք: Տարեկան երկու անգամ ԿԳՄՍ նախարարության և ՄԿԿՁ կենտրոնի հետ համատեղ իրականացվում է մոնիթորինգ՝ պարզելու ուսանողների ներգրավվածությունը, շրջանավարտների զբաղվածության մակարդակը:

[4] ԿԳՄՍ նախարարի 2021թ. սեպտեմբերի 24-ի թիվ 1602-Ա/2 հրաման

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց կարիերայի ուղղորդման աշխատանքներն իրականացվել են զբաղվածության տարածքային կենտրոններում: ՄԿԿԶ կենտրոնի կողմից մշակված մոդելով և մեթոդաբանությամբ զբաղվածության տարածքային կենտրոնի մասնագետները հիմնականում իրականացրել են կարիերայի իրազեկում, խմբային դասընթացներ՝ ուղղված զբաղունակության, աշխատանքային կենսագրականի կազմմանն ու գործատուին դիմելու հմտությունների զարգացմանը: 2021թ. ապրիլից Զբաղվածության պետական գործակալության վերակազմակերպմամբ և ՀՀ ԱՍՀ նախարարության համակարգում Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ)[5] ստեղծմամբ պայմանավորված ներկայումս վերանայվում է կարիերայի ուղղորդման ծառայությունների իրականացման մոդելն ու մեթոդաբանությունը:

Բուհերում կարիերայի կենտրոնները ստեղծվել են դեռևս 90-ական թվականներին: Սակայն յուրաքանչյուր բուհի կարիերայի կենտրոն ունի կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթները, որոնք հաճախ կարող են իրարից տարբեր լինել: Երիտասարդների կարիերայի ուղղորդման աշխատանքներ են նախատեսված ԿԳՄՍ նախարարության կողմից տարվող երիտասարդության քաղաքականության շրջանակում: Համանուն ծառայությունները կարող են պատվիրակվել տարբեր հասարակական կազմակերպությունների: Մեծահասակների կարիերայի ուղղորդման աշխատանքներ իրականացվում են հասարակական կազմակերպությունների կողմից, նաև Սիսիան քաղաքում՝ Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնում, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հետ համագործակցությամբ:

Այսպիսով, պետական կառավարման համակարգը վերջին տարիներին հետևողական աշխատանքներ է տանում կարիերայի զարգացման համակարգի ներդրման ուղղությամբ՝ նպատակ ունենալով ապահովել ողջ կյանքի ընթացքում անձի մասնագիտության գիտակցված ընտրության և կարիերայի արդյունավետ պլանավորման անվճար և հասանելի ծառայություններ: Գործընթացում ակտիվ ներգրավված են հատկապես ԱՍՀ և ԿԳՄՍ նախարարությունները: Գործընթացի համընդհանուր ներդրման նպատակով ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել, մասնավորապես՝ մեթոդաբանության ապահովման և մասնագետների կարողությունների շարունակական զարգացման համար ԱՍՀ նախարարությանը, իսկ հանրակրթական դպրոցներում և ՄԿՈՒ հաստատություններում համապատասխան աշխատանքների իրականացման և հաստիքների հատկացման համար՝ ԿԳՄՍ

[5] ՄՍԾ-ի հիմնական նպատակն է սոցիալական պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմների, մասնավորապես սոցիալական կարիքների գնահատման մոտեցման վրա հիմնված ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումն է: Սոցիալական պաշտպանության միասնական ծառայությունը միավորում է սոցիալական ծառայությունը, ընտանեկան նպաստների համակարգը, հաշմանդամության և զբաղվածության և կենսաթոշակային համակարգերը: Հիմնական նպատակը ոչ միայն մեկ պատուհանի սկզբունքի կիրառումն է, այլև ընտանիքի սոցիալական կարիքների համապարփակ գնահատումը:

նախարարությանը: Այս գործընթացում իրենց աջակցությունն ունեն դոնոր կազմակերպությունները կամ դրամաշնորհներ ստացած տեղական ընկերությունները, որոնք օժանդակում են լոգիստիկայի, վիզուալ գործիքակազմերի մշակման, տպագրության նյութատեխնիկական ապահովվածության և այլ հարցերում:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Անկախ տարիքից անձի կարիերայի ուղղորդման, կարիերայի կրթության և զբաղված անձանց կարիերայի զարգացման աջակցության ծառայությունների կարևորությունն ամրագրված են Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներում, իրավական ակտերում: Մասնավորապես, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի[6] Հոդված 5-ով սահմանված է, որ. «Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը»:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով[7] ամրագրված է, որ անձի սոցիալական աջակցության ծառայություններն ուղղված են նաև՝ «մասնագիտական հմտություններն օգտագործելու կամ նոր մասնագիտական հմտություններ ձեռք բերելու կարողությունների զարգացմանը, նախկին կամ նոր մասնագիտությամբ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար մատչելի պայմանների ստեղծման նպատակով անձի մասնագիտական կողմնորոշմանը, մասնագիտական կրթությանը, մասնագիտական ուսուցմանը (որակավորման բարձրացմանը, վերամասնագիտացմանը, նախնական մասնագիտական պատրաստմանը, արհեստագործական ուսուցմանը), մասնագիտական հարմարվողականությանը, հարմար աշխատանքի տեղավորմանը և ինքնազբաղվածության ապահովմանը»:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով[8] էլ ամրագրված է, որ զբաղվածության պետական ծառայությունն իրեն դիմած 16 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար իրականացնում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ...»:

Կարիերայի ուղղորդման ծառայությունների հասանելիության ապահովումն ամրագրված է «Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով»[9], որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 2004 թվականին: Խարտիայի 9-րդ հոդվածով պարտավորությունները ներառում է՝ «կարիերայի ուղղորդման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908
[7] https://www.arlis.am/documentview.aspx?docid=94972
[8] https://www.arlis.am/documentview.aspx?docid=51820
[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230

Կողմերը պարտավորվում են ապահովել կամ, անհրաժեշտության դեպքում, խթանել որևէ ծառայություն, որը կօժանդակի բոլոր անձանց, ներառյալ հաշմանդամները, մասնագիտական ընտրության և առաջընթացի հետ կապված խնդիրների լուծման հարցում. ընդ որում՝ հաշվի առնելով անհատի առանձնահատկությունները և մասնագիտական հնարավորության հետ դրանց կապը: Այս օժանդակությունը երիտասարդներին, ներառյալ դպրոցականները, և մեծահասակներին պետք է ցուցաբերվի անվճար»: Խարտիայի 9-րդ հոդվածը դեռ չի հաստատվել կառավարության կողմից:

Ինչպես արդեն նշվեց, կարիերայի զարգացման համակարգի բարեփոխումների մեկնարկը տրվեց 2012թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման» հայեցակարգով

և դրա իրականացման 2013-2015թթ միջոցառումների ծրագրով: Նույն թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունվեցին նաև ՀՀ զբաղվածության 2013-2018թթ ռազմավարությունը[10] և ՄԿՈՒ ոլորտի զարգացման ազգային ծրագիրը[11], որոնց առաջնահերթ խնդիրների շարքում առանձնացված է կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրումը:

Վերոնշյալ բոլոր օրենքներում և իրավական ակտերում կարիերայի ուղղորդման ծառայությունների և կարիերայի զարգացման համակարգի ներդրման խնդիրներն առանձնացված են կոնկրետ ոլորտի շրջանակում: Միջոլորտային միակ ռազմավարությունը ՀՀ փոխվարչապետի աշխատակազմի նախաձեռնությամբ մշակված և 2019 թվականին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Աշխատիր, Հայաստան» ռազմավարությունն է և դրա իրականացման մինչև 2023թ գործողությունների շրջանակը[12]: Փաստաթուղթը մշակվել է կրթություն-աշխատաշուկա կապին առնչվող բոլոր պետական գերատեսչությունների, մասնավոր հատվածի, հասարակական կազմակերպությունների ու շահագրգիռ այլ կողմերի մասնակցությամբ: Ռազմավարական այս փաստաթղթով նախանշված են այն առաջնահերությունները, որոնք ուղղված են տնտեսության կառուցվածքային փոփոխություններին համընթաց նոր որակի, մրցունակ աշխատուժի ձևավորմանը, միջոլորտային ակտիվ համագործակցությանը, հավաստի և համապարփակ տեղեկատվության հավաքագրմանն ու համադրմանը մեկ միասնական շտեմարանում: Գործընթացին խոչընդոտել է Քովիդ-19-ը համավարակը և Արցախյան պատերազմը: Ռազմավարության ժամկետները ներկայումս վերանայվում են:

«Աշխատիր, Հայաստան» ռազմավարության շրջանակներում մշակվել է Edu2Work հարթակը[13], որի նպատակն է ուսումնասիրել Հայաստանում ներկայիս աշխատաշուկայի միտումները: Հարթակը աշխատանք փնտրելու համար նախատեսված կայքերից հավաքագրում և վերլուծում է աշխատանքի հայտարարությունները: Կայքում ներկայացված տեղեկատվությունը թարմացվում է ամեն օր և կայքի զարգացման նոր հայեցակարգը մշակման փուլում է: Այս պահին աշխատանքներ

[10] http://www.irtek.am/views/act.aspx?aid=68183
[11] http://www.irtek.am/views/act.aspx?aid=66602
[12] http://www.irtek.am/views/act.aspx?aid=152312
[13] https://edu2work.am/

են իրականացվում ԱՍՀՆ կողմից մշակվող e-borsa-ի մշակման ուղղությամբ, որը պետք է իր մեջ նաև Edu2Work հարթակը որպես գործիք: Այս մասով, պետք է նշել, որ հարթակը ունի Հայաստանի աշխատաշուկայի տեղեկատվության առանձին բաժին:

Ողջ կյանքի ընթացքում անձի կարիերայի զարգացման համընդհանուր և միասնական համակարգի ներդրումը Հայաստանում երաշխավորված է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով[14]: Ծրագրով հաստատված մի շարք միջոցառումներ ուղղված են մինչև 2026թ հանրապետության բոլոր դպրոցներում 8-11-րդ դասարաններում (13-16 տարեկան) մասնագիտական կողմնորոշման ակումբների ինստիտուցիոնալացմանը՝ հիմք ընդունելով արդեն գործող ակումբների մոդելը: Ակումբները կրթական աջակցության մասով կհամակարգվեն փոխտնօրենների, սոցիալական մանկավարժների և/կամ հոգեբանների կողմից:

Ծրագիրը ապահովում է նաև զբաղվածության ծառայություններ մատուցող նորաստեղծ Միասնական սոցիալական ծառայության[15] տարածքային կենտրոններում անմրցունակ անձանց կարիերայի ուղղորդման ծառայությունների հասանելիությանը, երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում կարիերայի ուղղորդման աշխատանքների ներդրմանը և մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի ստորաբաժանումների արդյունավետության բարձրացմանն ու կարիերայի կրթության բաղադրիչի ներդրմանը: ՄԿՈՒ և բուհական ուսումնական հաստատություններում ներդնել «Կարիերայի կառավարում» մոդուլը:

ՀՀ կառավարության կողմից 2021 թվականին հաստատված «Հանրակրթական պետական չափորոշիչով[16]» սահմանվել են մասնագիտական ինքնորոշման կարողունակությունների վերջնարդյունքները տարրական, միջին և ավագ դպրոցներում, ինչը պետք է ապահովվի կարիերայի կրթության միջոցով: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. հրամանով հաստատվել է «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի չափորոշիչն ու ծրագրերը՝ նախատեսված է 8-11-րդ դասարանների համար: «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի համար նախատեսված է 34 ժամ մեկ ուսումնական տարում 8-րդ և 10-րդ դասարանի աշակերտների համար, իսկ 11-րդ դասարանի համար նախատեսվում է 15 ժամ: Դասընթացը բաղկացած է 26 մոդուլներից, որն իր մեջ ներառում է 10 մոդուլ 8-րդ և 9-րդ դասարանի համար, 6 մոդուլ 10-րդ դասարանի համար և կարիերայի կարիերայի պլանավորման անհատական հետազոտական նախագիծ՝ նախատեսված 11-րդ դասարանի համար: (տե՛ս թեմատիկ պլանը).

Չափորոշիչների փորձնական ներդրումն իրականացվել է ԿԳՄՄՆ կողմից Տավուշի մարզի հանրակրթական բոլոր 80 դպրոցներում, որտեղ 2021-22 ուսումնական տարում ստեղծվել են «Մասնագիտական կողմնորոշման ակումբներ»: Մասնագիտական կողմնորոշման ակումբները հիմնված են Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի վրա, որը իրականացնում են ՄԿԿՁ կենտրոնի կողմից վերապատրաստված մանկավարժները:

---

[14] https://www.gov.am/am/Five-Year-Action-Program/
[15] https://www.arlis.am/documentview.aspx?docid=150385
[16] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

ՄԿՈՒ համակարգում կարիերայի ուղղորդման ծառայությունների միասնական ներդրման նպատակով դեռ 2013 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորվել է ՀՀ ԱՍՀՆ կողմից մշակված կարիերայի ստորաբաժանման կանոնակարգի օրինակելի ձևաչափը և կարիերայի ուղղորդման մասնագետի աշխատանքի նկարագիրը: Թեև կանոնակարգով նշվում է ստորաբաժանման մասին, սակայն ներկայումս յուրաքանչյուր ՄԿՈՒ հաստատություն ունի դեռևս մեկական կարիերայի խորհրդատու, ծառայությունների իրականացման համար ունի առանձնացված տարածք, հայտարարությունների վահանակ քոլեջի տեսանելի վայրում փակցված: Կարիերայի խորհրդատուն ծառայություններ է մատուցում ինչպես դիմորդներին ու նրանց ծնողներին, այնպես էլ ուսանողներին, կապեր հաստատում գործատուների և այլ գործընկերների հետ:

Ներկայումս հանրապետության բոլոր 96 քոլեջներում և ուսումնարաններում առաջնորդվում են միևնույն կանոնակարգով՝ հաստատված հաստատության կառավարման խորհրդի կողմից:

Հայաստանում կարիերայի զարգացման համակարգի խնդիրներից է կարիերայի խորհրդատուների ինստիտուտի բացակայությունը: 2013 թվականից կարիերայի ուղղորդման ծառայություններ մատուցող մասնագետների վերապատրաստումն ու կարողությունների շարունակական զարգացումը, վերապատրաստված մասնագետների սուպերվիզիան աշխատավայրում իրականացվում է ՀՀ ԱՍՀ նախարարության համակարգում գործող Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնը: Վերապատրաստման ծրագրերը մշակված են ըստ կարիերայի ուղղորդման ծառայություններ իրականացնող հաստատությունների առանձնահատկությունների: Մասնագետների ընտրության համար նախապատվություն է տրվում հոգեբանի, սոցիալական մանկավարժի, մարդկային ռեսուրսների մասնագետի և հարակից այլ մասնագիտություններով բազային որակավորմամբ կադրերին:

Ամփոփելով կարիերայի զարգացման աջակցման համակարգի ներդրման քաղաքականության շրջանակը՝ պետք է նշել, որ ԱՍՀՆ-ն նախաձեռնել է աշխատանքի և սոցիալական պաշտպանության ռազմավարության մշակում, որի առաջնահերթություններից է լինելու աշխատանքի խրախուսումն ու մրցունակ աշխատուժի ստեղծումը: Ազգային մակարդակում փոխշահավետ գործակցություն է հաստատվել ԱՍՀ և ԿԳՄՍ նախարարությունների և դրանց ենթակայությամբ գործող կառույցների միջև: Հիմք ընդունելով գործառույթների հստակ բաշխվածությունը՝ Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով ֆինանսական միջոցները նախատեսված են ըստ այդմ: Մասնավորապես, ԱՍՀ նախարարությանը հատկացված միջոցները նախատեսված են մոդելների և մեթոդաբանության մշակման և մասնագետների շարունակական վերապատրաստման համար, իսկ ԿԳՄՍ նախարարությանը՝ կարիերայի ուղղորդման հաստիքների վճարման համար:

3. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Համակարգման, համագործակցության և արդյունավետ կառավարման խթանումը

Հայաստանում կարիերայի զարգացման համակարգի նեդրման համար պատասխանատու հիմնական պետական գերատեսչությունները ԱՍՀ և ԿԳՄՍ նախարարություններն են: Ներդրմանն աջակցող հիմնական դերակատարը պետական համակարգում Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնն (այսուհետ՝ ՄԿԿԶ կենտրոն) է, որը գործում է ԱՍՀ նախարարության համակարգում: ՄԿԿԶ կենտրոնի կանոնադրական հիմնական նպատակն ու խնդիրներն են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մեթոդաբանության ապահովումը, կադրերի վերապատրաստումը և վերապատրաստված մասնագետների սուպերվիզիան: Այն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) մշակում է անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից անձի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մեթոդաբանություն,

2) մշակում է մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի խորհրդատվության մեթոդաբանությունը,

3) նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում ներդնելու նպատակով մշակում է անձի ինքնագնահատման, կարիերայի պլանավորման, ձեռներեցությամբ սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատաշուկա մուտք գործելու համար հիմնական կարողությունների զարգացմանն ուղղված ուսումնական ծրագրեր,

4) մշակում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգում կրթության համակարգից դուրս մասնագիտության, աշխատանքի և զբաղմունքի հարցերում հստակ կողմնորոշում չունեցող, վերամասնագիտացման ու վերաորակավորման, աշխատաշուկայի արագ փոփոխվող պայմաններին հարմարվելու կարիք ունեցող անձանց մասնագիտական կողմնորոշման և կարիերայի մեթոդաբանությունը,

5) աջակցում է մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների գործունեությանը: Օրինակ՝ ծառայությունների մատուցման գործում ցուցաբերելով մեթոդական աջակցություն, վերապատրաստելով կարիերայի խորհրդատուներին,

6) կազմում է մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման ուսումնական պլաններ և ծրագրեր,

7) իրականացնում է կարիերայի աջակցման համակարգում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի խորհրդատվություն տրամադրող կադրերի վերապատրաստման դասընթացներ,

8) իրականացնում է մասնագիտական կողմնորոշման և կարիերայի մասնագետների կողմից անցկացվող աշխատանքների մշտադիտարկում, մասնագիտական ու մեթոդական աջակցություն և խորհրդատվություն (սուպերվիզիա),

9) աջակցում է մեծահասակների կարիերայի կողմնորոշման հիմնախնդիրների լուծմանը՝ մեթոդաբանություն տրամադրելով, կարիերայի և աշխատանքի տոնավաճառների կազմակերպման աջակցելով, կարերայի կառավարման հմտություններ՝ աջակցելով համալսարաններին, ՀԿ-ներին, մեծահասկաների կրթության կենտրոններին մեթոդաբանությամբ, կազմակերպելով կարիերայի և աշխատանքի տոնավաճառներ, անցկացնելով կարիերայի կառավարման հմտությունների զարգացման թեմաներով դասընթացներ,

10) անցկացնում է ուսումնաարտադրական պրակտիկա, դասընթացներ համալսարանների սոցիալական մանկավարժություն, հոգեբանություն, սոցիալական աշխատանք կամ մարդկային ռեսուրսներ մասնագիտացում ունեցող ուսանողների համար, որոնք մասնագիտություն ձեռք բերելուց հետո աշխատելու են որպես կարիերայի խորհրդատուներ,

11) իրականացնում է հետազոտություններ և ուսումնասիրություններ աշխատաշուկայի, զբաղմունքների, մասնագիտությունների և դրանց որակավորումների համապատասխանության մասին,

12) կազմակերպում է մարզային, հանրապետական, միջազգային սեմինարներ և գիտաժողովներ, ցուցահանդեսներ, տոնավաճառներ,

13) պատրաստում է ուսումնամեթոդական ձեռնարկներ,

14) իրականացնում է հանրային իրազեկման աշխատանքներ,

15) համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների, սոցիալական գործընկերների, հասարակական և այլ կազմակերպությունների, նաև զանգվածային լրատվամիջոցների հետ,

16) առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի քաղաքականության, ռազմավարության, իրականացման ձևերի ու մեթոդների բարելավման ուղղությամբ:

Նմանատիպ կենտրոնացված համակարգման պայմաններում կարիերայի ուղղորդման ծառայություններ իրականացնող բոլոր կառույցները ժամանակի ընթացքում սկսել են մտածել

միևնույն կերպ: Ակնհայտ է մտածողության փոփոխությունը, քանի որ որպես հետխորհրդային պետություն մասնագիտության ընտրության հետ կապված հասարակությունն ու համակարգերը այլ մտածողության կրող են եղել և մասնագիտական կողմնորոշման խնդիրը դիտարկել են միայն հանրակրթության մակարդակում՝ կետրոնանալով միջառարկայական կապերի միջոցով մասնագիտության կողմնորոշմանը: Հետխորհրդային մտածողության պատճառով է նաև, որ մինչ օրս «մասնագիտական կողմնորոշում», «կարիերայի ուղղորդում», «կարիերայի կրթություն» և հարակից այլ եզրույթների ընկալման խնդիր կա ոչ միայն հասարակության, այլև գիտական հանրույթում, պետական կառավարման համակարգում, որի հետևանքով գիտական հոդվածներում, հետազոտություններում, քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերում շարունակվում է կիրառվել և ընդհանրական ընկալվել «մասնագիտական կողմնորոշում» եզրույթը:

ՄԿԿՁ կենտրոնի կողմից մշակված միասնական մեթոդաբանությունը ներկայումս երաշխավորվում է կիրառման ինչպես սոցիալական ծառայություններում, այնպես էլ ֆորմալ կրթության բոլոր մակարդակներում: Առաջարկվող և ներկայումս ներդրվող մոդելի առանձնահատկությունն այն է, որ կարևորվում է կարիերայի ուղղորդման աշխատանքների շարունակականության ապահովումը, այդ ծառայությունների համար պատասխանատու կառույցների՝ դպրոց, քոլեջ, ուսումնարան, բուհ, սոցիալական ծառայություններ (որի մի մասը ՁՊԳ-ն է), համատեղ աշխատանքը, ինչպես նաև խրախուսվում է համայնքային կազմակերպությունների և գործատուների ակտիվ ներգրավվածության ապահովումը, որոնք կարող են նրանց աշխատանքի որակի գնահատման չափանիշներից մեկը լինել: Այս նպատակով հաճախ են կազմակերպվում միջոլորտային մասնագետների աշխատաժողովներ, նաև վերապատրաստման առանձին ծրագրեր:

Իր կանոնադրական գործառույթների շրջանակում, հիմնվելով բացահայտված խնդիրների և հաջողված օրինակների վրա, ՄԿԿՁ կենտրոնը առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի քաղաքականության, ռազմավարության, իրականացման ձևերի ու մեթոդների բարելավման ուղղությամբ:

ՄԿԿՁ կենտրոնը հանդիսանում է նաև այս ոլորտում հասարակական սեկտորին համախմբող կառույց՝ հնարավորինս խուսափելով տարբեր ծրագրերի կրկնություններից, ներգրավելով տարբեր մոդելների փորձարկմանն ու արդյունավետության գնահատմանը: Նման համագործակցությունների արդյունքում փորձարկվել են դպրոցներում և ՄԿՈՒ հաստատություններում մասնագիտական կողմնորոշման մի շարք մոդելներ (Վորլդ Վիժըն Հայաստան՝ հանրապետության մարզերում, Սեյվ դը չիլդրեն՝ ԵՄ «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար ծրագրի շրջանակներում թվով 10 դպրոցում», Հայաստանի մանուկներ հիմնադրամ՝ Արմավիրի մարզում, Ռազմավարական զարգացման գործակալություն՝ Սյունիքի մարզում, Հայկական կարմիր խաչի ընկերություն՝ Տավուշի և Գեղարքունիքի մարզերում, ԳՄՀԸ (GIZ), ԳՈՒՄ ՀԿ՝ Սյունիքի մարզում և այլ):

Ազգային մակարդակում միջհամակարգային համագործակցության հաջողված օրինակ էր 2013-2017թթ ՄԿԿՁ կենտրոնի աշխատանքների աջակցման համար ստեղծված մեթոդական խորհրդի գործունեությունը: ԱՍՀ նախարարի հրամանով ստեղծված խորհրդի կազմում ընդգրկված էին ԿԳՄՍ, ԱՍՀՆ և էկոնոմիկայի նախարարությունների, գիտական մի շարք հաստատությունների, գործատուների հանրապետական միության ներկայացուցիչներ: Խորհրդի հիմնական գործառույթներն էին՝

- եզրակացություն տալ մշակված մեթոդաբանությանը, ծրագրերին,
- երաշխավորել կատարված հետազոտական և ուսումնամեթոդական

աշխատանքների հրապարակումը և դրանց գործնական կիրառելիությունը,

- աջակցել գիտաժողովների, սեմինարների կազմակերպմանը,
- ապահովել պետական կառույցների և հետազոտական կառույցների միջև ակտիվ մասնակցությունը, երկխոսությունը, ճանաչելիության բարձրացումը

Սակայն ՀՀ կառավարության կողմից պետական համակարգի օպտիմալացման շրջանակում 2017թ կրճատվեց ՄԿԿՁ կենտրոնի անձնակազմն ու բյուջեն, փոխվեց իրավական կարգավիճակը՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունից անցնելով «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղի, լուծարվեց խորհուրդը:

Արձանագրված ձեռքբերումներին զուգահեռ պետք է նաև առանձնացնել կարիերայի զարգացման համակարգի կայացմանը և արդյունավետ գործարկմանը խոչընդոտող խնդիրները: Ազգային մակարդակում ակտիվ չէ սոցիալական գործընկերների, ոլորտային գործատուների ներգրավվածությունը: ՄԿՈՒ ոլորտում բացը փորձ է արվում լրացնել ՄԿՈՒ զարգացման ազգային խորհրդի միջոցով, որը ստեղծվել է 2008 թվականին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների նպատակով, և ձևավորված է սոցիալական գործընկերության սկզբունքով: Աշխատանքի և զբաղվածության ոլորտում կարող է դիտարկվել հանրապետական եռակողմ հանձնաժողովը, որը ձևավորվել է Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի պահանջով, իսկ վերջինիս պարտավորվում է, ի թիվս այլ ոլոտների՝ աջակցել նաև մասնագիտական կողմնորոշման արդյունավետ համակարգի զարգացմանը՝ հիմնվելով առկա վերլուծությունների և գործատուների պահանջարկի վրա:

Բավարար չեն նաև մարդկային և նյութական ռեսուրսները: ՄԿԿՁ կենտրոնի վերակազմակերպումից հետո ներկայումս անձնակազմն ունի ընդամեն 12 հաստիքային միավոր (մասնագիտական անձնակազմ՝ 10 մասնագետ), վերջին երեք տարում նվազեցվել են նաև ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով «Մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստում» միջոցառման համար միջոցները: ՄԿՈՒ հաստատությունները, դպրոցները կարիերայի կրթության իրականացման համար բավարար ապահովված չեն համապատասխան ռեսուրսներով՝ առանձնացված սենյակ, նյութատեխնիկական հնարավորություններ, այլ ռեսուրսներ: Նոր ձևավորվող միասնական

սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում ստեղծված են ռեսուրս սենյակներ, որոնք կարող են ծառայել կարիերայի ուղղորդման խմբային աշխատանքների համար, սակայն անհատական խորհրդատվության սենյակների հնարավորությունը բացակայում է:

Հաջորդ կարևոր խնդիրը ներգրավված մասնագետների մասնագիտական որակավորումն է: ՄԿԿՀ կենտրոնի կողմից իրականացվում են վերապատրաստման դասընթացներ և վերապատրաստված մասնագետների շարունակական մեթոդական աջակցություն և մասնագիտական խորհրդատվություն աշխատավայրում (կրթական սուպերվիզիա): Առաջին վերապատրաստման դասընթացի ծրագիրը ներառում է հիմնարար գիտելիքների փոխանցում, մասնագիտական և առանցքային կարողությունների և մոդուլների պրակտիկ կիրառման հմտությունների զարգացում: Այն տևում է 40 ակադեմիական ժամ, որին հաջորդում է շարունակական քննարկումներ ու հանդիպումներ ինչպես անհատական, այնպես էլ խմբային ձևաչափով: Սակայն համակարգերից մասնագետների հոսունության, ցածր աշխատավարձի, մասնագիտական ոչ կոմպետենտության պատճառով հաճախ վերապատրաստումները ռեսուրսների ոչ արդյունավետ ծախս են դառնում: Ուստի, խնդրի լուծման հիմնական առաջարկը ՄԿԿՀ կենտրոնի բազայի հիման վրա՝ ներգրավելով գիտական հաստատություններին (բուհերին) կարիերայի խորհրդատուների որակավորման ինստիտուտի ձևավորումն է:

3.2. Քաղաքացիական հասարակության հիմնական շահագրգիռ կողմերը

Հայաստանում կարիերայի զարգացմանն ուղղված ծառայություններում քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերն իրենց դերակատարությունն ունեն: Հիմնականում խոշոր գործատուներն իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում առանձին ծրագրեր են մշակում և իրականացնում երիտասարդների կարիերայի ուղղորդման ուղղությամբ: Մասնավորապես, Հայաստանի ՄՌ ասոցացիան ստեղծել է յուրօրինակ «zoom in» ծրագիրը: «Կայմ» կազմակերպությունը մշակել է «Discovery» ծրագիրը (որը այս պահին ծառայություններ չի մատուցում) և ‘CareerLab’-ն ունի «Իմ հմտություններն իմ ապագան են» ծրագիրը: Հիմնականում խոշոր գործատուներն իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում առանձին ծրագրեր են մշակում և իրականացնում երիտասարդների կարիերայի ուղղորդման ուղղությամբ:

«Zoom in» ծրագիրը հիմնված է «DISC» (գերակայություն, ազդեցություն, կայունություն և բարեխղճություն) մոդելի և անցյալ-ներկա-ապագա մոտեցման հիման վրա: Ծրագրի նպատակ ունի օգնել դեռահասներին բացահայտել տարբեր տարբեր ոլորտների հնարավորություններ, որոնցով ավելի հետաքրքրված են, ցանկանում են զարգանալ և ավելի լավ հասկանալ իրենց շարժառիթներն ու ձգտումները: Նախատեսված է 14-17 և 18-29 տարիքային խմբերի համար:

«Կայմ» մասնագիտական կողմնորոշման ակումբի առաքելությունն է օգնելու է, որ 12-17 տարեկան պատանիները բացահայտեն իրենց, արժևորեն իրենց, ճանաչեն իրենց, սիրեն իրենց, կողմորոշվեն մասնագիտությունների ընտրության մեջ, ծանոթանան նոր մասնագիտություններին, պատասխանատվություն կրեն իրենց ապագայի համար: Այն նախատեսում է նաև աշխատանք ծնողների համար՝ աջակցելու, որ նրանք կարողանան հմտորեն ուղղորդել իրենց երեխաներին, ճանաչեն երեխաների ուժեղ կողմերը, հասկանան և հարգեն երեխաների ընտրությունը, հավատան իրենց երեխաներին:

«Skillford»-ը դեռահասների մասնագիտական կողմնոշման և կյանքի հմտությունների զարգացման կենտրոն է, նախատեսված է 14-17 տարեկան դեռահասների համար: «Մասնագիտական կողմնացույց» դասընթացի արդյունքում դեռահասը կարող է ավելի լավ ճանաչել ինքն իրեն, բացահայտել սեփական կարողությունները և իրական ցանկությունները, ճիշտ ընտրել մասնագիտություն, որը եկամտի աղբյուր լինելուց բացի նաև կերջանկացնի, դնել նպատակներ և գտնել դրանց հասնելու ուղղին, բարձրացնել ներքին մոտիվացիան, հավատալ սեփական ուժերին, դառնալ ինքնուրույն և պատատխանատու: Կազմակերպում է նաև սեմինարների ծնողների համար:

«CareerLab»-ը ծառայություններ է մատուցում շահառուների ավելի լայն շրջանակի համար՝ դեռահասներ, ծնողներ, երիտասարդներ, հաշմանադամություն ունեցող անձինք, անմրցունակ կանայք: Ըստ առաջարկվող ծրագրի մասնագիտության գիտակցված ընտրությունը երեք հիմնական գործոնների համադրումն է, որոնք են՝ անձնային որակների և նախասիրությունների բացահայտում, ՀՀ աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, ՀՀ կրթական համակարգի և ուսուցման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում: Ծրագրի առանցքում Կարիերայի կառավարման հմտությունների զարգացումն է:

Հիմնականում խոշոր գործատուներն իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակում առանձին ծրագրեր են մշակում և իրականացնում երիտասարդների կարիերայի ուղղորդման ուղղությամբ: Նման նախաձեռնություններով հանդես են գալիս մասնավորապեսհեռահաղորդակցման (Վիվա սել – “VivaStart” ծրագիր), տեղեկատվական տեխնոլոգիների (Softconstract), արտադրության (Coca-Cola Hellenic Armenia – Quick start ծրագիրը) բանկային ոլորտի գործատուները: Մյուս կողմից, գործատուների շահագրգռվածությունը երիտասարդների կարիերայի ուղղորդման ծառայություններ իրականացնելու գործում պայմանավորված է ապագա կադրերի ներգրավման խնդրով: Քանի որ ներկայումս խնդրահարույց է թափուր աշխատատեղերին համապատասխան կադրերի հավաքագրումը:

Ծնողների մասնակցությունը կարիերայի ուղղորդման ծառայություններում հաճախ ապահովվում է հանրակրթական դպրոցներում: Ծնողական խորհուրդները, որոնց հիմնական նպատակներից է՝ «ներգրավել ծնողներին սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, մասնակցել սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը», հաճախ ակտիվ ներգրավվածություն ունեն

դպրոցականների կարիերայի ուղղորդման, կարիերայի իրազեկման աշխատանքներում: Նրանք ներկայացնում են իրենց մասնագիտությունն ու զբաղմունքը, ապահովում աշխատանքային գործընթացին ծանոթացումը, կազմակերպում վարպետաց դասեր և այլն:

Մեծահասակների կրթության և ուսուցման ոչ ֆորմալ հաստատություններում կարիերայի ուղղորդման ծառայությունները չեն կրում կանոնակարգված բնույթ: Դրանք ինտեգրված են մասնագիտական ուսուցման դասընթացների մեջ:

Վերջին տասնամյակում առավել հաճախ են կազմակերպվում աշխատանքի տոնավաճառներն ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության բոլոր համայնքներում: Երբեմն դրանք ունեն նաև ոլորտային ուղղվածություն: Իրականացվում են զբաղվածության պետական ծրագրերի շրջանակում, դոնոր կազմակերպությունների պատվիրակմամբ կամ հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ: Ներկայումս իրականացվող աշխատանքի տոնավաճառների ժամանակ զուգահեռ հաճախ են անցկացվում նաև կարիերայի ուղղորդման ծառայություններ՝ հաշվի առնելով դրանց պահանջարկը: Ծառայություններն անցկացվում են գործատուների մարդկային ռեսուսների կառավարման մասնագետների կամ կարիերայի ուղղորդման մասնագետների ներգրավմամբ:

Ինչպես դիտարկումները ցույց տվեցին գործատուների մոտ աշխատակիցների կարիերաի ուղղորդման ուղղությամբ աշխատանքները իրվական հիմք չունեն և համատարած չեն, սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ կարիերայի կառավարման հմտությունների զարգացման կարիքը մեծ է: Մասնավորապես՝ համաձայն «Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ կողմից 2020թ իրականացված «Բարձր որակավորմամբ (high skilled) աշխատուժի ներգրավվածությունը Հայաստանի աշխատաշուկայում» հետազոտական զեկույցի17՝ «Գործատուներն ամենաշատը կարևորում են աշխատողների արժեքներն ու վերաբերմունքն աշխատանքի հանդեպ: Նրանք կարևորում են պատասխանատվության զգացումը, պարտաճանաչությունը, աշխատելու պատրաստակամությունը, ազնվությունն ու բարեկրթությունը: Երկրորդ տեղում սոցիալական հաղորդակցման հմտություններն են, մասնավորապես՝ թիմային աշխատանք կատարելու, միջանձնային շփման, ղեկավարման և կազմակերպչական հմտությունները, աշխատանքի ընթացքում դրսևորվող ակտիվությունն ու նախաձեռնողականությունը, ինչպես նաև՝ հավասարակշռությունը՝ ոչ կոնֆլիկտային բնավորությունը: Երրորդ հերթին կարևորվել են գիտելիքների գործնական կիրառությանը վերաբերող հատկանիշները, հատկապես՝ աշխատանքի բաժանման և պլանավորման, ժամանակի կառավարման և արդյունքները վերջնաժամկետներին հասցնելու, անձնային աճի և ինքնակատարելագործման հմտությունները»:

Պետք է փաստել, որ Հայաստանում հմտությունների վավերացման և ճանաչման համակարգ չկա:

---

[17] https://edu2work.am/case-studies

4. ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում անկախ տարիքից և սոցիալ-աշխատանքային կարգավիճակից անձի կարիերայի ուղղորդման ծառայություններից օգտվելու հնարավորությունները դեռևս լիարժեք ապահովված չեն:

Մասնագիտության ընտրության գործընթացը սկսում է դպրոցահասակ տարիքից, երբ երեխան փորձում է ճանաչել մասնագիտությունների աշխարհը, հասկանալ մասնագիտական կրթության հնարավորությունները և աշխատաշուկայի պահանջարկը: Իրավիճակը գնահատելու նպատակով անցկացված հարցմանը մասնակցել են 1403 դպրոցներից 800-ը (բոլոր դպրոցների ընդամենը 57%-ը): Արդյունքում պարզվեց, որ հարցմանը մասնակցած դպրոցների 33%-ում կան մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ վերապատրաստված (գերակշիռ մասը՝ ՄԿԿՁ կենտրոնի կողմից) մանկավարժներ, որոնց 83%-ն իրականացնում է կարիերայի կրթություն ՄԿԿՁ կենտրոնի կողմից տրամադրված միասնական մեթոդաբանությամբ: Բացի այդ, հարցմանը մասնակցած դպրոցների ևս 66.5%-ում իրականացվում են կարիերայի ուղղորդման որոշակի աշխատանքներ,ինչպիսիք են բուհեր աշակերտների այցելությունների կազմակերպում, մասնագիտությունների մասին զրույցներ, թեև մանկավարժները որևէ մասնագիտական վերապատրաստում չեն անցել:

Փաստորեն, ներկայումս Հայաստանի դպրոցների միայն 21.4%-ն է ապահովում 8-11-րդ դասարաններում կարիերայի կրթություն: Այն իրականացվում է ուսումնական պլանով նախատեսված մասնագիտական կողմնորոշման ակումբների շրջանակում, շաբաթական մեկ դասաժամ՝ ՄԿԿՁ կենտրոնի վերապատրաստումն անցած և համապատասխան ուսումնամեթոդական նյութերով ապահովված մանկավարժների կողմից: Կարիերայի կրթությունն իրականացվում է մոդուլային ուսուցման սկզբունքով մշակված չափորոշիչով և ըստ դասարանների՝ ուսումնական ծրագրերով: Դրանց շրջանակում, կախված թեմայից, նախատեսված են տեղեկատվության տրամադրում, գնահատման և թեստավորման ծրագրեր, վարժանքներ և գործնական աշխատանքներ, մասնագիտությունների մասին ֆիլմերի դիտում և քննարկում, արտադպրոցական այցելություններ ձեռնարկություններ և ուսումնական հաստատություններ, արհեստավարժ և իր համայնքում հեղինակություն ունեցող մասնագետների/դպրոցի շրջանավարտների հետ զրույց-հանդիպումներ: Խմբային աշխատանքներից բացի իրականացվում է նաև անհատական խորհրդատվություն աշակերտի և ծնողների հետ, ինչպես նաև դիտարկման նպատակով զրույցներ առարկայական մանկավարժների հետ: Հեռավար և թվային ծառայությունների հասանելիությունը Հայաստանում դեռևս սահմանափակ է: Թեստավորման որոշ ծրագրեր հասանելի են ՄԿԿՁ կենտրոնի պաշտոնական կայքէջում: Սույն ծառայությունների արդյունքում կարիերայի կրթության համար պատասխանատու մանկավարժները (տնօրենի տեղակալ, սոցիալական մանկավարժ, հոգեբան, դասղեկ կամ այլ

մանկավարժ) ուսումնական կիսամյակի ավարտին իրենց կարծիքն ու արդյունքներն են ամփոփում յուրաքանչյուր աշակերտի համար՝ հետագայում նաև ազդեցության գնահատում իրականացնելու նպատակով:Այսպիսով կարիերայի խորհրդատուն գնահատում է դեռահասի կայացրած որոշման վրա մատուցված կարիերայի ուղղորդման ծառայության ազդեցությունը:

Այն դպրոցներում, որտեղ դեռևս ներդրված չէ կարիերայի կրթությունը, կարիերայի ուղղորդման աշխատանքներ կարող են իրականացվել տնօրենի կամ մանկավարժների նախաձեռնությամբ: Դրանք հիմնականում իրականացվում են ավագ դպրոցում (14-16 տարեկան), կազմակերպվում են զրույցներ մասնագետների հետ, այցելություններ գործատուի մոտ կամ մասնագիտական ուսումնական հաստատություններ: Սակայն դրանք չեն կրում շարունակական և ամփոփիչ բնույթ:

Հանրակրթական դպրոցներում կարիերայի կրթության բաղադրիչը ներդրվում է ազգային մակարդակով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից, Երևանի քաղաքապետարանի և հանրապետության մարզպետարանների (ապահովում է տարածքային պետական կառավարումը) կրթության վարչությունների հետ համագործակցությամբ:

Հանրապետության բոլոր 96 ՄԿՈՒ հաստատությունների ուսանողների համար ստեղծված են կարիերայի ուղղորդման և կարիերայի կրթության ծառայություններից օգտվելու հնարավորությունները: Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման (պաշտոնի անվանումը՝ համաձայն հաստիքացուցակի) մասնագետները յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբ հաստատության կառավարման խորհուրդ են ներկայացնում իրենց ուսումնական պլանը, ըստ որի աշխատում են ուսանողների հետ: Ծառայությունները ներառում են կարիերայի կառավարման հմտությունների զարգացում, անհատական խորհրդատվություն, պրակտիկայի կազմակերպում և աշխատանքի վրա հիմնված ուսուցմանը ներգրավում, զբաղվածության տարածքային կենտրոնի հետ կապերի հաստատում, կամավորական աշխատանքներում ներգրավում, հետագա զբաղվածությանն աջակցություն: (Տե՛ս ՄԿԶԿ կենտրոնի կողմից մշակված ուսումնական պլանը հավելվածում)

Յուրաքանչյուր ուսանողի համար մասնագետը վարում է անհատական գործ: Տարեկան երկու անգամ ներկայացնում է վիճակագրություն՝ ուսանողների կարիերայի ուղղորդման ծառայությունների վերաբերյալ: Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մասնագետները անցնում են պարտադիր վերապատրաստում, շարունակական խորհրդատվություն և սուպերվիզա ՄԿԿԶ կենտրոնի կողմից՝ ստանալով անհրաժեշտ մեթոդաբանություն և գործիքակազմ: Վերապատրաստման հաճախականությունը կախված է ուսանողների թվից և պահանջարկից: Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մասնագետները տարեսկզբին հաստատման են ներկայացնում տարեկան ծրագիրը, որի մեջ ներառված է նաև գալիք ուսումնական տարում նախատեսվող վերապարռաստումները: Պետք է հավելել նաև, որ ՄԿՈՒ հաստատությունների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մասնագետներն ակտիվ ներգրավվածություն ունեն հաստատության որակի գնահատման, աշխատանքի վրա հիմնված ուսուցման, աշկերտության և պրակտիկայի կազմակերպման գործընթացներում, նրանց մի մասը նաև դասավանդում են «Հաղորդակցման

հմտություններ» և «Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ» մոդուլները: Վերջին երեք տարիներին մասնագետները առավել ակտիվ ներգրավված են տարբեր ուսուցման ծրագրերում՝ զարգացնելով իրենց անձնային և փափուկ կարողությունները՝ հաղորդակցման հմտություններ, բանակցելու կարողություն, համագործակցելու և ներկայացման կարողություններ:

ՄԿՈՒ հաստատություններում կարիերայի կրթության և կարիերայի ուղղորդման բաղադրիչը ներդրվում է ազգային մակարդակով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից, հաստատությունների կառավարման խորհրդի մասնակցությամբ:

Բուհերի ուսանողները կարիերայի ուղղորդման ծառայություններ ստանալու համար պետք է դիմեն իրենց բուհի Կարիերայի կենտրոն (տարբեր բուհերում տարբեր անվանումներ ունեն): Սակայն զեկույցի շրջանակներում իրականացված հարցման արդյունքում պարզվեց, որ բուհերի կարիերայի ստորաբաժանումները տարբեր գործառույթներ են իրականացնում, ուստի դժվար է գնահատել նրանց ներգրավվածության մակարդակը ուսանողների կարիերայի ուղղորդման գործընթացում: Յուրաքանչյուր բուհ ունի իր առանձին մոդելը:

Ֆորմալ կրթությունից դուրս գտնվող անձինք, մեծահասակները, աշխատաշուկայում անմրցունակ անձինք կարիերայի ուղղորդման ծառայություններ կարող են ստանալ միասական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում, որոնք գործում են մայրաքաղաքում և հանրապետության բոլոր մարզերում (թվով 49 կենտրոն): Զբաղվածության տարածքային կենտրոնների վերակազմակերպունից հետո ներկայումս մշակվում է կարիերայի ուղղորդման նոր մոդել, որի հիմնված է ոչ միայն այցելուների(գործազուրկներ, աշխատանք փնտրողներ) ցանկությամբ կարիերայի ուղղորդման ծառայություններ ստանալուն, այլև սոցիալական աշխատողի կողմից կարիքի գնահատման արդյունքում բացահայտված կարիերայի ուղղորդման կարիքի դեպքում: Սակայն մոդելն ազգային մակարդակով դեռ լիարժեք ներդրված չէ, չկա ընտրված և վերապատրաստված մասնագիտական համապատասխան անձնակազմ:

Դեռահասների և երիտասարդների, նրանց ծնողների կարիերայի ուղղորդման նպատակով գործում են մասնավոր մի շարք ընկերություններ, որոնց ծառայությունները հիմնականում հասանելի են մայրաքաղաքում:

Զբաղվածության պետական քաղաքականության մասով տարածքային կենտրոններում աշխատանքները համակարգվում և կազմակերպվում են զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի վարչության կողմից, որը մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է Միասնական սոցիալական ծառայության համակարգում: Վարչության հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

1) աշխատաշուկայում մրցունակության ապահովումը՝ ներառման պայմանների ձևավորման միջոցով, աշխատուժի պահանջարկի բավարարման և առկա աշխատուժի առաջարկի արդյունավետ իրացման, կայուն կամ ժամանակավոր զբաղվածության ապահովումը.

2) նոր ստեղծվող և թափուր աշխատատեղերի, աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ տվյալների հասանելիության համակարգված ապահովումը գործատուների և աշխատանք փնտրողների համար.

3) կրթության և սոցիալական համակարգերում մասնագիտության գիտակցված ընտրությանն ու կարիերայի արդյունավետ կառավարման ծառայությունների ապահովումն ու աջակցումն՝ ուղղված մրցունակ աշխատանքային ներուժի ձևավորմանը:

Վարչության համակարգում գործում է 4 բաժին՝

1) Զբաղվածության ծրագրերի համակարգման բաժին,

2) Գործատուների հետ համագործակցության և միգրացիայի բաժին,

3) Աշխատանքային ներուժի զարգացման և մասնագիտական կողմնորոշման բաժին,

4) Ծրագրերի պլանավորման և հայտերի ձևավորման բաժին:

4.1. Կրթությունը, ուսուցումը և աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը երիտասարդների համար

I. Հանրակրթությունը

Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության բովանդակությունը կարգավորվում է Հանրակրթության պետական չափորոշչով: Վերանայելով դեռ 2010-2011թթ գործող փաստաթուղթը՝ 2021թ. ՀՀ կառավարության կողմից հաստատված նոր «Հանրակրթական պետական չափորոշիչը»: Այն մշակվել է նոր սկզբունքով, սահմանում է հանրակրթական միջնակարգ կրթության հիմնական ծրագրի շրջանավարտի ակնկալվող կարողունակությունները (կոմպետենցիաները): Կարողունակությունների ձևավորմանը միտված են հանրակրթական միջնակարգ կրթության հիմնական ծրագրերը, տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները, սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները՝ ըստ կրթության աստիճանների և սովորողների գնահատման համակարգի սկզբունքները: Կարողունակությունների սահմանման համար հիմք են հանդիսացել Եվրոպայի Խորհրդի կողմից առաջադրված Ժողովրդավարական մշակույթի կոմպետենցիաները (CDC): Սույն փաստաթղթով սահմանվել է նաև կրթության երեք աստիճաններում՝ տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի շրջանավարտների կարիերայի կրթության վերջնարդյունքները, որոնք են՝

Տարրական ծրագրի շրջանավարտը պետք է՝	Հիմնական ծրագրի շրջանավարտը պետք է՝	Միջնակարգ ծրագրի շրջանավարտը պետք է՝
կարևորի աշխատանքը, ճանաչի տարբեր մասնագիտություններ և զբաղմունքներ, ըստ մասնագիտության աշխատանքային գործիքները և գործառույթները:	կարողանա բացահայտել և զարգացնել իր հետաքրքրություններն ու նախասիրությունները և կատարել նախնական ինքնորոշում՝ հիմնվելով մասնագիտական կրթության հնարավորությունների վրա:	ունենա մասնագիտական կողմնորոշում՝ հիմնված աշխատաշուկայի պահանջարկի և ինքնաճանաչման վրա, և ներկայացնի իր նախընտրած մասնագիտությունը:

Թեև կարիերայի կրթության բաղադրիչը ներդրվում է 8-11-րդ դասարաններում, որպես պարտադիր ակումբ, այնուամենայնիվ կարիերայի կրթությանն աջակցող առարկաների՝ տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը», միջին դպրոցում՝ «Հասարակագիտություն», շրջանակում քննարկվում են առանձին թեմաներ: Ըստ 2021 թվականին ՀՀԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի փորձնական չափորոշչի և ուսումնական ծրագրերի սահմանված է, որ՝ «համաձայն առաջարկվող մեթոդաբանության, դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքները ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բաղադրիչն են:

Նախ, պետք է շեշտադրել և կարևորել ուսումնադաստիարակչական գործընթացում իրականացվող աշխատանքի մեթոդաբանությունը, հետո զարգացնել և լրացնել այն արդեն առարկայական կամ միջառարկայական կապերի միջոցով: Մեթոդաբանության հիմքում աշակերտի անձնային որակների, նախասիրությունների, հետաքրքրությունների բացահայտումն է և առանցքային կարողունակությունների զարգացումը, տեղեկատվության փոխանցումը, մասնագիտությունների մասին ճանաչելիությունը, և թե տարբեր առարկաներ ինչ նշանակություն ունեն այս կամ այն մասնագիտության և զբաղմունքի տեսանկյունից»: «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացի ծրագրի համար առաջարկվող ժամաքանակը տարեկան 34 ժամ է (շաբաթական մեկ հանդիպում), իսկ 11-րդ դասարանում՝ 15 ժամ կարիերայի պլանավորման անհատական հետազոտական նախագիծ կատարելու համար: Սա համարվում է աշակերտների վերջնական աշխատանքը: Աշակերտը ներկայացնում է իր ընտրած մասնագիտությունը, իր ընտրության պատճառը, ընտրած մասնագիտության կրթական հնարավորությունները, իր զբաղմունքի տեսլականը և հանգամանքները, որոնք ազդել են իր որոշման վրա:

Համաձայն ուսումնական պլանի պարտադիր են նաև արտադպրոցական այցելությունները (գործատուի մոտ՝ աշխատավայրեր, ուսումնական հաստատություններ, միասնական սոցիալական ծառայություն և այլ), ծնողների հետ հանդիպումներն ու անհատական խորհրդատվությունը, կարիերայի և մասնագիտությունների ցուցահանդեսների կազմակերպում,

մասնակցություն կարիերայի տոնավաճառներին: Դասընթացը կարող է վարել միայն վերապատրաստված (ներկայումս միակ մասնագիտական վերապատրաստում իրականացնող պետական մարմինը ՀՀ ԱՍՀՆ համակարգում գործող ՄԿԿԶ կենտրոնն է) և երաշխավորված մասնագետը (նախապատվությունը տրվում է դպրոցի սոցիալական մանկավարժին, հոգեբանին և մասնագիտացված կրթական աջակցությունների գծով փոխտնօրենին), ով նախապես պետք է ընտրվի դպրոցի կողմից՝ հաշվի առնելով «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացը դասավանդելու համար անհրաժեշտ մասնագիտական և անձնային որակները:

2019-2020թթ Սեյվ դը Չիլդրեն-Հայաստան կազմակերպության կողմից «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվել հանրապետության 10 դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ակումբների տարածքի արտաքին հարդարմանը, նյութատեխնիկական միջոցների (խմբային և անհատական ինտերակտիվ ուսուցման համար սեղան-աթոռներ, համակարգիչ, տեսացրիչ և այլ) ձեռքբերման համար:

Հանրապետության 1000 հանրակրթական դպրոցներից 90-ում կարիերայի կրթությունը իրականացվում է ակումբներում, որտեղ կիրառվում է «Կարիերայի ուղղորդում» չափորոշիչը(արտադասարանային) և ուսումնական ծրագիրը: Յուրաքանչյուր դպրոցում կարիերայի ուղղորդման աշխատանքները իրականացնում են երկուական մասնագետ: Թվով 240 դպրոցներում տրամադրվում է կարերայի ուղղորդման ծառայություններ, որոնք չեն վերահսկվում, ուստի այլ տեղեկատվություն հասանելի չէ:

II. Մասնագիտական կրթությունը և ուսուցումը (ՄԿՈՒ)

Համաձայն ՄԿՈՒ հաստատություններում կարիերայի ստորաբաժանումների կանոնակարգի, հիմնական նպատակն է կարիերայի տեղեկատվության, խորհրդատության, կարիերայի կրթության և ուղղորդման ծառայությունների մատուցման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանն ու կարիերայի կառավարման հմտությունների ձևավորմանը: Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մասնագետի պաշտոնի նկարագրում հստակ ամրագրված են նրա գործառույթները, որոնք առանձնացված են երեք ուղղության՝ կարիերայի ուղղորդման տեղեկատվա-խորհրդատվական աշխատանքներ, աջակցություն զբաղվածության ապահովմանը և վարչական աշխատանքների կատարում՝ տեղեկատվության հավաքագրում, վիճագրության կազմում՝ ուղանողների կարիերայի ուղու վերաբերյալ, համապատասխան ժամկետներում մշտադիտարման զեկույցների կազմում (տե՛ս՝ ՄԿՈՒ մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մասնագետի պաշտոնի նկարագիրը հավելվածում):

ՄԿՈՒ-ն այն եզակի համակարգերից է, որտեղ կարիերայի զարգացման գործընթացները լիարժեք ներդրված են և համակարգվում են ազգային մակարդակում, կարիերայի կրթության և

ուղղորդման ծառայություններն իրականացվում են տեղական մակարդակում՝ հիմնված սահմանված գործառույթների և մոնիթորինգային պահանջների վրա: Դեռ 2013 թվականից Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF) խորհրդատվական աջակցությամբ իրականացված հաջողված փորձնական ծրագրերի գնահատման, ԵՄ բյուջետային աջակցության «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» (Better Qualifications for Better Jobs) համաձայնագրով սահմանված նախապայմանի կատարման և ազդեցության գնահատման արդյունքում՝ ՀՀ պետական բյուջեից միջոցներ նախատեսվեց 2018-2020թթ հանրապետության բոլոր 96 ՄԿՈՒ հաստատություններում մեկական մասնագետի հաստիքի հատկացման համար: 2018 թվականից ի վեր շուրջ 49 միլիոն դրամ(մոտավորապես 88.3 հազար եվրո) է նախատեսվել մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մասնագետների աշխատավարձի համար:

Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման մասնագետների աշխատանքը սկսվում է մինչ ընդունելությունը, երբ հանրակրթական դպրոցների հետ համագործակցությամբ ապահովում են աշակերտների իրազեկումը, կազմակերպում այցելություններ քոլեջ կամ ուսումնարան, վարպետաց դասեր, նաև անհատական խորհրդատություն ծնողների ու ապագա դիմորդների հետ: Ուսումնառության գործընթացում առաջնորդվում են ՄԿԿՁ կենտրոնի տրամադրած մեթոդաբանությամբ՝ անհատական և խմբային աշխատանքների համար: Անցկացնում են նաև ոչ ֆորմալ ուսուցման դասընթացներ կարիերայի պլանավորման հմտությունների զարգացման նպատակով (թվով 10 մոդուլ): Մոդուլների թեմաներից առանձնացնենք հետևյալ օրինակները՝ «Կարիերայի կառավարում», «Ինքնագնահատում», «Հաղորդակցման հմտություններ», «Ձեռներեցության հմտություններ», «Առաջնորդություն և կառավարում», «Ցկյանց ուսումնառությունը կարիերայի զարգացման գործընթացում»,«Ինչպես գրել ինքնակենսագրական», «Ինչպես ներկայանալ հարցազրույցին»: Ակտիվ համագործակցում են համայնքի գործատուների, միասնական սոցիալական ծառայության մասնագետների, ՀԿ-ների հետ՝ նրանց ներգրավելով ուսանողների հետ աշխատանքում: Ծառայությունների մատուցման համար սահմանված հստակ ժամաքանակ կամ տևողություն: Սակայն կան նվազագույն պայմաններ ուսանողների կարիերայի կառավարման հմտությունների զարգացման թեմաների ապահովման, համագործակցող գործատուների թվի, միասնական սոցիալական ծառայություն ուղղորդման հետ կապված:

Մասնագետները վարում են ուսանողների հետ տարվող կարիերայի ուղղորդման, զբաղվածության աջակցության աշխատանքների շտեմարան (MS Excel ֆորմատով), ըստ որի ամփոփ տվյալները տարեկան երկու անգամ ներկայացնում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության ՄԿՈՒ վարչություն:

ՄԿԿՁ կնետրոնի կողմից 2020 թվականին իրականացված գնահատման արդյունքում պարզել է, որ Կարիերայի ստորաբաժանումներ դիմած ուսանողների ընդհանուր թիվը կազմում է 2477: Կարիերայի ուղղորդման մասնագետին դիմած ուսանողներից 475-ի հետ իրականացվել է հոգեբանամանկավարժական թեստավորում, անհատական խորհրդատվություն: Իրականացված

դասընթացներին մասնակցել են ընդհանուր 2197 ուսանող, որոնցից 1565-ը՝ 71%-ը ավարտական կուրսի ուսանողներ են:

Ընդհանուր առմամբ, ՄԿԿՁ կենտրոնի տվյալներով 2018-2020թթ բոլոր ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների 97.34%-ը ուսումնառության ողջ ընթացքում ներգրավված է եղել կարիերայի ուղղորդման տարբեր ծառայություններում: 2018 թվականին շուրջ 154 000 մարդ դիմել է SEA մարզային կենտրոններ, և և ստացել խորհրդատվություն և ուղեգրեր: Նրանցից ավելի քան 20 000-ն օգտվել է կարիերայի ուղղորդման (մասնագիտական կողմնորոշման) ծառայություններից: Աշխատանքի տեղավորման ուղղորդում է իրականացվել 11996 աշխատանք փնտրողների համար, որոնցից 8159-ը (68%) կանայք են, իսկ 3894-ը (33%)՝ 16-ից 29 տարեկան): Աշխատանքի տեղավորման աջակցություն ստացած 83%-ը (կամ 9 932 անձ) անմրցունակ են համարվել աշխատաշուկայում: ՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքի տեղավորման մակարդակը մնում է համեմատաբար ցածր (աշխատանք փնտրողների 73-74%-ը, իսկ մոտ 40%-ը՝ որակավորման ունեցողների): Ըստ շահագրգիռ կողմերի, հիմնական գործոններից մեկը անբարենպաստ իրավիճակն է՝ նոր աշխատատեղերի բացման հետ կապված, ցածր աշխատավարձով և ոչ համապատասխան աշխատանքային պայմաններով, զգալի ստվերային տնտեսության առկայությամբ: Զբաղմունքների մեծ մասի համար չկա որևէ կանոնակարգում կրթության մակարդակում, որը մեկ այլ գործոն է: Այս ամենի հետևանքով ՄԿՈՒ կրթությանը համապատասխան շատ աշխատատեղեր զբաղեցնում են բարձրագույն կրթություն ունեցող կամ մասնագիտական կրթություն չունեցող անձինք:

Ամփոփելով պետք է փաստել, որ վերջին հինգ տարվա ընթացքում ԵՄ օժանդակության շրջանակում հասարակական կազմակերպությունների (Մարդն ափի մեջ (People in need), Կրթության և բիզնես համագործակցության հիմնադրամ, Վորլդ Վիժըն Հայաստան, Ռազմավարական զարգացման գործակալություն և այլ) կողմից իրականացվող ծրագրերը մեծ աջակցություն են տրամադրվել ՄԿՈՒ հաստատություններին, այդ թվում՝ կարիերայի ուղղորդման գործընթացի բարելավման, նոր հնարավորությունների ստեղծման, կապերի հաստատման, մասնագետների կարողությունների զարգացման ուղղությամբ: ՄԿՈՒ ոլորտը նաև այլ դոնորների՝ GIZ, ՄԱՁԾ, ԱՄՆ ՄԶԳ և այլ, ուշադրության կենտրոնում է: Կարիերայի ուղղորդման մասնագետներն ակտիվ ներգրավվածություն ունեն աշխատանքի վրա հիմնված ուսուցման համակարգի ներդրման, մեծահասակների համար կարճաժամկետ՝ մինչև 3 ամիս ուսուցումների կազմակերպման գործում: Ավանդական են դարձել Երևանում և մարզերում կազմակերպվող կարիերայի և աշխատանքի տոնավաճառները, որոնց ակտիվ մասնակցություն ունեն ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի ուղղորդման մասնագետները՝ ապահովելով ուսանողների մասնակցություն, կամավորներ, կազմակերպելով վարպետաց դասեր աշակերտների համար և այլն: Բազմաթիվ են ՄԿՈՒ հաստատությունների ուսանողների հաջողված պատմությունները, երբ տոնավաճառներից հետո ստանում են պրակտիկայի, աշխատանքի, արտերկրում ուսուցման առաջարկներ գործատուներից և կազմակերպիչներից:

III. Բարձրագույն կրթությունը

Բուհերում ուսումնառող ուսանողների կարիերայի ուղղորդման ծառայություններն իրականացվում են հիմնականում կարիերայի կենտրոնների (սույն գործատույթներն իրականացնող ստորաբաժանման անվանումները տարբեր են ըստ բուհերի) կողմից: Ներկա իրավիճակին ծանոթանալու նպատակով, այս զեկույցի շրջանակներում հարցում է անցկացվել հանրապետությունում գործող 27 բուհերի, որոնցից արձագանքել է 21-ը: Ըստ արդյունքների՝ 12 բուհում կարիերայի ուղղորդման աշխատանքների համար իրավական հիմք է ծառայում կանոնադրությունը: Սակայն ուսումնասիրելով գործառույթները, պետք է փաստել, որ տարբեր բուհերում գործառույթները ևս տարբեր են: Հարցմանը մասնակցած 19 բուհում իրականացվում են ուսանողների և շրջանավարտների կարիերայի ուղղորդմանն ու զբաղվածության աջակցմանն ուղղված աշխատանքներ: Կարիերայի պատասխանատուի համար հաստիք առկա է 20 ուսումնական հաստատությունում: Ուսանողների և շրջանավարտների կարիերայի ուղղորդման տեղեկատվական բազա առկա է 17 բուհում:

Երևանում և մարզերում կազմակերպվող աշխատանքի տոնավաճառներին բուհերը հիմնականում ակտիվ մասնակցություն ունեն: Որոշ բուհերի (Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Ֆրանսիական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Բրյուսովի անվան պետական համալսարան, Եվրասիա միջազգային համալսարան և այլ) համար արդեն ավանդական է ուսումնական տարվա ավարտին ներբուհական աշխատանքի և/կամ կարիերայի տոնավաճառների կազմակերպումը:

Դպրոցից – բուհ կապի ձևավորման և աշակերտների կարիերայի ուղղորդման գործում շարունակական միջոցառումներ են իրականացնում մասնավորապես՝ Բրյուսովի անվան պետական համալսարանի ու Եվրասիա միջազգային համալսարանի կարիերայի կենտրոնները՝ մարզային դպրոցներում կազմակերպելով աշակերտների կարիերայի կառավարման հմտությունների զարգացման երկարաժամկետ ծրագրեր:

Որպես հաջող օրինակներ կարելի է առանձնացնել Բրյուսովի անվան պետական համալսարանը, որտեղ կարիերայի կենտրոնի հիմքում ստեղվծել է «Սմաթ» ձեռներեցության կենտրոն՝ խրախուսելու ուսանողների կարիերայի կառավարման և ձեռներեցության հմտությունների զարգացմանը, գործատուների հետ կապերի ստեղծմանը: Ֆրանս-հայկական համալսարանի Զարգացման և կազմակերպությունների հետ կապերի բաժինը (Development and corporate relations service), որն իրականացնում է կարիերայի կրթության և կարիերայի ուղղորդման աշխատանքները բուհում, հաջողությամբ ներդրել է «Անձնական և մասնագիտական նախագիծ» (PPP – “Projet personnel at professionnel”) դասընթացը բուհի բոլոր ուսանողների համար: Այն նպաստում է ուսանողների կարիերայի կառավարման հմտությունների զարգացմանը, բարձրացնում շրջանավարտների մրցունակությունն աշխատաշուկայում:

Այնուամենայնիվ, դժվար է միանշանակ կարծիք ձևավորել բուհերի կարիերայի կենտրոնների գործունեության արդյունավետության մասին: Այդպես է արձանագրված նաև ՀՀ կառավորության կողմից հաստատված «Աշխատիր, Հայաստան» ռազմավարության խնդիր 3-ը՝ «Թեպետ բուհերը ևս ունեն կարիերայի ուղղորդման կենտրոններ, սակայն հստակ չեն դրանց գործառույթները, մեթոդաբանությունը, հետևապես նաև՝ արդյունքները: Բացի այդ, կարիերայի կենտրոնների հետևողական աշխատանքի արդյունքում հնարավոր է ստանալ շրջանավարտների կարիերայի հետագծի վերաբերյալ օգտակար տվյալներ՝ դրանք օգտագործելու քաղաքականությունների մշակման ժամանակ»: Սույն խնդրի լուծման ուղղությամբ Գործողություն 3.1-ով սահմանված է՝ «Բուհերի կարիերայի կենտրոնների գործունեության սկզբունքների վերանայում» (2020-2023թթ):

Միասնական սոցիալական ծառայությունների մարզային կենտրոնները աշխատում են ՄԿՈՒ հաստատությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կարիերայի կենտրոնների հետ երիտասարդների զբաղվածությանն աջակցելու նպատակով: Իրականացվում են զբաղվածության պետական ծրագրեր, աշխատաշուկայի պահանջարկի իրազեկման հանդիպումներ ուսանողների հետ, համատեղ կազմակերպվում է աշխատանքի տոնավաճառներ և այլն: Այս պահին դպրոցների հետ համագործակցությունը շատ ակտիվ է:

4.2. Աջակցությունը աշխատանք փնտրող, գործազուրկ և NEET անձանց

Աշխատանք փնտրող, գործազուրկ, աշխատաշուկայում անմրցունակ անձանց, այդ թվում՝ երիտասարդներին կարիերայի ուղղորդման ծառայությունները մատուցվում են ԱՍՀ նախարարության համակարգում գործող Միասնական սոցիալական ծառայության (նախկինում՝ զբաղվածության պետական գործակալության) տարածքային կենտրոններում, որոնք գործում են հանրապետության 49 համայնքներում:

Ծառայությունները ներառում են աշխատանք փնտրողի կարիերայի ուղղորդման կարիքի գնահատում, կարիերայի տեղեկատվություն և խորհրդատվություն, ուղղորդում՝ զբաղվածության պետական աջակցության ծրագրերում ընդգրկվելու: Բոլոր աշխատանք փնտրող անձինք իրավունք ունեն օգտվելու կարիերայի ուղղորդման ծառայություններից: Մինչ բարեփոխումները զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում իրականացվում էին նաև խմբային աշխատանքներ, թրեյնինգներ, որոշ կենտրոններում գործում էին աշխատանքի ակումբներ, որոնց նպատակն էր շարունակական հանդիպումների, թրեյնինգների միջոցով խթանել աշխատանք փնտրող երիտասարդների, կանանց զբաղվածությունը: Ներկայումս, ՄՍԾ տարածքային կենտրոնում քաղաքացին կարող է ստանալ համալիր սոցիալական ծառայություններ՝ սոցիալական կարիքի գնահատում, նպաստի տրամադրում, ֆունկցիոնալ

գնահատում, հաշվանդամության կարգի տրամադրում և զբաղվածության ծառայություններ: Բարեփոխումների արդյունքում տարածքային կենտրոններում զբաղվածության ծառայություններ մատուցող անձնակազմը օպտիմալացվել է:

Այնուամենայնիվ, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների 2021թ հոկտեմբերի դրությամբ ՄՍԾ տարածքային կենտրոններում տարեսկզբից կարիերայի ուղղորդման ծառայություն է ստացել 12 710 այցելու, որը խորհրդատվություն ստացած աշխատանք փնտրողների 22.7%-ն է:

Հայաստանը չսովորող և չաշխատող երիտասարդների թվաքանակի ցուցանիշով (NEET) աշխարհում և տարածաշրջանում զբաղեցնում է բարձր՝ 13-րդ տեղը: Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, չնայած 2018 թվականից Հանրապետությունում NEET ցուցանիշը զգալիորեն նվազել է, սակայն համանման երկրների հետ համեմատությամբ և նույնիսկ միջազգային մակարդակով ցուցանիշը դեռևս բարձր է: Ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների այն կազմում է 28.38%.

Որպես առանձին թիրախ, վերջին մեկ տարվա ընթացքում առանձնացվել են 2020թ 44-օրյա պատերազմին մասնակցած երիտասարդներն, այդ թվում՝ հաշմանդամություն ձեռք բերած: Հաշվի առնելով նրանց տարիքային խումբը (պատերազմի ժամանակ ժամկետային զինվորական ծառայողներ են եղել՝ 18-20 տարեկան)՝ նրանց գերակշիռ մասը չունի մասնագիտություն, կամ զորացրվելուց հետո շարունակում է մասնագիտական կրթությունը ՄԿՈՒ հաստատություններում կամ բուհերում: ՀՀ կառավարության կողմից առաջնահերթություն է տրվել նրանց կարիերայի ուղղորդման ծառայությունների ապահովմանը, ուսուցման և զբաղվածության աջակցմանը: Այդ նպատակով ակտիվ համագործակցություն է ձևավորվել տարբեր ոլորտների՝ առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանության միջև:

2021թ ապրիլ ամսից ՄՍԾ համակարգի ներդրմամբ պայմանավորված ներկայումս վերանայման գործընթացում է կարիերայի ուղղորդման կարիքի բացահայտման և համանուն ծառայությունների մատուցման մոդելը: Ըստ մոդելի կարիերայի ուղղորդման ծառայություններ կարող են ստանալ ոչ միայն աշխատանք փնտրողներն, ովքեր դիմել են ՄՍԾ տարածքային կենտրոններ, այլ նաև այն քաղաքացիները, որոնց կարիերայի ուղղորդման կարիքը բացահայտվել է սոցիալական աշխատողի կողմից՝ ընտանիքի դեպքի վարման ժամանակ: Արդյունքում ակնկալվում է, որ կարիերայի ուղղորդման ծառայությունների միջոցով քայլեր կձեռնարկվեն անապահովության գնահատման համակարգում հաշվառված և նպաստ ստացող ընտանիքի անդամների տնտեսական ակտիվացմանը, աշխատանքային մոտիվացիային: Մոդելի ներդրման նպատակով անհրաժեշտություն կա զարգացնել իրականացնող անձնակազմի կարողությունները, ապահովել նրանց անհրաժեշտ տեղեկատվությամբ և գործիքակազմով:

4.3. Աշխատանք ունեցող/զբաղված անձինք

Հայաստանում մասնավոր հատվածում աշխատող անձանց կարիերայի զարգացմանն աջակցող ծրագրերի և նախաձեռնությունների մասին առանձին հետազոտություններ չեն հրապարկվել, ուստի դժվար է ընդհանուր պատկերի և իրավիճակի մասին վերլուծություն անել: Մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետների հետ անցկացված ընտրանքային զրույցներից կարելի է եզրահանգել, որ անձնակազմի կարիերայի կառավարման հմտությունների զարգացման և կարիերայի ուղղորդման համակարգված աշխատանքներ իրականացվում են ընտրանքային խոշոր և միջին ձեռնարկություններում: ՓՄՁ-ում և միկրո ձեռնարկություններում նման պրակտիկայի մասին տեղեկատվություն առկա չէ:

Գործատուի միջոցների հաշվին աշխատողների մասնագիտական ուսուցման վերաբերյալ ՀՀ ՎԿ մշտադիտարկման մեջ ընդգրկված խոշոր և միջին կազմակերպություններից հավաքվող «Աշխատողների մասնագիտական ուսուցման մասին» պետական վիճակագրական տեղեկատվության համաձայն18 ընտրանքում գտվող գործատուների անձնակազմի 29%-ը 2019թ ուսուցում է անցել ուսումնական հաստատություններում, 67%-ը՝ անմիջապես կազմակերպությունում, 3%-ը՝ արտասահմանում: Ուսուցումներն անցկացվել են մասնագիտական պատրաստման և վերապատրաստման, որակավորման բարձրացման նպատակներով և/կամ անցել են ստաժավորում: Ինչպես երևում է, ուսուցման հիմնական ուղղություններում առանձնացված չէ կարիերայի կառավարման հմտությունների զարգացումը:

Ոչ ֆորմալ հատվածի տնտեսավարող արտադրական միավորների թիվը Հայաստանում կազմում է 185.8 հազար, նրանցում զբաղվածությունը՝ 354.0 հազար մարդ (միջին հաշվով 1.9 մարդ): Տարբեր մեթոդաբանական հաշվարկներով՝ Հայաստանում չգրանցված աշխատողների թիվը տատանվում է 300 հազարից 700 հազարի միջև19:

Ըստ 2020 թվականանին Բաց հասարակության հիմնադրամի շրջանակներում իրականացված «Չգրանցված աշխատողների կարիքներն ու խնդիրները Հայաստանում եվ դրանց սրացումը՝ պայմանավորված Քովիդ-19 համավարակով» հետազոտության արդունքների20, Հայաստանում ոչ ֆորմալ, չգրանցված աշխատանքի հիմնական ոլորտներն են՝

- ծառայությունների և սպասարկման ոլորտը

---

18 https://www.armstat.am/file/article/trud_2020_12.pdf?fbclid=IwAR1OgBbfiEcAoxGXUREi1PFTQgnIARubxZdfyvJdPpQBK4z2ndEocb35e24

19 ՀՀ վիճակագրական կոմիտե, Համաշխարհային Բանկ, Ասիական Զարգացման Բանկ

20 https://www.osf.am/wp-content/uploads/2021/09/%D5%89%D5%A3%D6%80%D5%A1%D5%B6%D6%81%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%B8%D5%B2%D5%B6%D5%A5%D6%80-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%95%D5%AC%D5%A3%D5%A1-%D4%B1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6.pdf

- սեզոնային աշխատանքը
- գյուղատնտեսությունը
- մասնավոր ներտնային ծառայությունների ոլորտ՝ շինարարական աշխատանքներ, վերանորոգման մասնավոր ծառայություններ անհատական մակարդակում, դայակի աշխատանք, մաքրուհիներ
- բանվորական աշխատանքը
- զանգվածային լրատվության ոլորտը,
- ժամանցի, արվեստի, մշակութային ոլորտի անհատ ստեղծագործողների գործունեությունը:

Պետական աջակցության տեսանկյունից միասնական սոցիալական ծառայության խնդիրներից է աջակցել անապահովության գնահատման համակարգում ընդգրկված և նպաստառու ընտանիքների աշխատունակ տարիքի և գործունակ անդամների զբաղվածությանը՝ ներգրավելով նաև նրանց զբաղվածության աջակցության ծրագրերում: Սակայն որպես խնդիր առանձնացված չէ ոչ ֆորմալ տնտեսության մեջ գտնվող կամ չգրանցված անձանց ֆորմալ դաշտ ուղղորդելն ու աջակցության հնարավորություններ ստեղծելը:

Այս ուղղությամբ ևս առանձին հետազոտության կարիք կա:

Հայաստանում դեռևս ներդրված չէ ոչ ֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման համակարգը:

5. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Կարիերայի զարգացման ծառայությունների ֆինանսավորման և կառավարման համար պատասխանատու պետական մարմինները ԱՍՀ և ԿԳՄՍ նախարարություններն են՝ յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակում: Համաձայն ՀՀ կառավարության 2021-2026թթ ծրագրի ԱՍՀ նախարարությունը պատասխանատու է ֆորմալ կրթական համակարգում և սոցիալական ծառայություններում կարիերայի զարգացման համակարգի ներդրման մեթոդաբանության ապահովման և մասնագետների կարողությունների զարգացման համար: Հետևաբար, ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով 2013 թվականից մինչ օրս վերոնշյալ աշխատանքների ապահովման համար ԱՍՀ նախարարությանը հատկացվում են միջոցներ՝ «Մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստման» միջոցառման շրջանակում: Սույն միջոցներով ԱՍՀ նախարարությունը պատվիրակում է համապատասխան ծառայություններ իր համակարգում գործող ՄԿԿՁ կետրոնին: 2013-2021 ժամանակահատվածում, կարիերայի զարգացման համակարգի ներդրման ծավալների ընդլայնմանը զուգահեռ, ցավոք, հատկացված միջոցները նվազեցվել են, օպտիմալացվել է ՄԿԿՁ կենտրոնի մասնագիտական անձնակազմը: ՄԿԿՁ կենտրոնին հատկացված բյուջեն վերջին երեք տարիներին կազմում է 24 միլիոն դրամ(շուրջ 43.4 եվրո)

ՀՀ պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով 2018 թվականից միջոցներ են հատկացվում ԿԳՄՍ նախարարությանը՝ հանրապետության բոլոր ՄԿՈՒ հաստատություններում կարիերայի ուղղորդման մեկակական լրիվ դրույքով մասնագետի հաստիքի նախատեսման համար: Հանրակրթական հաստատություններում կարիերայի կրթության ծառայություններն ապահովվում են դպրոցներում ակումբների գործունեության համար նախատեսված ֆինանսավորման շրջանակում: Եթե դպրոցն ունի անհրաժեշտ ռեսուրսներ, այն կարող է ունենալ կարիերայի ուղղորդման ակումբ: Ընդհանուր առմամբ, որպեսզի ակումբները առկա լինեն բոլոր դպրոցներում, ԿԳՍՄ նախարարությունը պետք է համապատասխան միջոցներ տրամադրի:

ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի «Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառման շրջանակում և 2021-2026թթ հատկացված են միջոցներ՝ ոչ ֆորմալ ուսուցման դասընթացների միջոցով կարիերայի ուղղորդման ծառայությունների մասին երիտասարդների իրազեկվածության ու ներգրավվածության բարձրացմանը:

ՄՍԾ համակարգում կարևորելով կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրումն ու զարգացումը՝ զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության կազմում 2021թ ապրիլին ստեղծվեց աշխատանքային ներուժի զարգացման և մասնագիտական կողմնորոշման բաժինը: Բաժնի գործատույթների մեջ է մտնում անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից (աշխատանք փնտրող, ցերակային և շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող դեռահաս և երիտասարդ, միգրանտ, պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնող անձ և այլք) մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աջակցման ծառայությունների ապահովումը, տարածքային կենտրոնների ռեսուրս սենյակներում այցելուների հետ տարվող ինքնասպասարկման և խմբային աշխատանքների մշակման և համակարգման աշխատանքների իրականացումը, համանուն ծառայություններ իրականացնող մասնագետների վերապատրաստման կարիքի գնահատման, կարողությունների զարգացման, մշտադիտարկման և սուպերվիզիայի աշխատանքների իրականացումը, կարիերայի ուղղորդման համար անհրաժեշտ տեղեկատվական շտեմարանի ձևավորման և վարման աշխատանքների իրականացումը և այլ: Սույն բաժնի անձնակազմը քաղաքացիական ծառայողներ են:

Ֆորմալ կրթական համակարգում և սոցիալական ծառայություններում կարիերայի ուղղորդման աշխատանքները տրամադրվում են բացառապես անվճար:

Կարիերայի զարգացման համակարգի ներդրմանն աջակցում են դոնոր կազմակերպությունները, որոնց կողմից օժանդակությունն ուղղվում է այն միջոցառումների իրականացմանը, որոնք պետական միջոցների սղության պատճառով չեն իրականացվել: Ինչպես օրինակ՝ հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ակումբների գործունեության համար պայմանների ստեղծումը, նյութատեխնիկական օժանդակություն ՄԿՈՒ հաստատություններին, կարիերայի ուղղորդման մասնագետների լրացուցիչ վերապատրաստում, ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրություն և այլ:

Ներկայումս կարիերայի կրթության և կարիերայի ուղղորդման ծառայությունների ապահովման համար բավարար նյութատեխնիկական հագեցվածություն չունեն բոլոր դպրոցներն ու ՄԿՈՒ հաստատությունները, թեև ՄՍԾ տարածքային կենտրոնները վերանորոգվում և տեխնիկապես համալրվում են, սակայն կարիերայի ուղղորդման անհատական աշխատանքների համար առանձնացված տարածք չունեն:

Համադրելով կարիերայի զարգացման համակարգի ներդրման խնդիրներն ու հատկացված պետական միջոցների ծավալը՝ պետք է փաստել, որ դրանց համեմատական չեն: ՄԿԿԶ կենտրոնին տարեկան հատկացվող միջոցների շրջանակում նախատեսված է տարեկան վերապատրաստել ընդամենը 140 կարիերայի ուղղորդման մասնագետի, և շարունակական խորհրդատվություն տրամադրել արդեն վերապատրաստված 300 մասնագետի, մինչդեռ 2021թ. վերապատրաստման կարիք ունի ավելի քան 1000 մասնագետ: Դրան զուգահեռ ՄԿԿԶ կենտրոնի մասնագիտական անձնակազմը բավարար մարդկային ռեսուրսներ չունի:

Որպես հնարավորություն կարելի է դիտարկել գործատուների և դրանց միությունների ակտիվ ներգրավվածությունը և աջակցող ֆոնդերի ձևավորումը՝ ի լրումն պետական միջոցների և դոնոր կազմակերպությունների ներդրումների:

6. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հետխորհրդային Հայաստանում կարիերայի զարգացման աջակցման համակարգի ներդրմանն ուղղված բարեփոխումները սկսվել են 2012 թվականին, երբ ՀՀ կառավարության կողմից հաստատվեց «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգը» և դրա իրականացման 2013-2015 թթ միջոցառումների ծրագիրը: Դա առաջին հայեցակարգային փաստաթուղթն էր, ըստ որի կարիերայի զարգացման համակարգը պետք է ապահովի ծառայություններ անձին իր ողջ կյանքի ընթացքում, անկախ տարիքից և սոցիալ-աշխատանքային կարգավիճակից: Ըստ Հայեցակարգի կարիերայի ուղղորդման ծառայություններ ապահովող հիմնական կառույցներ էին հանրակրթական դպրոցները, ՄԿՈՒ հաստատությունները, բուհերը, զբաղվածության և ինտեգրված սոցիալական ծառայության կենտրոնները:

Ինչևէ, Հայաստանի Հանրապետությունում անձին իր ողջ կյանքի ընթացքում կարիերայի ուղղորդման ծառայությունների տրամադրումը, անկախ տարիքից և սոցիալ-աշխատանքային կարգավիճակից դեռ ամբողջովին ներդրված չէ: Ոչ բոլոր դպրոցների աշակերտներին է հասանելի կարիերայի կրթությունը, ոչ բոլոր բուհերն են տրամադրում կարիերայի ուղղորդման ծառայություններ, իսկ վերջերս կազմավորված ՄՍԾ-ն, որն իր մեջ է ներառում նախկին Զբաղվածության պետական գործակալությունը, դեռ չունի կայուն հիմք աշխատանք

փնտրողներին, գործազուրկներին և աշխատաշուկայում անմրցունակ անձանց կարիերայի ուղղորդման որակյալ ծառայություններ մատուցելու համար:

Ինչևէ, բոլոր իրավական և գործառնական հիմքերը դրված են առաջիկա տարիներին այս ուղղությամբ ներդրումներ կատարելու համար: Համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարության, որը համարվում է ոլորտային փաստաթուղթ, ՀՀ կառավարության 2021-2026թթ.-ի ծրագրով միջոցառումներ են սահմանվել ֆորմալ կրթության և սոցիալական ծառայությունների համակարգերում կարիերայի ուղղորդման ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար:

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով սահմանված են աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման չափանիշներն ու աշխատաշուկայում անմրցունակ անձի զբաղվածության ապահովումը:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց, ինչպիսիք են երկարաժամկետ գործազուրկները, տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդները, միգրանտներն ու փախստականները, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք, սահմանամերձ կամ լեռնային կամ բարձր լեռնային վայրում բնակվող անձինք, ազատազրկման վայրից վերադարձած նաև պրոբացիայի մեջ գտնվող անձինք, թրաֆիքինգի զոհերը և այլք, կարիերայի ուղղորդման ծառայությունները հասանելի է ինտեգրված սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում:

Աշխատաշուկայում անմրցունակ անձին աշխատանքի տեղավորելու պարագայում զբաղվածության պետական ծրագրի շրջանակում գործատուին կարող է տրվել միանվագ փոխհատուցում: Ծրագրով նախատեսված է երկու ենթածրագիր, որոնք կարող են իրականացվել համատեղ կամ առանձին: Առաջին ենթածրագրով նախատեսվում է անմրցունակ անձանց աշխատանքային կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին՝ տրամադրելով դրամական փոխհատուցում: Մյուսով՝ հաշմանդամություն ունեցող անձին աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին՝ սահմանված որոշակի միջոցների շրջանակում:

Ոչ ֆորմալ տնտեսությունից դուրս գալու նպատակով կարող է որպես պետական օժանդակություն դիտարկվել զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի շրջանակում ՄՍԾ կողմից իրականացվող «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագիրը: Ծրագրում կարող են ընդգրկվել աշխատաշուկայում անմրցունակ անձինք: Ծրագրի շրջանակում անմրցունակ անձանց տրամադրվում է ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցություն՝ խորհրդատվություն, ուսուցում, ձեռնարկատիրական գործունեության գործարար ծրագրի մշակում և դրա իրականացման ուղեկցում: Դրական եզրակացություն ստացած գործարար ծրագրի հիման վրա՝ անմրցունակ անձին փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար տրվում է դրամական աջակցություն: Աջակցությունը ներառում է հիմնական միջոցների արժեքի 75 տոկոսի չափով միանվագ

փոխհատուցում (միջոցների որոշակի սահմանափակմամբ), ներգրավված վարձու աշխատողի աշխատավարձի 25 տոկոսի չափով փոխհատուցում (ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսը), մեկ տարի ժամկետով, տարածքի վարձակալության արժեքի 50 տոկոսի չափով փոխհատուցում, մեկ տարի ժամկետով, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձի՝ այդ գործունեությունից առաջացող, օրենքով սահմանված եկամտային հարկը, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում՝ նպատակային սոցիալական վճարը վճարելու համար աջակցություն (ոչ ավելի, քան նվազագույն ամսական աշխատավարձի չափը), մեկ տարի ժամկետով, ամսական կտրվածքով:

Ծառայությունները հասանելի են հանրապետության բոլոր համայնքներում՝ ՄՍԾ 49 տարածքային կենտրոնների միջոցով: Ծառայությունների մատուցման թվային գործիքներ դեռևս չեն կիրառվում:

Ներկայումս ՄՍԾ տարածքային կենտրոններում կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրման աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: Նորաստեղծ համակարգում կարիերայի ուղղորդման մասնագետների ներգրավման, վերապատրաստման, կարողությունների շարունակական զարգացման, մեթոդաբանությամբ ապահովման խնդիր կա: Կարիերայի զարգացման համակարգի տեսանկյունիս միասնական սոցիալական ծառայության նոր մոդելի առանձնահատկությունն այն է, որ եթե նախկինում կարիերայի ուղղորդման ծառայություն կարող էին ստանալ տարածքային կենտրոնների այցելուները, ապա այժմ սոցիալական աշխատողների կողմից սոցիալական դեպքի վարման ժամանակ կարող է բացահայտվել կարիերայի ուղղորդման կարիք և ուղղորդվել զբաղվածության մասնագետի մոտ խորհրդատվության:

7. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Թվային տեխնոլոգիաները դեռևս լայնորեն ներդրված չեն Հայաստանում կարիերայի զարգացման ծառայություններում և գործընթացներում: Կարիերայի ուղղորդման նպատակով կիրառվող թեստավորման թվային գործիքներ են մշակված ՄԿԿՀ կենտրոնի կողմից և հասանելի են կենտրոնի կայքէջում21՝ www.mycareer.am հասցեով: Կարիերայի կրթության շրջանակում հյուրանոցային ոլորտի զբաղմունքները ներկայացնելու համար GIZ օժանդակությամբ մշակվել է VIAR նորարարական տեխնոլոգիայով տեսանյութ: Այնուամենայնիվ, կարիերայի ուղղորդման ամբողջական ծառայություններ դեռևս հասանելի չեն հանրության լայն շրջանակներին:

Աշխատուժի առաջարկի ու պահանջարկի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության բացակայությունը գործնականում դժվարացնում է փաստահենք տնտեսական, սոցիալական ու կրթական քաղաքականությունների մշակումը:

[21] http://www.mycareer.am/arm/resources/%D5%A9%D5%A5%D5%BD%D5%BF

Պետության կողմից իրականացվող զբաղվածության ծառայությունների շրջանակում ներկայումս մշակման փուլում է թվային և հեռավար ծառայությունների համակարգը(կգործարկվի 2022 թվականի փետրվարին), որը կազմի ԱՍՀ նախարարության կողմից շահագործվող զբաղվածության և աշխատաշուկայի մասին էլեկտրոնային տեղեկատվական հարթակի մի մասն է: Բերոնշյալ գործողությունները ընդգրկված են «Աշխատի՛ր Հայաստան» գործողությունների ծրագրում:«Աշխատանքի էլեկտրոնային բորսա» տեղեկատվական համակարգի նպատակն է զբաղվածության ոլորտում ծառայությունների մատուցման բիզնես գործընթացների ավտոմատացման միջոցով տեղեկատվության անհամաչափության մեղմումը և արդյունքում զբաղվածության խթանումը: Համակարգի նպատակն է՝

Աշխատուժի առաջարկի և պահանջարկի վերաբերյալ համապարփակ տվյալների հավաքագրում

Աշխատուժի առաջարկի և պահանջարկի ավտոմատ համադրում, այն է՝ աշխատանք փնտրող-գործատու կապի ստեղծում

Զբաղվածության ակտիվ քաղաքականության արդյունավետության մեծացում

Միջնաժամկետ կտրվածքով՝ տնտեսական, սոցիալական և կրթական ծրագրերի փաստահենքության ապահովում:

Համակարգով, ի թիվս այլ գործընթացների, նախատեսվում են երիտասարդների, աշխատանք փնտրողների կարիերայի ուղղորդման առցանց ծառայություններ՝ նորարական տեխնոլոգիաներով մշակված գործիքակազմերով:

Կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնի կողմից՝ Հանրային քաղաքականության ինստիտուտի հետ համատեղ իրականացվող «Կրթությունից՝ աշխատանք» ծրագրի շրջանակում 2019թ ստեղծվել է Edu2Work22 հարթակը: Ծրագիրը ՀՀ փոխվարչապետի գրասենյակի «Աշխատիր Հայաստան» նախաձեռնության մասն է: Ծրագրի արդյունքները կծառայեն որպես առաջարկներ՝ աջակցելու Կառավարության քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Edu2Work հարթակի նպատակն է արագ փոփոխվող աշխատաշուկայի և Հայաստանում աշխատուժի պահանջարկի ու առաջարկի դինամիկայի գնահատումը: Այն վերլուծում է թափուր աշխատատեղերի մասին հազարավոր հայտարարություններ, որոնք հրապարակվում են Հայաստանում գործող առցանց 10 հարթակներում՝ հնարավորություն տալով ծանոթանալ հայկական աշխատաշուկայի ներկա և կանախտեսվող պահանջարկին և ավելի տեղեկացված որոշումներ կայացնել կարիերայի վերաբերյալ: Հարթակն օգտագործում է նորարար տեխնոլոգիաներ՝ սկսած աշխատանքի առցանց հայտարարությունների ավտոմատացված հավաքագրումից մինչև մեքենայական ուսուցման տեխնոլոգիաներով վերլուծություն՝ աշխատաշուկայի ամբողջական պատկերը ցուցադրելու համար:

---

[22] https://edu2work.am

Հարթակի մշակման համար կիրառվել է տվյալագիտության և վարքաբանության ամբողջական ներուժը փաստահենք քաղաքականության մշակման համար:

Edu2Work հարթակը կառուցվել է պետական կառավարման համակարգի և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ: Այն նախատեսված է օգտատերերի երեք հիմնական խմբի համար.

Ուսանողներն ու կարիերայի կենտրոնների մասնագետները կարող են օգտագործել Edu2Work հարթակը աշխատաշուկայի միտումները հասկանալու և իրենց ամենաշատը համապատասխանող կարիերան գտնելու համար, ամենամեծ պահանջարկ ունեցող մասնագիտություններն ու հմտությունները բացահայտելու և ուսումնասիրելու համար:

Քաղաքականություն մշակողներն ու հետազոտողները կարող են օգտագործել արհեստական բանականությամբ օժտված այս հարթակը՝ իրական ժամանակում տեսնելու աշխատաշուկայի այն հատվածի ընդհանուր պատկերը, որն արտացոլվում է առցանց հայտարարություններում, ժամանակային կտրվածքով և տարբեր մարզերի մակարդակով աշխատաշուկայի փոփոխություններին հետևելու համար, գործատուների կողմից ամենապահանջված մասնագիտություններն ու հմտությունները բացահայտելու և համապատասխան քաղաքականություններ մշակելու համար, տարբեր ոլորտներում ներդրումների հնարավորություններ թիրախավորելու համար:

Համալսարաններն ու կրթական այլ հաստատությունները կարող են օգտագործել հարթակը՝ բացահայտելու ամենապահանջված զբաղմունքները և հետևելու աշխատաշուկայի փոփոխություններին հմտությունների բոլոր մակարդակներում, գնահատելու իրենց կրթական ծրագրերի արդիականությունը և դրանք համապատասխանեցնելու աշխատաշուկայի պահանջներին, հարթակի տրամադրած տվյալների հիման վրա մշակելու գործատուների այսօրվա կարիքներին համապատասխան կրթական ծրագրեր և ուղղորդել ուսանողներին:

Հարթակը հայկական առցանց աշխատաշուկայի տվյալների համադրման արդյունքում ներկայացնում է ամենապահանջված մասնագիտությունները, հմտությունները, պահանջվող որակավորման մակարդակը և աշխատանքային փորձառությունը:

Սակայն հարթակում ներառված տեղեկատվությունը ամբողջությամբ չի արտացոլում Հայաստանի աշխատաշուկայի պատկերը, քանի որ տեղեկատվական համակարգում ինտեգրված չէ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում հայտարարվող, ՄՍԾ կողմից հավաքագրված թափուր աշխատատեղերի մասին տեղեկությունները, ցածր որակավորմամբ աշխատուժի պահանջարկը:

8. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

8.1. Չափորոշիչները

Հայաստանում կարիերայի զարգացման մասնագետների որակավորման, հմտությունների և գիտելիքների ֆորմալ գնահատման չափորոշիչ չկա: Ներդրված չէ նաև որակավորման ճանաչման կամ հավաստագրման համակարգ: Սակայն հանրակրթական դպրոցներում, ՄԿՈՒ հաստատություններում և ՄՍԾ տարածքային կենտրոններում կարիերայի կրթության և կարիերայի ուղղորդման ծառայությունների իրականացման համար կարևոր նախապայման է, որ մասնագետը վերապատրաստված լինի ՄԿԿԶ կենտրոնի կողմից՝ համապատասխան մեթոդաբանությամբ և ծրագրով: ՄԿԿԶ կենտրոնի վերապատրաստման ծրագրերը մշակվել են՝ հիմք ընդունելով երկու բաղադրիչ՝ կարիերայի ուղղորդման մասնագետի կոմպետենցիաների զարգացում և ըստ ծառայության թիրախի (դպրոցական, երիտասարդ, աշխատանք փնտրող, անմրցունակ անձ)՝ մեթոդաբանության կիրառման գիտելիքների և հմտությունների զարգացում: Կարիերայի ուղղորդման մասնագիտական կոմպետենցիաների զարգացման համար հիմնվում են Գլխավոր վեհաժողովի կողմից հաստատված Կրթական և կարիերայի ուղղորդում տրամադրող մասնագետների համար միջազգային կոմպետենցիաների շրջանակի վրա23 (հաստատված՝ 2003թ, Բեռն, վերանայված՝ 2018): Ինչևէ, փաստաթուղթը որևէ կերպ հաստատված կամ վալիդացված չէ Հայաստանում:

Վերապատրաստման ծրագրի տևողությունը 40 ժամ է, որն անցնելուց հետո ՄԿԿԶ կենտրոնի մասնագետները շարունակում են մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն տրամադրել: Այն կարող է լինել անհատական, կարիերայի ծառայություններ մատուցող մասնագետի աշխատավայրում՝ կիրառելով խորհրդատվության կամ քոուչինգի տեխնիկաներ: Ընթացքում իրականացվում է մասնագետների լրացուցիչ վերապատրաստման կարիքի գնահատում և ըստ այդ պլանավորվում հետագա վերապատրաստումները:

Կարիերայի ուղղորդման մասնագետների կողմից իրականացվող կարիերայի կրթության և կարիերայի ուղղորդման ծառայությունների որակի գնահատման համընդհանուր մեխանիզմներ

[23] EVGP Framework, www.iaevg.com

ևս չկան Հայաստանում: Սակայն ՄԿՈՒ հաստատություններում այդ աշխատատանքների մոնիթորինգն իրականացնելու համար ՄԿԿԶ կենտրոնի կողմից՝ ETF փորձագիտական աջակցությամբ 2015թ մշակվել և ներդրվել է մանիթորինգային գնահատման չափորոշիչներ, ըստ որի ՄԿԿԶ կենտրոնի և ԿԳՄՍ նախարարության համապատասխան վարչության մասնագետների կողմից պարբերաբար այցելություններ են կատարվում ՄԿՈՒ հաստատություններ և իրականացվում ծառայությունների մոնիթորինգ: Մոնիտորինգը հիմնված է ՄԿԿԶ կենտրոնի կողմից մշակված կանոնակարգի վրա, որոնք կիրառվում են ՄԿՈՒ բոլոր հաստատությունների կողմից: Մեթոդական ուղեցույցը, որը մշակվել է ՄԿԿԶ կենտրոնի կողմից, ներառում է կարիերայի խորհրդատվության, կարիերայի կրթության, կարիերայի տեղեկատվության և կարիերայի ուղղորդման բովանդակությունն ու մեթոդաբանությունը: Այն նաև ներառում է կարիերայի ուղղորդման ծառայության մոդուլներ անհատական և խմբային աշխատանքների համար:

Կարիերայի ուղղորդման ծառայությունների իրականացնելու համար նախապատվությունը տրվում է սոցիալական մանկավարժի, հոգեբանի, սոցիալական աշխատողի կամ HR որակավորմամբ բակալավրի աստիճանի մասնագետներին: Սակայն այս պահանջը ամրագրված չէ որևէ փաստաթղթով: ՄԿԿԶ կենտրոնը նշված որակավորմամբ մասնագետներ պատրաստող բուհական հաստատությունների հետ ունի սերտ համագործակցություն՝ նպատակ ունենալով վերանայել ուսումնական ծրագրերը, ներառել և պարբերաբար թարմացնել «Կարիերայի ուղղորդում» առանձին մոդուլ, կազմակերպել ուսանողների արտադրական պրակտիկան՝ նրանց նախապատրաստելով ապագա զբաղվածությանը:

Այս համատեքստում առաջնային խնդիրներից է կարիերայի ուղղորդման մասնագետների ուսուցման և որակավորման, հմտությունների ճանաչման ազգային համակարգի ստեղծումը, ՀՀ զբաղմունքների դասակարգչում կարիերայի ուղղորդման մասնագետի զբաղմունքի ներառումը:

8.2. Կադրերի համալրումը

Կարիերայի զարգացմանն աջակցող ծառայություններում որպես առանձին հաստիք՝ համանուն զբաղմունքի անվամբ նախատեսված են միայն ՄԿՈՒ հաստատություններում և բուհերում: ՄԿՈՒ հաստատության կարիերայի ուղղորդման մասնագետի պաշտոնի նկարագիրը կցվում է հավելվածով: Համաձայն պաշտոնի նկարագրի, մասնագետն ապահովում է կարիերայի ուղղորդման արդյունավետ ծառայությունների մատուցումը ուսանողներին: Այս ծառայությունները ներառում են երեք հիմնական շրջանակներ՝ ուսանողներին ճշգրիտ և արդի տեղեկատվության տրամադրում կարիերայի հնարավորությունների վերաբերյալ (մասնագիտությունների, ուսումնական հաստատության, զբաղմունքի, աշխատավայրի և այլն), առաջխաղացման ուղիների, ընտրության հնարավորությունների մասին, որտեղ և ինչպես օգնություն գտնել, խորհրդատվության տրամադրում այնպիսի միջոցառումների միջոցով, որոնք օգնում են երիտասարդներին հավաքել, հասկանալ և մեկնաբանել տեղեկատվություն, կիրառել սեփական

դեպքի համար, անաչառ ուղղորդում և մասնագիտական աջակցության տրամադրում՝ օգնելու երիտասարդներին հասկանալ սեփական կարիքները, հաղթահարել խոչընդոտները, կոնֆլիկտները լուծել, նոր հեռանկարներ զարգացնել և առաջընթաց գրանցել:

Ինչ վերաբերում է 2020 թվականին ՄԿԿԶ կենտրոնի կողմից իրականացված հարցմանը մասնակցած ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի ուղղորդման մասնագետների կարողություններին, ապա հարցվածների 34%-ն ունեցել է մասնագիտական որակավորում, 9%-ը հոգեբաններ են, մնացածը՝ այլ որակավորում ունեցող մասնագետներ: Իսկ հարցման մասնակիցների 60%-ը համատեղում է կարիերայի ուղղորդման մասնագետի պարտականությունները այլ գործառույթների հետ, 34%-ը կտրամադրի միայն կարիերայի ուղղորդման ծառայություններ, իսկ 6%-ը դեռևս ոչ հաստիքային աշխատողներ են: Հարցման մասնակիցների 100%-ը տիրապետում են MS Word, 84%-ը MS Excel և 62%-ը MS PP ծրագրերին: Կարիերայի ուղղորդման մասնագետների ճնշող մեծամասնությունը՝ 87%-ը, իրենց հաղորդակցման հմտությունները գնահատում են որպես «լավ», իսկ 12%-ը՝ «գերազանց»: 1-ից 5 սանդղակում միջին գնահատականը եղել է 4,11-ը: Ստեղծագործական մտածողության բարձր ցուցանիշ է հայտնաբերվել մասնագետների 36%-ի մոտ, իսկ ճնշող մեծամասնությունը՝ 64%-ը, ցույց է տվել ստեղծագործական մտածողության միջին ցուցանիշ:

Հանրակրթական դպրոցներում կարիերայի կրթությունն իրականացվում է դպրոցի տնօրենի տեղակալի, դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, սոցիալական մանկավարժի, հոգեբանի կողմից, որոնց պաշտոնի նկարագրերում առանձնացված է կարիերայի ուղղորդման գործառույթ:

Մասնավերապես՝ «ուսուցչի հետ միասին մասնակցել սովորողների մասնագիտական կողմնորոշման բացահայտմանը, զարգացմանը և աշխատանքային գործունեության նախապատրաստմանը՝ հաշվի առնելով սովորողների կարողությունները, նախասիրությունները», «սովորողների անհատական առանձնահատկությունների, հակումների, նրանց ներուժի բացահայտման նպատակով իրականացնել հոգեբանամանկավարժական ուսումնասիրություն և դիտարկում՝ ուսումնառության ամբողջ ընթացքում և տարիքային յուրաքանչյուր փուլում», «սովորողների մեջ ձևավորել պատշաճ վարքագիծ և վարվելակերպ, նպաստել նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը»:

Դպրոցներում վերոնշված հաստիքների բացակայության դեպքում կարիերայի կրթությունն ապահովում է առարկայական ուսուցիչը:

Զբաղվածության ծառայությունների շրջանակում ՄՍԾ տարածքային կենտրոններում առանձին հաստիքային միավոր և պաշտոն նախատեսված չէ՝ հիմք ընդունելով քաղաքաշինության համակարգում պաշտոնների անվանումների օրինաչափությունը: 2021թ. ապրիլին ձևավորված ՄՍԾ կենտրոնական գրասենյակում ստեղծվել է առանձին ստորաբաժանում՝ «Աշխատանքային ներուժի զարգացման և մասնագիտական կողմնորոշման բաժին», որի հիմնական

գործառույթները անմիջական առնչվում են ՄՍԾ համակարգում կարիերայի ուղղորդման ծառայությունների ներդրմանը, ֆորմալ կրթության համակարգի հետ կապերի ձևավորմանն ու զարգացմանը: Բաժնի աշխատակիցների ընդհանուր թիվը 9-ը է:

Հայաստանի ֆորմալ կրթական համակարգում և սոցիալական ծառայություններում կարիերայի ուղղորդման մասնագետների նախնական և շարունակական վերապատրաստումներն իրականացվում է ՄԿԿՀ կենտրոնի կողմից: Այն կրում է համակարգային բնույթ՝ պետական պատվերի և գնահատված կարիքի հիման վրա: Վերապատրաստման ավարտին տրվում է միայն մասնակցության հավաստագիր:

2018 թվականի օպտիմալացումից հետո Կենտրոնի անձնակազմն ունի 10 մասնագետ (հաստիքացուցակով 12 հոգի): Աշխատանքներն իրականացվում են երկու ստորաբաժանումները՝ ուսումնամեթոդական և տեղեկատվավերլուծական: Ուսումնամեթոդական բաժինը պատասխանատու է մեթոդաբանության, վերապատրաստման ծրագրերի մշակման, շարունակական վերապատրաստումների համար, իսկ տեղեկատվավերլուծական բաժինը պատասխանատու է աշխատաշուկայի, կրթության, մասնագիտությունների, զբաղմունքների մասին տեղեկատվության հավաքագրման, գործընկեր-գործատուների հետ կապերի հաստատման և իրազեկման աշխատանքների համար: Մինչ այդ (2013-2017թթ.) ՄԿԿՀ կենտրոնում ունեցել է ավելի քան 20 մասնագետ, աշխատանքներում պարբերաբար ներգրավվել են գիտական ոլորտի փորձագետներ:

ՄԿԿՀ կենտրոնի կողմից իրականացվող վերապատրաստման ծրագրերը կազմվել են հիմք ընդունելով թիրախային խմբերի առանձնահատկությունները՝ տարիքային և սոցիալական կարգավիճակով պայմանավորված: Վերապատրաստման ծրագրերը ունեն տարբեր բովանդակություն դպրոցի մանկավարժների, զբաղվածության ոլորտի, երիտասարդների հետ աշխատող կարիերայի ուղղորդման մասնագետների համար: Միևնույն ժամանակ բոլոր ծրագրերում պարտադիր բաղադրիչ է կարիերայի կառավարման համակարգի նկարագիրը Հայաստանում, միջազգային պրակտիկան, հիմնական տեսությունները և կարիերայի ուղղորդման մասնագետներին ներկայացվող մասնագիտական պահանջները:

Մասնավոր դաշտում կարիերայի ուղղորդման մասնագիտական վերապատրաստումներ իրականացնող կազմակերպություններ հիմնականում չկան: Տարբեր դրամաշնորհների շրջանակում հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվում են վերապատրաստումներ առանձին թեմաների շրջանակում, ինչպես օրինակ՝ գլոբալ և տեղական նոր մարտահրավերներին ընդառաջ կարիերայի ուղղորդման մասնագետների կարողությունների զարգացման նոր կարիքներ են բացահայտվում, հատկապես հեռավար ծառայությունների իրականացման տեխոլոգիաներին տիրապետելու, կիրառվող գործիքները թվայնացնելու, աշխատաշուկայում անմրցունակ և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող անձնաց, ոչ ֆորմալ զբաղվածների հետ աշխատանքի նոր տեխնոլոգիաներ կիրառելու հմտությունների զարգացման:

Կարիերայի զարգացման աջակցման ծառայությունների որակը մեծապես կախված է մասնագետների որակավորումից, հմտություններից: Ուստի, առաջնահերթ է կարիերայի ուղղորդման մասնագետների որակավորման համակարգի ներդրումը, ուսուցման և վերապատրաստման առավել լայն հնարավորությունների ստեղծումը, հմտությունների ճանաչման մեխանիզմների ստեղծումը: Այդ նպատակով անհրաժեշտ է պետական համակարգի շուրջ մասնավոր հատվածի համախմբումը, լրացուցիչ միջոցների ներգրավումը:

8.3. Տվյալների և տեղեկատվության որակը

Կարիերայի ուղղորդման մասնագետների համար շարունակում է խնդրահարույց մնալ զբաղմունքների, մասնագիտությունների, աշխատաշուկայի և հմտությունների կանխատեսվող պահանջարկի մասին տեղեկատվությունը: Չկա տեղեկատվական միասնական հարթակ, որտեղից հասանելի կլինի վերոնշյալ բոլոր տեղեկությունները՝ ճշտված և շարունակաբար թարմացվող:

Թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը հասանելի է 10-ից ավելի առցանց հարթակներում, Դրանցից ամենադիտվողը staff.am հարթակն է, որը հասանելի է նաև սոցիալական բոլոր կայքերում:Staff.am-ը արհեստական ինտելեկտի հիմքով առցանց թափուր աշխատատեղերի հավաքագրման հարթակ է, որը բացարձակ առաջատար է համարվում Հայաստանի շուկայում: 100,000+ գրանցված աշխատանք փնտրողների և 4000+ գրանցված ընկերությունների բազայով այն որակյալ հավաքագրման ծառայությունները հասանելի է դարձնում տարբեր ընկերությունների համար: Staff.am-ը Հայաստանի աշխատատեղերի հավաքագրման շուկան է, որը փոխում է մարդկանց աշխատանք փնտրելու, տեղական և միջազգային ընկերությունների կողմից Հայաստանում տաղանդներ հավաքագրման ձևը:

Աշխատանք փնտրողները դիտում են աշխատատեղերի ցուցակները և աշխատանքին դիմում անմիջապես staff.am-ի միջոցով՝ աշխատանքի դիմելու ողջ ընթացքում՝ ստանալով աշխատանքի ընդունման լիովին թափանցիկ և տեղեկացված գործընթացի մասին տեղեկատվություն: Ընկերությունների կարող են նկատել գրանցված աշխատանք փնտրողներին և հրավիրվել իրենց թափուր պաշտոնին դիմելու համար: Աշխատանք փնտրողները կարող են օգտվել մի շարք այլ գործիքներից, ինչպիսիք են աշխատանքի ծանուցումները, ստուգված հմտություններն և այլն: Աշխատանք փնտրողների համար գրանցումն անվճար է:

Գործատուների համար staff.am-ն առաջարկում է աշխատատեղերի հավաքագրման ամբողջական լուծում, որը կօգնի ներգրավել մրցունակ կադրերի: Այն առաջարկում է փնտրել պոտենցիալ աշխատանք փնտրողների տվյալների բազան, որն աճում է ժամանակի ընթացքում, քանի որ դիմորդների թիվը մեծանում է, ինչը հնարավորություն է տալիս դիտարկել նրանց այլ պաշտոնների համար: Մի շարք այլ գործիքներ, ինչպիսիք են աշխատակիցների կարծիքները, ընկերության կառավարման հարթակը, դիմում հավաքելու ձևաչափը և այլ գործիքներ հավաքագրման ողջ

գործընթացը շատ ավելի արդյունավետ են դարձնում: Այն ունի կոմերցիոն նպատակներ, քանի որ գործատուները վճարում են սահմանված վճար գովազդ հրապարակելու համար: Բացի այդ, համահիմնադիրի խոսքով, հարթակը նախատեսված է առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող միջին և բարձր որակավորում ունեցող մասնագետների համար: Ուստի ցածր որակավորում ունեցող արհեստավորների հայտարարությունները չեն հրապարակվում:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգի թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը հրապարակվում է ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային էջում ՝ www.azdarar.am հասցեով:

Աշխատաշուկայի, հմտությունների պահանջարկի և կանխատեսումների մասին տեղեկատվությունը կարիերայի ուղղորդման մասնագետները ստանում են վերջերս գործարկված edu2work.am հարթակից:

ԱՍՀ նախարարության Նորք տեխնոլոգիական կենտրոնի կողմից շահագործվում է «Աշխատանք առանց սահմանների - Հայաստան» միասնական որոնողական համակարգը՝ www.workforall.am հասցեով, որը ստեղծվել է Եվրասիական տնտեսական միության անդամ-երկրների համընդհանուր աշխատաշուկային հասանելիություն ունենալու համար: Այն հնարավորություն է տալիս իրականացնել աշխատանք փնտրողների և թափուր աշխատատեղերի որոնում ԵԱՏՄ հինգ երկրների տարածքում՝ Հայաստան, Բելոռուսիա, Ղազախստան, Ղրղզստան և Ռուսաստան:

Որակավորում չպահանջող կամ ցածր որակավորմամբ մասնագետների պահանջարկի մասին տեղեկատվությունը հասանելի է www.list.am կայքում, որում տեղեկատվությունը պաշտպանված և ճշգրտված չէ, ի տարբերություն նախորդիվ առանձնացված հարթակների:

Այսպիսով, սահմանափակ է կարիերայի ուղղորդման նպատակով անհրաժեշտ ստույգ, հավաստի և շարունակաբար թարմացվող ընդհանրական տեղեկատվության հասանելիությունը: Խնդրի լուծման ուղղությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի անդամ են էկոնոմիկայի, ԱՍՀ և ԿԳՄՍ նախարարությունների պատասխանատուները, գործատուների և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Այդ շրջանակում համագործակցություն է մեկնարկել ESCO թիմի պատասխանատուների հետ՝ քննարկելու այն Հայաստանում ներդնելու, ադապտացնելու ուղղությամբ: Քննարկման փուլում է միասնական տեղեկատվական հարթակի ստեղծումը, որտեղ համադրված կլինեն տեղեկատվություն զբաղմունքների, մասնագիտությունների և որակավորումների, հմտությունների մասին:

8.4. Մշտադիտարկումը, գնահատումը և հետադարձ կապը

Լիարժեք և համապարփակ տեղեկատվություն հասանելի է միայն ՄԿՈՒ հաստատություններում կարիերայի ծառայությունների մասով:,Հանրապետության բոլոր 96 ՄԿՈՒ հաստատություններում առկա է կարիերայի ուղղորդման մասնագետի համար նախատեսված հաստիք: Կարիերայի

ուղղորդման ծառայությունները մշտադիտարկվում և գնահատվում են տարին երկու անգամ՝ նախապես սահմանված երկու հիմնական չափանիշների համաձայն: Մշտադիտարկում է իրականացվում ուսանողների հետ տարվող աշխատանքների և շրջանավարտների աշխատանքի ապահովման մասով: Ի տարբերություն այլ համակարգերի, ՄԿՈՒ հաստատություններում կարիերայի ուղղորդման աշխատանքների մոնիթորինգի համար ներդրված է առանձին գործիքակազմ (ներկայացվում է հավելվածով), որով սահմանված ցուցանիշներին պետք է հետևեն մասնագետները: Ըստ այդմ սահմանված է նաև ուսանողների հետ տարվող կարիերայի ուղղորդման տեղեկատվական բազայի առկայությունը՝ գրանցելով ուսանողների հետագիծը: Շրջանավարտների կարիերայի ուղղորդման մոնիթորինգի վերջին ցուցանիշները, որոնք տրամադրվել են ՄԿԿՁ կենտրոնի և ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացված են ստորև.

	2018-2019	2019-2020	Ընդամենը
2019թ. ՄԿՈՒ շրջանավարտների թիվը	7 418	11 000	18 418
Նրանցից՝ 2019թ. կարիերայի ուղղորդման ծառայություններ ստացած	7 218	10 711	17 929
Ընդհանուր (%)	97.30%	97.37%	97.34%

Տվյալները տրամադրվում են ԿԳՄՍ նախարարության համապատասխան ստորաբաժանումների և ԱՍՀՆ ՄԿԿՁ կենտրոնի կողմից՝ կարիերայի զարգացման աջակցման ծառայությունների գնահատման և մոնիտորինգի նպատակով:

Հանրակրթական դպրոցներում համընդհանուր ներդրումը դեռ ընթացքի մեջ, ուստի մոնիթորինգային տվյալները լիարժեք չեն: Բուհերում կարիերայի կենտրոնների գործունեության մասին տեղեկատվությունը հավաքագրվել է սույն հետազոտության շրջանակում՝ յուրաքանչյուր բուհից, և պատկերն ամբողջական չէ, քանի որ ոչ բոլոր բուհերն են արձագանքել հարցմանը: Ինչ վերաբերվում է զբաղվածության ծառայությունների շրջանակում կարիերայի ուղղորդմանը, ապա ՄՍԾ ձևավորմամբ պայմանավորված գործընթացները դեռ նոր են մեկնարկում, նախկինում իրականացված աշխատանքները հիմնականում չեն շարունակվում, կարիք կա ծառայությունների նոր մոդելի ներդրման և մասնագետների վերապատրաստման:

Հայաստանում գործում է 41 պետական բուհ, այդ թվում իրենց մարզային մասնաճյուղերը, 26 ոչ պետական, 3 միջպետական բուհ: Բուհերում կարիերայի կենտրոնների գործունեության մոնիթորինգի նպատակով սույն հետազոտության շրջանակում անցկացված հարցման արդյունքում պարզվել է, որ 20 բուհում (այդ թվում՝ պետական և ոչ պետական, միջպետական) կարիերայի ուղղորդման ծառայություններ մատուցելու համար առկա է առնվազն մեկական հաստիք: Կարիերայի ուղղորդման ծառայությունների իրականացման համար բացակայում է միասնական մոտեցումը: Ծախսերի և ներդրումների մասին տվյալներ ևս հասանելի չեն: Հետևաբար գնահատել հնարավոր չէ:

ՄՍԾ տարածքային կենտրոններում կարիերայի ուղղորդման մասնագետներ դեռևս առանձնացված չեն: Բայց քանի որ կարևոր գործառույթներից է աշխատանք փնտրողների

կարիերայի ուղղորդման ծառայությունների տրամադրումը, ապա համաձայն ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների 2021թ հոկտեմբերի դրությամբ ՄՍԾ տարածքային կենտրոններում տարեսկզբից կարիերայի ուղղորդման ծառայություն է ստացել աշխատանք փնտրողների 22.7%-ը:

Պետք է փաստել, որ ծառայությունների արդյունավետության վրա հիմնված կարիերայի զարգացման աջակցման համակարգի ներդրման համար բյուջետային ծախսերի հաշվարկման առանձին մեխանիզմներ չկան:Կարիերայի զարգացման համակարգի ներդրմանն ուղղված բյուջետային ծախսերի հաշվարկման համար առանձին մեխանիզմներ չկան՝ հիմնված ծառայությունների արդյունվետության վրա: Մեթոդաբանության ապահովման, կադրերի վերապատրաստման և սուպերվիզիայի ուղղությամբ բյուջետային հատկացումներն ուղղված են ԱՍՀ նախարարությանը: Հաշվարկման հիմքում որպես ոչ ֆինանսական ցուցանիշ դիտարկվում է վերապատրաստվողների քանակը (2014-2017թթ՝ 300 մասնագետ, 2018-2021թթ՝ 140 մասնագետ), ուսումնամեթոդական ձեռնարկների կամ ուղեցույցների քանակը (տարեկան 2-ական՝ ծառայությունների մատուցման մոդելներ և մեթոդաբանություն, չափորոշիչներ, ուսումնական ծրագրեր, մոդուլներ, գործիքներ և այլն): Այս ծառայություններն ապահովում է ՄԿԿՁ կենտրոնի անձնակազմը, ըստ անհրաժեշտության, հրավիրված դասավանսողների և փորձագետների հետ միասին: 2013-2017թթ Կենտրոնի հաստիքային միավորները 20-ն, 2018-2021թթ՝ 12-ը (նվազեցումներն իրականացվել են պետական կառավարման համակարգի օպտիմալացման արդյունքում): ՄԿՈՒ համակարգում կարիերայի ուղղորդման ծառայությունների ապահովման նպատակով բյուջետային հատկացումներն ուղղվել են ԿԳՄՍ նախարարություն՝ ապահովելու կարիերայի ուղղորդման մասնագետների լրիվ դրույքով հաստիքի նախատեսումը: Որպես գնահատման ոչ ֆինանսական ցուցանիշ դիտարկվում է յուրաքանչյուր մասնագետի կողմից ծառայություն մատուցած ուսանողների քանակը:

Ներկայումս ՀՀ կառավարությունը շարունակում է իր առաջնահերթություններում կարևորել կրթության և աշխատաշուկայի հավասարակշռմանը, մարդկային կապիտալի ձևավորմանն ուղղված միջոցառումները՝ ՀՀ կառավարության 2021-2026 միջոցառումների ծրագրում նախատեսելով կարիերայի զարգացման համակարգի վերջնական նեդրում: Այն նախատեսում է նաև մոնիթորինգի և գնահատման համակարգի մշակում և ներդրում:

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Կարիերայի զարգացման աջակցության համակարգի բարեփոխումները Հայաստանում իրականացվել են 2012 թվականին, երբ «ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգը» և դրա իրականացման պլանը հաստատվել են ՀՀ կառավարության

կողմից: Համակարգը սահմանվում է հայեցակարգով, որը ներառում է հանրակրթական, մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները և սոցիալական աջակցության հաստատությունները, հատկապես միասնական սոցիալական ծառայությունները և երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունները: ՀՀ ԱՍՀՆ-ն և ԿԳՄՍՆ-ն ակտիվորեն ներգրավված են համակարգի ստեղծման և զարգացման գործընթացում:

Պետական համակարգում ներդրմանն աջակցող հիմնական խաղացողը ՄԿԿԶ կենտրոնն է, որը գործում է ՀՀ ԱՍՀՆ համակարգում: ՄԿԿԶ կենտրոնի հիմնական նպատակներն ու խնդիրներն են կարիերայի ուղղորդման մոդելների և կարիերայի ուղղորդման մեթոդոլոգիաների տրամադրումը, պրակտիկ մասնագետների վերապատրաստումը և վերապատրաստված մասնագետների վերահսկումը: Իր կանոնադրական գործառույթների շրջանակում, հիմնվելով բացահայտված խնդիրների և հաջողված օրինակների վրա, ՄԿԿԶ կենտրոնն առաջարկում է ՀՀ-ում կարիերայի ուղղորդման բարելավման ձևերի և մեթոդների, կարիերայի զարգացման աջակցության քաղաքականության և ռազմավարության վերաբերյալ:

Հայաստանի դպրոցների միայն 21.4%-ն է ներկայումս ապահովում կարիերայի կրթություն 8-ից 11-րդ դասարաններում: Այն իրականացվում է կարիերայի ուղղորդման ակումբների շրջանակներում՝ սահմանված ուսումնական պլանին համապատասխան: Երկրի բոլոր 96 ՄԿՈՒ հաստատությունների ուսանողներին հասանելի են կարիերայի ուղղորդումը և կարիերայի կրթության ծառայությունները: Համալսարանի ուսանողները պետք է դիմեն իրենց համալսարանական կարիերայի կենտրոններին (տարբեր բուհերում դրանք տարբեր անվանումներ ունեն) կարիերայի ուղղորդման ծառայություններ ստանալու համար: Պաշտոնական կրթություն չունեցող անձինք, NEET-ները, մեծահասակները և աշխատաշուկայում անմրցունակ մարդիկ կարող են կարիերայի ուղղորդման ծառայություններ ստանալ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում, որոնք գործում են մայրաքաղաքում և հանրապետության բոլոր մարզերում (49 կենտրոններ): Զբաղվածության պետական գործակալության վերակազմավորումից հետո պետք է մշակվի կարիերայի ուղղորդման նոր մոդել:

Այնուամենայնիվ, Հայաստանում կարիերայի զարգացմանն աջակցող համակարգում բացակայում է մասնագիտական կողմնորոշման մասնագետների որակավորման համակարգ: Հայաստանում կարիերայի ուղղորդման մասնագետների որակավորման, ֆորմալ հմտությունների և գիտելիքների գնահատման չափորոշիչ չկա: Չկա ոչ որակավորման ճանաչման, ոչ էլ հավաստագրման համակարգ:

Ելնելով գործառույթների բաշխումից՝ ֆինանսավորումն իրականացվում է համապատասխանաբար: Մասնավորապես, ԱՍՀՆ-ին հատկացվող միջոցները նախատեսված են պրակտիկ մասնագետների շարունակական վերապատրաստման վերապատրաստման մոդուլների և մեթոդոլոգիաների մշակման համար, իսկ ԿԳՄՍՆ-ին հատկացվող միջոցները նախատեսված են կարիերայի ուղղորդման անձնակազմի պաշտոնների համար աշխատավարձերի վճարման համար: Բացի այդ, միջոցներ են հատկացվել նաև ոչ պաշտոնական

վերապատրաստման դասընթացների միջոցով երիտասարդների իրազեկվածության և ներգրավվածության բարձրացմանը կարիերայի ուղղորդման ծառայություններում:

Հայաստանում հեռավար տրամադրվող և թվային ծառայությունների հասանելիությունը դեռևս սահմանափակ է: Այս առումով բազմաթիվ նախաձեռնություններ պետք է իրականացվեն:

Հայաստանում ամբողջ կյանքի ընթացքում կարիերայի զարգացման աջակցության ներդրումը շարունակում է մնալ Հայաստանի կառավարության առաջնահերթությունը և երաշխավորված է կառավարության 2021-2026թթ. ծրագրով: Բայց դեռ շատ խնդիրներ կան, որոնք խանգարում են համակարգի համախմբմանը: Շատ նախաձեռնություններ պետք է իրականացվեն, ձեռքբերումները պետք է լինեն շարունակական, մարտահրավերները՝ ընդունելի և ընդհանուր առմամբ, կարիերայի ուղղորդման ծառայությունները պետք է հասանելի լինեն բոլորի համար՝ անկախ տարիքից, սոցիալական և աշխատանքային կարգավիճակից:

Պետք է դիտարկել երեք առաջնահերթ ոլորտներ.

- Կարիերայի ուղղորդման ծառայությունների ինտեգրում Միասնական սոցիալական ծառայության համակարգում
- Կարիերայի ուղղորդման մասնագետների մասնագիտացում (որակավորման համակարգի մշակում)
- Օգտագործողների բոլոր խմբերի համար որակյալ տեղեկատվության հասանելիություն

Մանրամասն առաջարկություններ

Հանձնարարականները վերջնական լուծումներ չեն ներկայացնում, այլ միտված են քաղաքականության մշակմանը և գործնական քննարկումների ուղղորդմանը: Դրանք բխում են սույն զեկույցից և ընդգրկում են համակարգի, ծառայություններ մատուցողի և կարիերայի մասնագետի մակարդակները.

Քաղաքականության շրջանակը

Կարճաժամկետ

- Ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ հստակ լիազորություններով և ներգրավելով նախարարությունները (կրթության, աշխատանքի, երիտասարդության, էկոնոմիկայի, սոցիալական քաղաքականության, գյուղատնտեսության, ֆինանսների, տարածքային կառավարման ոլորտները համակարգող), գործատուների, արհմիությունների, հետազոտական կառույցների և ՀԿ-ների մասնակցությամբ՝ համընդհանուր վստահություն և փոխըմբռնում ձևավորելու նպատակով, ինչպես նաև ներգրավել նրանց **կարիերայի զարգացման աջակցման ազգային համակարգի վերանայման արդյունքների** քննարկման գործընթացում, որն ուղղված է.

(1) Փոփոխության ազգային տեսության (ToC)[24] մշակում՝ որպես կարիերայի զարգացման աջակցման ազգային համակարգի զարգացման երկարաժամկետ տեսլական, ինպես նաև գործողությունների պլան(ներ)ի մշակում՝ առաջնահերթություն տալով որոշակի բարեփոխումների նախաձեռնություններին,

(2) Անհատների, կազմակերպությունների, նախարարությունների, ոլորտների և կրթության մակարդակների շրջանակաների համար փոխադարձ ընդունելի կարիերայի ուղղորդման ցանկալի արդյունքների մշակում:

Միջնաժամկետ և երկարաժամկետ

- Մշակել կարիերայի ուղղորդման միջոլորտային ռազմավարություն՝ կրթությունն ու զբաղվածությունը մեկ հարկի տակ բերելով, որին կմասնակցեն շահագրգիռ կողմերը ՝նախարարությունները (կրթության, աշխատանքի, երիտասարդության, էկոնոմիկայի, սոցիալական քաղաքականության, գյուղատնտեսության, ֆինանսների, տարածքային կառավարման ոլորտները համակարգող), գործատուները, արհմիությունները, հետազոտական կառույցները և ՀԿ-ները.

Համակարգում և համագործակցում

Կարճաժամկետ

- Մշակել միջգերատեսչական աշխատանքային խմբի տարեկան գործողությունների ծրագիր՝ 2022 թվականից սկսած, որը կապահովի սոցիալական գործընկերների և գործատուների զգալի ներգրավվածությունն ազգային մակարդակում:

- Հիմնվելով ՄԿԿԶ կենտրոնի ուժեղ մանդատի/դերի վրա՝ ոչ միայն պահպանել այն, այլև ընդլայնել դրա ինտեգրացիոն գործունեությունը և նպաստել կարիերայի զարգացման աջակցման ազգային համակարգի զարգացմանը տարբեր ոլորտներում և շահառուների խմբերի համար: Ինչևէ, այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է Կենտրոնին տրամադրել ավելի շատ ռեսուրսներ (տես ավելի մանրամասն առաջարկությունները ստորև): Համակարգման և համագործակցության հետ կապված պետք է նշել, որ Կենտրոնի ռեսուրսները կարելի է մեծացնել ՄԿԿԶ կենտրոնի և համալսարանների միջև համագործակցության միջոցով, որտեղ համալսարաններն իրենց հետազոտական անձնակազմով կարող են մասնավորապես ստանձնել կրթության, վերապատրաստման և մենթորության/մոնիթորինգի դերը: Բացի այդ, մանկավարժներին վերապատրաստող հաստատությունները կարող են դառնալ ակտիվ գործընկերներ կրթության և վերապատրաստման գործընթացում: Պետք է դիտարկել՝ արդյոք ՄԿԿԶ կենտրոնը կարող է լինել այն մարմինը, որը գործնականում կհամակարգի ազգային միջգերատեսչական աշխատանքային խումբը (ինչպես առաջարկված է վերևում):

[24] Տե՛ս էջ 17-ը: https://www.etf.europa.eu/en/publications-and-resources/publications/developing-national-career-development-support-systems

- Պահպանել ՄԿԿՁ կենտրոնի առաջատար դերը, որպես մեթոդաբանություններ սահմանելու և մշակելու, կարիերայի ուղղորդման մասնագետներին վերապատրաստելու, մշտադիտարկելու և աջակցություն տրամադրելու մեջ, և թույլ տալ, որպեսզի ՄՍԾ Աշխատուժի զարգացման և կարիերայի ուղղորդման բաժինը լինի կարիերայի ուղղորդման աշխատանքների իրականացնողը տարածքային կենտրոններում: Մեթոդաբանության մշակման գործընթացում անհրաժեշտ է խուսափել նոր կառույցների ներգրավումից, քանի որ այն կհանգեցնի նոր մասնատման:

- Կարիերայի ուղղորդման ծառայություններ տրամադրող մասնավոր և քաղաքացիական հասարակության կառույցների համար սահմանել ստանդարտների համապատասխանեցում ՄԿԿՁ կենտրոնի կողմից մշակված չափանիշներին՝ մասնավոր հատվածում ձևավորվող փորձի որակը ապահովելու նպատակով (հավատարմագրում և այլն):

Միջնաժամկետ և երկարաժամկետ

Վերանայել ՄԿԿՁ կենտրոնի իրավական կարգավիճակը (այժմ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում գործող ՊՈԱԿ-ի մասնաճյուղ)՝ ստեղծելով Կարիերայի զարգացման աջակցման համակարգի հիմնադրամ, որը կգործի ոչ միայն պետական միջոցներով, այլ նաև մասնավոր ներդրումներով՝ ակտիվորեն ներգրավելով ոլորտային գործատուների:

Ծառայություններ

Կարճաժամկետ

- Առաջնահերթություն տալ ՄՍԾ-ում կարիերայի զարգացման աջակցման ծառայությունների ձևավորմանը և իրականացմանը, որի միջոցով ծառայությունները կդառնան «համընդհանուր» և հասանելի կլինեն յուրաքանչյուր անձի:

- ՄՍԾ-ի կարիերայի ուղղորդման նոր մոդելի մեջ (ծառայություններ զբաղվածության կենտրոններում) ինտեգրել հատուկ (իրազեկման) միջոցառումներ, նախատեսված այնպիսի խմբերի համար, ինչպիսիք են չսովորող և չաշխատող՝ NEET խմբի երիտասարդները, ոչ ֆորմալ տնտեսության մեջ աշխատող մարդկանց ֆորմալ տնտեսություն ուղղորդելը, կամ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքներ նախատեսող ծրագրերը:

- Վերանայել և լրամշակել կարիերայի ուսուցման ծրագրերը տարրական, հիմնական, միջին և միջնակարգ դպրոցների համար. Ընդլայնել ուսուցման արդյունքները կարիերայի կառավարման հմտությունների զարգացման միջոցով, որն ուղղված կլինի այնպիսի թեմաներին, ինչպիսիք են՝ «Բացահայտում եմ ինձ», «Բացահայտում եմ սովորելու աշխարհը», որին զուգահեռաբար՝ «Բացահայտում եմ աշխատանքի աշխարհը» (ներառյալ մասնագիտությունների ներկայացումը): Սա առաջին հերթին կնպաստի անձնային աճին և ձեռնարկատիրական, քննադատական, ինքնորոշման և ինքնաներկայացման մտածելակերպի ձևավորմանը՝ զուգահեռաբար զարգացնելով աշխատանքային

կենսագրական կազմելու, թափուր աշխատատեղեր գտնելու և այլ հմտություններ: Սա կօգնի լուծել հիմնական և միջնակարգ կրթություն ունեցող երիտասարդների բարձր գործազրկության խնդիրը և կրթություն ստացողներին կպատրաստի ապագային:

- Հանրակրթությունում, կարիերայի կրթության և կարիերայի ուղղորդման աշխատանքներում ավելացնել աշխատանքի վրա հիմնված ուսուցման հնարավորությունները, աշխատանքի ստվերում նախաձեռնությունները (ընդունված գործընթաց է, երբ ուսանողը որոշ ժամանակ անցկացնում է մասնագետի հետ, ով խորհրդատվություն է տալիս ուսանողին իր մասնագիտության և ապագա զբաղվածության մասին), ուսանողական ընկերությունները, դերային հարցազրույցներ և այլն, քանի որ մասնագիտական միջավայրում իրական փորձ ձեռք բերելը ստեղծում է տարբեր ուսուցման հնարավորություններ և նպաստում հետաքրքրությունների ու ապագա մասնագիտական ինքնության զարգացմանը:

- Ապահովել, որ ՄԿՈՒ և բարձրագույն ուսումնական հաստատությունների կարիերայի ուղղորդման մասնագետների կողմից դպրոցներում տրամադրվող ծառայությունները հետևեն այն մոտեցմանը, որ աշակերտներին տրամադրվի հիմնավոր տեղեկատվություն ապագա զբաղվածությանն ուղղված կրթական ծրագրերի որակի և կարիերայի հնարավոր ուղիների վերաբերյալ՝ հիմնված աշխատաշուկայի հետազոտությունների, հետագծային ուսումնառության արդյունքների (tracer study result) և այլնի վրա: Ձեռնպահ մնալ ՄԿՈՒ հաստատությունների և նրանց կողմից առաջարկվող ուսումնական ծրագրերի մարկետինգից/գովազդից, ինչը բոլորովին չի նպաստում հավաստի տեղեկացված լինելով որոշում կայացնելուն:

- Ապահովել, որ ՄԿՈՒ և բարձրագույն ուսումնական հաստատությունների կարիերայի ուղղորդման մասնագետների կողմից դպրոցներում մատուցվող ծառայությունները տրամադրվեն այլ ուսումնական և վերապատրաստման կենտրոնների, զբաղվածության պետական ծառայություն իրականացնող կառույցի, գործատուների, ծնողների և արհմիությունների հետ սերտ համագործակցությամբ՝ ապագա ուսանողներին համապարփակ տեղեկատվություն տրամադրելու նպատակով և հանդես չգալ որպես մեկուսացված կառույց: Ակնհայտորեն կարելի է փաստել, որ ազգային միջգերատեսչական աշխատանքային խմբի շրջանակներում առկա համագործակցությունը ամուր հիմք է ստեղծում մարզային և տեղական համագործակցության համար:

- Համագործակցել մեծահասակների ուսուցման հաստատությունների հետ (պետական, ՀԿ-ներ, մասնավոր կառույցներ), որոնք հնարավորություններ են ստեղծում մուտք գործել «սովորելու աշխարհ»՝ կյանքի հմտությունների ուսուցման և կարիերայի կրթության ծրագրերի միջոցով՝ նախատեսված հետագա ուսուցման մեջ ոչ մրցունակ մեծահասակների, գործազուրկ կամ մեկուսացված խմբերին կրկին ներգրավելու համար: Այս մոտիվացիոն քայլերը կարող են ձևավորել անհատական զարգացման ծրագիր, որը կարող է նպաստել մասնագիտական կարճաժամկետ ուսուցման և այլն:

- Ծնողների ներգրավվածությունը դարձնել ՄԿԿՁ կենտրոնի մեթոդաբանության պարտադիր մաս՝ օգտագործելով առանձին դպրոցների արդեն գոյություն ունեցող անհատական փորձը:

Միջնաժամկետ և երկարաժամկետ

- ՄԿՈՒ հաստատությունների կարիերայի կենտրոններում կիրառվող մոտեցումը ինտեգրել հանրակրթական հաստատություններում, զուգահեռաբար տրամադրել կարիերայի կրթություն բոլորին (կարիերայի ուղղորդման ակումբներ), կարիերայի ուղղորդման ծառայությունները նախատեսել նրանց համար, ովքեր ունեն ավելի մեծ աջակցության կարիք: Սա կարելի է իրականացվել նաև ՄՍԾ տարածքային կենտրոնների հետ համագործակցությամբ, որոնք կարող են պարբերաբար այցելել դպրոցներ ծառայություններ մատուցելու նպատակով:
- Կարիերայի ուղղորդման մեթոդաբանությունները դարձնել ավելի բազմազան՝ բավարարելու տարբեր խմբերի կարիքները և դուրս գալ կարիերայի ուղղորդման շրջանակից՝ հիմնվելով անձի անձնային առանձնահատկությունների վրա:
- Զարգացնել առանցքային հմտությունները տարրական դպրոցից սկսած՝ կարիերայի կառավարման հմտությունների հետ մեկտեղ, քանի որ այս հմտություններին հնարավոր չէ տիրապետել կարիերայի ուղղորդման ընթացիկ ուսումնական ծրագրի համար նախատեսված մի քանի ժամում: Առանցքային հմտությունները զարգացնելու համար երկար ժամանակ է անհրաժեշտ, որից հետո այս հմտությունները դառնում են մարդու վարքագծի մի մասը:

Ֆինանսավորում

Կարճաժամկետ

- Սահմանել մեծ առաջնահերթություն ունեցող ֆինանսավորման աղբյուրները՝ ավելացնելու ՄԿԿՁ կենտրոնի գործունեությանն ուղղված կայուն ֆինանսավորումը որպես կարիերայի զարգացման աջակցման ազգային միասնական համակարգ կառուցելու առանցքային դերակատար:
- Առանձնացնել ֆինանսավորման աղբյուրներ ՓՄՁ-ների աշխատակիցների կարիերայի զարգացմանն աջակցելու համար թվայնացման և կանաչ տնտեսությանն ուղղված քաղաքականության համատեքստում:

Միջնաժամկետ և երկարաժամկետ

- Ապահովել կայուն ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից կարիերայի ուղղորդման առնվազն մեկ մասնագետի համար բոլոր 96 ՄԿՈՒ հաստատություններում, հանրակրթական բոլոր հաստատություններում (տարրական, հիմնական, միջնակարգ և ավագ):

Հասանելիություն

Կարճաժամկետ

- Հետազոտել ՓՄՁ-ների աշխատակիցների կարիերայի զարգացման աջակցման անհրաժեշտությունը, վերանայել առկա և բացահայտել կարիերայի զարգացմանն աջակցելու հնարավոր միջոցները՝ գործատուների միությունների և արհմիությունների հետ սերտ համագործակցությամբ՝ անդրադառնալով նաև նրանց դերին:
- Բացահայտել, թե տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ինչպես կարող է նպաստել ծառայությունների հասանելիության բարձրացմանը:

Միջնաժամկետ և երկարաժամկետ

- Առաջարկել պետական աջակցություն ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատող մարդկանց զբաղվածությանն ուղղված նոր ծրագրի համար:

Տեխնոլոգիաների կիրառում

Կարճաժամկետ

- Բացահայտել՝ ինչպես կարելի է կարիերայի զարգացման աջակցման համակարգը արդյունավետ կերպով բարելավել ՏՏ-ի կիրառման միջոցով՝ աջակցելու ավանդական/մշտական ծառայություններին (օրինակ՝ օգտագործել շահագրգիռ կողմերի միմյանց կապելու ներուժը՝ անհատներ-գործատուներ, դպրոց-գործատուներ, կարիերայի խորհրդատուներ-անհատներ և այլն: Ստեղծել անձ/կարիերայի/հնարավորությունների բացահայտելու, որոշումներ կայացնելու հմտություններ ձեռք բերելու հնարավորություններ, հասանելիության մեծացում մեկ պատուհանի տեղեկատվության, աշխատաշուկայի մասին տեղեկատվության տրամադրում, և այլն), դրանով իսկ ապահովել տարբեր կողմերի ՏՏ ծառայությունների փոխգործունակությունը, և օգտագործել ՏՏ ներուժը կրթության, զբաղվածության, երիտասարդության և այլ ոլորտներում կարիերայի զարգացման աջակցության համակարգի տարբեր տարրերը միմյանց կապելու համար՝ որպես արդյունավետությունը մեծացնելու ինտեգրացիոն գործոն:
- Առանձնացնել առկա լրատվամիջոցները, որոնք կիրառվել են նաև համաճարակի ժամանակ (ռադիո, հեռուստատեսություն և այլն) և կիրառել կարիերայի ուղղորդման ծառայությունների արդյունավետ մատուցման համար:
- Ապահովել ԱՍՀՆ-ի կողմից նախագծված e-borsa հարթակում տարբեր խմբերի օգտատերերի կարիքների բավարարումը:
- Ապահովել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հայտարարված թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությանը, ինչպես նաև ցածր որակավորում ունեցող աշխատուժի պահանջարկի ներառումը Edu2Work հարթակում:

Միջնաժամկետ և երկարաժամկետ

- Ներդրումներ կատարել SS ոլորտի ենթակառուցվածքներում, օրինակ՝ հասարակական վայրերում տեղադրել անլար տեղական տարածքի ցանցի կետեր (WLAN), ինչպիսիք են գյուղերի հրապարակներում, որպեսզի ինտերնետը հասանելի լինի նաև հեռավոր վայրերում:
- Ապահովել աշխատաշուկայի մասին պարբերաբար թարմացվող տեղեկատվության հասանելիությունը օգտատերերի տարբեր խմբերի (շահառուներ, կարիերայի խորհրդատուներ, քաղաքականություն մշակողներ և այլն) համար: Լավագույն տարբերակը միասնական տեղեկատվական հարթակի գործարկումն է, որտեղից հասանելի կլինի ստուգված և մշտապես թարմացվող տեղեկատվությունը:

Որակի ապահովում, մասնագիտացում և շարունակական բարելավում

Կարճաժամկետ

- Կարևորելով առաջնահերթությունը՝ ՄԿԿՁ կենտրոնի ղեկավարությամբ մշակել կարիերայի ուղղորդման մասնագետների որակավորման/զբաղմունքի չափանիշները ոլորտի բոլոր մասնագետների համար (կրթություն, աշխատաշուկա, երիտասարդություն, մասնավոր հատված և այլն), որը նույնպես պետք է հիմք ստեղծի նախնական/ոչ/ոչ ֆորմալ ուսուցումը ճանաչելու համար:
- Ապահովել, որ մանկավարժներին վերապատրաստող ուսումնական հաստատությունները նույնպես ներգրավված լինեն կարիերայի ուղղորդման մասնագետների կարողությունների շարունակական զարգացման գործընթացում՝ սերտորեն համագործակցելով ՄԿԿՁ կենտրոնի հետ՝ կիիմնվեն որակավորման/զբաղմունքի նկարագրիչի չափանիշների վրա: Այսպիսով, բոլոր առարկայական ուսուցիչները կարող են անցնել ուսուցում և զուգահեռ ավելի շատ վերապատրաստված մասնագետներ կլինեն:
- Կիրառել ուսուցում ուսուցանողների համար (ToT) մոտեցումը կարիերայի ուղղորդման մասնագետների վերապատրաստման գործընթացում՝ ուսուցման ծավալը և աջակցության տրամադրումը մեծացնելու նպատակով. Օրինակ՝ բացահայտել քաղաքային և մարզային մոտիվացված մասնագետներին, ովքեր վերապատրաստում են այլ մասնագետների՝ ընդլայնելով ՄԿԿՁ կենտրոնի վերապատրաստումների ազդեցությունը:
- Կարիերայի խորհրդատուի զբաղմունքը ներառել ՀՀ զբաղմունքների դասակարգչում:
- Ընդլայնել ՄԿՈՒ հաստատությունների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի զարգացման մասնագետների գործառույթների շրջանակը (հետագայում նաև հանրակրթությունում)՝ ավելացնելով համակարգման հիմնական պարտականությունները՝ ապահովել ներգրավվածություն և համագործակցություն ներքին (առարկայական ուսուցիչներ և այլն) և արտաքին (գործատուներ, աշխատաշուկայի մասին տեղեկատվություն տրամադրող պետական հաստատություններ, ծնողներ և այլն)

շահագրգիռ կողմերի հետ, որոնք ներգրավված են կարիերայի կրթության և կարիերայի ուղղորդման գործընթացում:

- Ներգրավել բոլոր բուհերին համատեղ վերանայելու կարիերայի կենտրոնների և բուհերի կարիերայի ուղղորդման մասնագետների գործունեությունն ու գործառույթները՝ համաձայն «Աշխատի'ր, Հայաստան» ռազմավարության 3.-ի Գործողության, 3.1. «Բուհերի կարիերայի կենտրոնների գործունեության սկզբունքների վերանայում» (2020-2023) կետի, և մշակել համակարգված մոտեցում ծառայությունների մասնագիտացման համար: Կարիերայի ուղղորդման բոլոր մասնագետները պետք է համապատասխանեն որակավորման/ զբաղմունքի չափանիշներին: Գործառույթները պետք է համապատասխանեցվեն համընդհանուր նպատակին՝ աջակցելու անհատներին կարիերայի կառավարման հմտությունների զարգացման գործում, համակարգելու ներքին և արտաքին շահագրգիռ կողմերին կարիերայի ուղղորդման և կարիերայի կրթության ծառայությունների տրամադրման գործում և այլն:

Միջնաժամկետ և երկարաժամկետ

- Մշակել գնահատման մեթոդներ և գործիքներ (օրինակ՝ պորտֆոլիոներ)՝ չափելու կարիերայի կառավարման հմտությունների վերաբերյալ ուսուցման ծրագրերի արդյունքները:
- Պաշտոնապես ճանաչել ՄԿԿԶ կենտրոնի կողմից իրականացվող կարիերայի ուղղորդման մասնագետների նախնական և շարունակական ուսուցման արդյունքները ՈԱԾ-ի շրջանակում: Օրինակ՝ միկրո-հավատարմագրի տրամադրում (խուսափել միայն մասնակցության վկայական տրամադրելուց):
- Բոլոր կրթական հաստատությունների համար պարտադիր դարձնել կարիերայի հետագծման ուսումնասիրությունները՝ որպես կարիերայի ուղղորդման աշխատանքին ծանոթանալու գործիք:
- Վերանայել և վավերացնել կարիերայի զարգացման աջակցման քաղաքականության և ծառայությունների տերմինաբանությունը՝ հաշվի առնելով միջազգային չափանիշներն ու եզրույթները:
- Ներդնել կարիերայի կրթության և կարիերայի ուղղորդման մոնիտորինգի և գնահատման համակարգ հանրակրթության ոլորտում՝ դպրոցներում կարիերայի ուղղորդման և կարիերայի կրթության արդյունավետությունը գնահատելու նպատակով՝ դիտարկելով (ա) ներդրումների վերաբերյալ տվյալները, ծախսերը, մասնագետների թիվը, կարիերայի ուղղորդման և կարիերայի կրթություն ծառայություններ տրամադրող տարրական, միջին և միջնակարգ հաստատությունների թիվը, ինչ ձևաչափով են մատուցվում ծառայություններ (միջառարկայական, արտադասարանական, որպես առանձին առարկա, դպրոցում գործող կարիերայի կենտրոններում), առցանց ծառայությունների քանակը և

մատուցման ձևը (մեկ պատուհանի սկզբունքով, տարբեր առաջարկները շահագրգիռ կողմերի կայքերում դիտարկելով, տարբեր հավելվածների օգտագործմամբ, ինչ է առաջարկվում առցանց, օրինակ՝ ինքնուրույն ուսուցում, աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության կիրառում, աշխատանքի առաջարկներ, աշխատանքի միջազգային առաջարկներ և այլն); (բ) ծառայությունների արդյունքների վերաբերյալ տվյալներ, ինչպիսիք են միջամտությունների քանակը և տեսակը, հաճախորդների թիվը և տեսակը (դպրոցների և մասնագիտական ուսումնական ծառայությունների համար և այլն) և (գ) արդյունքների վերաբերյալ տվյալները, ներառյալ՝ կրթության վերջնարդյունքները, աշխատանքային կարգավիճակի փոփոխությունները, ուսուցման և կրթության մեջ անցումները, աշխատանքային կարգավիճակի փոփոխությունները, դիտարկումը ՄԿՈՒ հաստատություններում մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների:

- Ընդլայնել ՄԿՈՒ հաստատությոնների ցուցանիշները՝ ավելացնելով արդյունքային ցուցանիշներ:
- Ապահովել ՄԿՈՒ, բարձրագույն ուսումնական հաստատությունների և հանրակրթության մշտադիտարկման տվյալների հասանելությունը միջգերատեսչական աշխատանքային խմբին՝ վերլուծություններ իրականացնելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Մասնագիտական ուսումնական հաստատության Կարիերայի ստորաբաժանումը (այսուհետև՝ Ստորաբաժանում) ստեղծվում է ուսումնական հաստատության տնօրենի հրամանով և պատասխանատու է ուսանողների կարիերայի արդյունավետ ուղղորդման ծառայությունների մատուցման համար:

2. Ստորաբաժանումը կարիերայի ուղղորդման գործառույթների շրջանակում համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Կենտրոն), «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (այսուհետև՝ ԶՊԾԳ) մարզային և տարածքային կենտրոնների, սոցիալական գործընկերների, համապատասխան պետական և մասնավոր այլ կազմակերպությունների հետ:

3. Ստորաբաժանման մասնագետի/ների (կարիերայի խորհրդատու) վերապատրաստումն ու ծառայությունների մատուցման մեթոդաբանության ապահովումն իրականացնում է Կենտրոնը:

4. Ստորաբաժանման աշխատանքները պլանավորում և իրականացնում է կարիերայի խորհրդատու մասնագետը, իսկ նրա բացակայության դեպքում՝ տնօրենի հրամանով կամ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող մասնագետը:

5. Ստորաբաժանման կանոնակարգը հաստատում է մասնագիտական ուսումնական հաստատության Խորհուրդը:

6. Ստորաբաժանումն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է տնօրենի կողմից հաստատվող տարեկան աշխատանքային ծրագրերով:

II. ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Ստորաբաժանման հիմնական նպատակն է՝ կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության, կարիերայի կրթության և ուղղորդման ծառայությունների մատուցման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանն ու կարիերայի պլանավորման հմտությունների ձևավորմանը:

8. Ստորաբաժանումն իրականացնում է հետևյալ գործառույթները

ա. ուսանողներին կարիերայի տեղեկատվության, խորհրդատվության և ուղղորդման ծառայությունների մատուցում անհատական եղանակով,

բ. ըստ անհրաժեշտության, այցելուի անձնային որակների, նախասիրությունների, հմտությունների բացահայտում՝ հոգեչափական մեթոդների (թեստավորում, զրույց, դիտարկում) կիրառմամբ (վերջնարդյունքին միտված անհատական ծրագրի կազմում),

գ. կրթության և ուսուցման, տնտեսության գերակայությունների, աշխատաշուկայի վերլուծությունների և կանխատեսումների (տեղական, մարզային, հանրապետական և միջազգային) մասին տեղեկատվության հավաքագրում և ուսանողների շրջանում հրապարակում՝ տպագիր և առցանց եղանակով,

դ. առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելու հմտությունների զարգացմանն ուղղված խմբային (ոչ ֆորմալ ուսուցման ծրագրերի միջոցով) և անհատական ծառայությունների մատուցում,

ե. կարիերայի ռեսուրսների գրադարանի (ուսանողների, շրջանավարտների, կրթական կազմակերպությունների, գործընկերների, գործատուների տվյալներ) ստեղծում և շահագործում,

զ. ինքնասպասարկման եղանակով թափուր աշխատատեղերի, կամավորական և հասարակական աշխատանքի որոնման հնարավորությունների ստեղծում և ծանուցում,

է. ակտիվ միջոցառումների՝ սեմինարների, աշխատաժողովների, կլոր-սեղան քննարկումների, դասախոսությունների, բաց դասերի, ոչ ֆորմալ դասընթացների, տոնավաճառների և ցուցահանդեսների կազմակերպում և ծանուցում,

ը. զբաղվածության պետական ծրագրերից օգտվելու նպատակով աշխատանք փնտրող ուսանողների ուղղորդում ԶՊԾԳ մարզային և տարածքային կենտրոններ,

թ. սոցիալական գործընկերների՝ գործատուների, արհմիությունների ներգրավում ուսանողների կարիերայի խորհրդատվության կազմակերպման աշխատանքներում,

ժ. վարչական աշխատանքների իրականացում.

1) ստորաբաժանման գործունեության պլանավորում և կառավարում,

2) հաստատության այլ ստորաբաժանումների, դասախոսների և մյուս համապատասխան աշխատողների հետ մշտական կապի պահպանում,

3) վարչարարության վարում, հաշվետվությունների կազմում, տվյալների գրանցում և այլն,

4) ներքին և արտաքին հաղորդակցման ապահովում, այդ թվում՝ ստորաբաժանման աշխատանքների հրապարակում ուսանողների և հանրության լայն շրջանակի համար:

III. ՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

9. Ստորաբաժանումը՝

ա. ունի աշխատանքների կազմակերպման և ուսանողների անհատական ծառայությունների մատուցման համար առանձին տարածք (սենյակ, սրահ և այլն),

բ. ունի հաստատության սրահներից մեկում՝ տեսանելի վայրում զետեղված պարբերաբար թարմացվող տեղեկատվական տախտակ,

գ. համալրված է ինչպես վարչական աշխատանքների իրականացման, այնպես էլ ինքնասպասարկման եղանակով ուսանողների կարիերայի կրթության և տեղեկատվության ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ գույքով և սարքավորումներով,

դ. ունի ուսանողների հետ համապատասխան աշխատանքի մեթոդաբանություն:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ (ԿԱՐԻԵՐԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության մասնագիտական ուսումնական հաստատության կարիերայի ստորաբաժանման պատասխանատուին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է հաստատության տնօրենը:

2. Սույն պաշտոնում կարող է նշանակվել այն գործունակ չափահաս անձը, որը բավարարում է սույն նկարագրի 6-ից 9-րդ կետերով սահմանված պահանջներին:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն անմիջականորեն ենթակա և հաշվետու է հաստատության տնօրենին:

III. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4. Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն ապահովում է կարիերայի արդյունավետ ուղղորդման ծառայությունների մատուցումն ուսանողներին: Այդ ծառայություններն ընդգրկում են երեք հիմնական շրջանակ՝

   ա. **Տեղեկատվություն**. ճշգրիտ և թարմ տեղեկատվության տրամադրում ուսանողին նրա կարիերայի (մասնագիտության, մասնագիտական ուսումնական հաստատության, զբաղմունքի, աշխատատեղի և այլն) հնարավորությունների, մասնագիտական առաջխաղացման ուղիների և ընտրության ենթակա տարբերակների, ինչպես նաև այն մասին, թե որտեղ և ինչպես կարելի է գտնել անհրաժեշտ աջակցություն և խորհրդատվություն.

   բ. **Խորհրդատվություն**. հոգեբանամանկավարժական տարբեր մեթոդների կիրառմամբ խորհրդատվության տրամադրում՝ նպատակ ունենալով օգնել ուսանողին ի մի բերելու, հասկանալու, մեկնաբանելու տեղեկատվությունը և այն կիրառելու սեփական իրադրությանը համապատասխան:

   գ. **Ուղղորդում**. անաչառ և անկողմնակալ կողմնորոշման ծառայության տրամադրում և մասնագիտական աջակցություն՝ նպատակ ունենալով օգնել ուսանողին ինքնորոշվել, հասկանալ իր անձնային հնարավորությունների և նախասիրությունների անհամապատասխանության պատճառները, հաղթահարել խոչընդոտները, լուծել կոնֆլիկտները, ձեռք բերել նոր տեսակետներ և ունենալ առաջընթաց:

IV. ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուի հիմնական գործառույթներն են՝

ա. տեղեկատվախորհրդատվական աշխատանքների իրականացումը, որի շրջանակներում Խորհրդատուն՝

1) ուսանողների հետ անցկացնում է տեղեկատվախորհրդատվական աշխատանքներ անձնային և աշխատանքային նախասիրություններն ու հակումները բացահայտելու նպատակով,

2) կիրառում է ուսանողների անձնային և մասնագիտական կարողություններն ու հմտությունները բացահայտող մեթոդներ,

3) ուղղորդում է կարիերայի ընտրության և պլանավորման գործընթացում,

4) տրամադրում է տեղեկատվություն աշխատաշուկայում առկա և կանխատեսելի թափուր աշխատատեղերի վերաբերյալ,

5) տրամադրում է տեղեկատվություն գործատուների պահանջների վերաբերյալ,

6) տրամադրում է տեղեկատվություն մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթություն և ուսուցում իրականացնող այլ կազմակերպություններում ուսուցման պայմանների և հնարավորությունների, վերամասնագիտացման պայմանների և կարգերի վերաբերյալ,

7) խմբային դասընթացների միջոցով նպաստում ուսանողների աշխատանքային հարցազրույցի ներկայանալու, մրցունակ կենսագրական կազմելու, աշխատանք փնտրելու, աշխատանքային միջավայրում ինքնահաստատվելու, աշխատանքային և մասնագիտական հմտությունները զարգացնելու, աշխատանքային առաջընթաց ունենալու և այլ հմտությունների զարգացմանը,

8) հետադարձ կապ է ապահովում ուսանողների և շրջանավարտների հետ:

բ. աջակցությունը զբաղվածության ապահովմանը, որի շրջանակներում Խորհրդատուն՝

1) համագործակցում է գործատուների հետ առկա և կանխատեսելի թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և ուսանողներին տրամադրելու նպատակով,

2) գործատուների աջակցությամբ ուսանողներին և շրջանավարտներին հնարավորություն է ապահովում կամավոր աշխատանքի միջոցով ամրապնդել մասնագիտական ուսումնական հաստատություններում ձեռք բերված գիտելիքները,

3) աջակցում է գործատուներին ուսանողներին աշխատանքի ընդունելու գործում՝ տարածելով հայտարարություններ, հավաքելով աշխատանքային կենսագրականներ, ըստ համապատասխանության ուղղորդում է ուսանողներին գործատուների մոտ,

4) կազմակերպում է գործատուին ներկայանալու գործընթացը:

բ. վարչական աշխատանքների կատարումը, որի շրջանակներում Խորհրդատուն՝

1) վարում է ուսանողների [կրթական և աշխատանքային] հետագծերի վերաբերյալ վիճակագրություն և տվյալներ,

2) սահմանված կարգով մշակում է մշտադիտարկման զեկույցներ,

3) սահմանված կարգով իրականացնում է այլ համապատասխան գործառույթներ:

V. ՊԱՀԱՆՁՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ, ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն պետք է ունենա բարձրագույն կրթություն՝ նախընտրելի է հոգեբանի, հոգեբան-մանկավարժի, սոցիալական աշխատողի որակավորմամբ և գերազանց տիրապետի գրական հայոց լեզվին:

7. Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն պետք է տիրապետի գիտելիքներ հետևյալի մասին՝

ա. մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտը կարգավորող իրավական ակտեր, մասնավորապես՝ ՀՀ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ ԿԳ նախարարի հրամաններ և այլն.

բ. տեղական, մարզային, ազգային և միջազգային աշխատաշուկաների ներկա և կանխատեսվող զարգացումներ.

գ. առանձին զբաղմունքներին ներկայացվող պահանջներ.

դ. կարիերայի ուղղորդման տեսություն և պրակտիկա.

ե. երիտասարդների համար զբաղվածության պետական երաշխիքներ,

զ. սոցիալական աշխատանքի, հոգեբանամանկավարժական մեթոդները և դրանց կիրառումը,

է. անձնակազմի և վարչական աշխատանքի կառավարում:

8. Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն պետք է տիրապետի հետևյալ մասնագիտական և առանցքային հմտություններին՝

ա. անհատական և խմբային աշխատանքների կազմակերպման և անցկացման.

բ. քոուչինգի և ֆասիլիտացիայի.

գ. միջանձնային հաղորդակցման.

դ. բանավոր և գրավոր հաղորդակցման.

ե. աշխատանքի պլանավորման և կազմակերպման.

զ. ժամանակի կառավարման.

է. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու.

ը. տեղեկատվության համակարգման, վերլուծության, վերամշակման.

թ. Համակարգչային հմտություններ

9. Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն պետք է օժտված լինի հետևյալ անձնային հատկանիշներով՝

ա. ձգտում դեպի շարունակական զարգացումը.

բ. նախաձեռնողականություն.

գ. ազնվություն, հոգատարություն և հուսալիություն.

դ. մշակութային իրազեկվածություն և զգայնություն.

ե. ճկունություն և ուշադրության բաշխում:

Կարիերայի ստորաբաժանման պատասխանատուն պարտավոր է պահպանել մասնագիտական և բարոյական էթիկայի նորմերը:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Ստորև ներկայացվում է կարիերայի և կարիերայի ուղղորդման ծառայությունների համար ընդունված միջազգային սահմանումները, որոնք են՝

Կարիերան ընդգրկուն եզրույթ է, որը ներառում է անձի կյանքի դերերը՝ հանգիստը, ուսումնառությունը և աշխատանքային գործունեությունը:

Կարիերայի ուղղորդումը ենթադրում է ծառայությունների մատուցում և գործողությունների պլանավորում, որոնք նախատեսված են աջակցելու ցանկացած տարիքի և կյանքի ցանկացած փուլում գտնվող անհատներին և կառավարելու իրենց կարիերան՝ ողջ կյանքի ընթացքում կատարելու կրթության, ուսուցման և մասնագիտության ընտրություն:

Նման ծառայություններ կարելի է ստանալ դպրոցներում, քոլեջներում և համալսարաններում, ուսուցում իրականացնող այլ հաստատություններում, զբաղվածության պետական ծառայություններում, աշխատավայրում, կամավորական, համայնքային կամ մասնավոր հատվածներում: Գործունեությունները կարող են իրականացվել անհատական կամ խմբային հիմունքներով և լինել առկա կամ հեռակա/հեռավար (ներառյալ՝ օգնության թեժ գծերն ու առցանց ծառայությունները):

Դրանք ներառում են կարիերայի մասին տեղեկատվության տրամադրում (տպագիր, ՏՀՏ-ի վրա հիմնված և այլ ձևերով), գնահատման և ինքնագնահատման գործիքներ, խորհրդատվական հարցազրույցներ, կարիերայի կրթության ծրագրեր (օգնելու անհատներին բարձրացնել նրանց իրազեկվածությունը սեփական անձի ու հնարավորությունների մասին և բարելավել կարիերայի կառավարման հմտությունները), փորձնական ծրագրեր (դիտարկել տարբերակները՝ նախքան դրանցից որևէ մեկն ընտրելը), աշխատանքի որոնման ծրագրեր և անցումային ծառայությունները:

Սահմանումն ընդունվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), Եվրոպական հանձնաժողովի ողջ կյանքի ընթացքում ուղղորդման փորձագիտական խմբի, Եվրոպական միության Խորհրդի, Համաշխարհային բանկի ու Կարիերայի զարգացման և հանրային քաղաքականության միջազգային գիտաժողովի կողմից:

II. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Ներկա ժամանակներում նույնականացվում են «մասնագիտական կողմնորոշում» և «կարիերայի ուղղորդում» հասկացությունները՝ հիմք ընդունելով շուկայական տնտեսության պայմաններում «մեկ մասնագիտություն ողջ կյանքի ընթացքում» սկզբունքի խորհրդային

մոտեցումները, մասնագիտությանը և զբաղմունքին ներկայացվող արագ փոփոխվող պահանջները, «կարիերա» հասկացության նոր ընկալումները, առանցքային հմտությունները, շարունակական կրթությունն ու ուսուցումը՝ որպես աշխատաշուկայում մրցունակության պահպանման երաշխիք լինելը:

Թույլ է աշխատաշուկայի և կրթական համակարգի փոխադարձ կապը: Այս համատեքստում, որպես բնակչության զբաղվածության, աշխատաշուկայի արդյունավետ հավասարակշռության երկարաժամկետ ապահովման հեռանկարային միջոց, մեծ նշանակություն է ստանում մասնագիտական կողմնորոշումը, որը պետք է հիմնված լինի անհատի մասնագիտական նախընտրությունների ձևավորման հիմնական գործոնների ամբողջության և դրանք իրականացնելու ուղիների բազմակողմանի հաշվառման վրա:

Սույնով պայմանավորված՝ **ՀՀ կառավարության կողմից 2012թ. հոկտեմբերի 4-ին կայացած նիստում հավանության արժանացավ «ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման (կարիերայի ուղղորդման) համակարգի զարգացման հայեցակարգը»:**

Նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները մասնագիտական կողմնորոշման հիմնական օղակներից են:

Մասնագիտական կողմնորոշման համակարգի հիմնական նպատակն է անձի հետաքրքրություններին, կարիքներին և առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայում որակավորված և մրցունակ կադրերի պահանջարկին առավելապես համապատասխանող մասնագիտական գործունեության ազատ և գիտակից ընտրության հնարավորության ստեղծումը:

Մասնագիտական կողմնորոշման միասնական համակարգի ստեղծումն ու զարգացումը ենթադրում է հետևյալ հիմնական խնդիրների համալիր լուծում՝

1) մշտական փոփոխվող իրավիճակներում անձի՝ ինքնուրույն կողմնորոշվելու կարողությունների ձևավորում,

2) անձին իր ողջ կյանքի ընթացքում տեղեկատվության, խորհրդատվության, ինչպես նաև անհրաժեշտ այլ հնարավորությունների շարունակական տրամադրում՝ մասնագիտության կամ զբաղմունքի ընտրության, կարիերայի պլանավորման հարցերում,

3) մասնագիտական կողմնորոշման ենթակա անձի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, հակումների, հետաքրքրությունների և շարժառիթների բացահայտում,

4) մասնագիտական կողմնորոշում իրականացնող կազմակերպություններին և մասնագետներին անհրաժեշտ մեթոդական ապահովում:

Մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի ուղղորդման աշխատանքները պետք է կրեն շարունակական բնույթ և իրականացվեն կարիերայի կենտրոնների միջոցով: Կարիերայի կենտրոնները պետք է համալրված լինեն անհրաժեշտ

նյութատեխնիկական բազայով, ունենան շահառուների հետ համապատասխան աշխատանքի մեթոդաբանություն, կարիերայի ուղղորդման ծառայություններ մատուցելու գծով վերապատրաստված մասնագետներ:

Նախնական, միջին մասնագիտական և բուհական հաստատությունների ուսումնական ծրագրերը կներառեն Կարիերայի կառավարում առարկան, որն ուղղված կլինի անձի ինքնագնահատման, աշխատանքի և հասարակության միջև կապի, կարիերայի պլանավորման, ձեռներեցությամբ սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատաշուկա մուտք գործելու համար հիմնական կարողունակությունների զարգացմանը:

Նշյալ փուլում պետք է տարվեն նաև անհատական աշխատանքներ՝ արդեն կոնկրետ մասնագիտությունների, պաշտոնների, տնտեսության առանձին ճյուղերի վերաբերյալ: Սերտ համագործակցություն պետք է հաստատվի առանձին գործատուների, գործատուների կազմակերպությունների, զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոնների և աշխատանքի տեղավորման գործակալությունների հետ:

III. ԿԱՐԻԵՐԱՅԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. Կարիերայի խորհրդատվություն. տեղեկատվություն, խորհրդատվություն և ուղղորդում անհատներին և խմբերին կարիերայի ընտրության վերաբերյալ.

Մեթոդաբանությունը.

- անհատական զրույց և խորհրդատվություն մասնագետի հետ,
- խմբային քննարկումներ, ոչ ֆորմալ դասընթացներ,
- հոգեչափական թեստավորում և կարիքի բացահայտում:

2. Կարիերայի կրթություն. ուսանողների համար ուսումնական գործողություններ՝ զարգացնելու և գնահատելու կարիերայի ընտրության իրենց հմտություններն ու գիտելիքը՝ ներառյալ.

- նախապատրաստում աշխատանքային հարցազրույցի,
- աշխատանքային ինքնակենսագրականի մշակում,
- ծանոթացում գործատուին դիմելու համար անհրաժեշտ նամակ և դիմում կազմելու ձևաչափերին,
- ժամանակի կառավարման հմտություններ,
- անձնային որակների և կարողությունների ինքնաբացահայտման հմտություններ,
- աշխատանքի որոնման տեխնիկայի տիրապետում:

Մեթոդաբանությունը. աշխատել տանը՝ օգտագործելով տրամադրված նյութերը, թիրախային դասեր խմբերում, այցելություններ գործատուներին, նախկին ուսանողների և գործատուների

ներդրումներ, կարիերայի տոնավաճառներ և ցուցահանդեսներ, թեմաներ (դասեր) ուսումնական պլանի այլ բաղադրիչներում:

3. Կարիերայի տեղեկատվություն. տնտեսության, գերակա ոլորտների, աշխատաշուկայի (այդ թվում՝ թափուր աշխատատեղերի), առանձին զբաղմունքների, կրթության և ուսուցման, մարդկային ռեսուրսի զարգացմանն ուղղված ազգային և միջազգային տեղեկատվության հասանելիություն:

Մեթոդաբանությունը. կարիերայի տոնավաճառներ և ցուցահանդեսներ, այցելություններ գործատուներին, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տարածքային կենտրոններ (ԶՊԾԳ ԶՏԿ), նախկին ուսանողների և գործատուների ներդրումներ, առցանց որոնումներ, թափուր աշխատատեղերի վերաբերյալ թերթերում զետեղված տեղեկատվություն, տեղեկատվություն գրադարանից, աշխատաշուկայի մասին հետազոտությունների ուսումնասիրություններ, հրապարակումներ և այլն:

4. Լրացուցիչ խնդիրներ

- Աշխատանքի, կարիերայի, մասնագիտությունների տոնավաճառների կազմակերպում
- Գործատուների, ԶՊԾԳ և այլ կազմակերպությունների հետ կապերի հաստատում
- Ադմինիստրատիվ աշխատանք, հետադարձ կապի ապահովում և այլն

Ուշադրություն. *ԱՍՀՆ ՄԿԿԶ կենտրոնը (նախկինում մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն ՊՈԱԿ) իր գործառույթների շրջանակներում շարունակում է աջակցել կարիերայի ստորաբաժանումների կայացմանը և անփնակազմի վերապատրաստմանը ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում ԿԳՄՄՆ հետ համատեղ:*

ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կարիերայի ուղղորդման անհատական և խմբակային մոդուլները ներկայացված են ստորև.

Անհատական խորհրդատվության տրամադրման նպատակը, մեխանիզմները և համապատասխան մեթոդաբանությունը.

ա) ուսանողի նախնական անհատական հարցազրույցի հարցաթերթիկի կազմում

բ) Անձի տեսակի բացահայտում՝ ըստ Հոլլանդի տիպաբանության

Մոդուլ 1. Անձնական ինքնագնահատում և SWOT վերլուծություն

Մոդուլ 2. Քննադատական և ստեղծագործական մտածողություն

Մոդուլ 3. Հաղորդակցություն

Մոդուլ 4. Խաղ-բանավեճ (վարման տեխնիկա)

Մոդուլ 5. 8 հիմնական եվրոպական կարողությունները

Մոդուլ 6. Մեծահասակների ուսուցում

Մոդուլ 7. Ինչպես աշխատանք փնտրել

Մոդուլ 8. Ինչպես մշակել մրցակցային CV

Մոդուլ 9. Ինչպես գրել ուղեկցող նամակ

Մոդուլ 10. Ինչպես ներկայանալ աշխատանքային հարցազրույցի

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Հ/Հ	ՄՈԴՈՒԼՆԵՐՆԵՐԻ ԵՎ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	ԺԱՄԱ-ՔԱՆԱԿԸ
	8-րդ դասարան	**34**
1.	**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	
1.1.	Մասնագիտության ընտրության կարևորությունը	1
1.2.	Մասնագիտական կողմնորոշման հիմնական հասկացությունները	1
1.3.	Մասնագիտության ընտրության գործոնները	2
2.	**ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄ**	
2.1.	Հավակնությունների մակարդակ. նպատակի սահմանում	2
2.2.	Իմ դիմանկարը	1
3.	**ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**	
3.1.	Անձի խառնվածքի տիպերը և մասնագիտության ընտրությունը	4
3.2.	Նախընտրելի մասնագիտության տեղն ու դերը մասնագիտությունների աշխարհում	2
4.	**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**	
4.1.	Մասնագիտության ընտրության ուղիները	1
4.2.	Ժամանակի արդյունավետ կամ նպատակահարմար կառավարում	2
4.3.	Անձի նախասիրությունների և շրջապատի սպասելիքների/հասարակական կարծիքի համադրում	2
5.	**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ**	
5.1.	Տարբեր մասնագետների աշխատանքային մեկ օրվա նկարագրություն	3
6.	**ՖԻԼՄԵՐԻ ԴԻՏՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ**	6
7.	**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ**	2

8.	**ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	2
9.	**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**	2
10.	**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ**	1
	9-րդ դասարան	**34**
1.	**ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄ**	
1.1.	Անձի հետաքրքրություններն ու նախասիրությունները մասնագիտության ընտրության գործընթացում	1
1.2.	Անձի ինքնաբացահայտում և ինքնաճանաչում	2
1.3.	Հաջողակ մարդու հատկանիշները և վարքագիծ	2
2.	**ԱՆՁԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ**	
2.1.	Մասնագիտական տիպերի բնութագիրը	3
3.	**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**	
3.1.	Նախընտրելի մասնագիտության և անձնային առանձնահատկություններին Համապատասխան մասնագիտության նկարագրիչ	3
4.	**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ**	
4.1.	ՀՀ-ի մասնագիտական կրթական համակարգը: ՀՀ-ում մասնագիտական ուսումնական հաստատությունները	2
4.2.	Աշխատաշուկայում մասնագետների առաջարկի և պահանջարկի համադրում	2
4.3.	Արդյունավետ որոշումներ կայացնելու կարողություններ	2
5.	**ԱՆՁՆԱՅԻՆ ԱՃ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**	
5.1.	Կարիերայի պլանավորում	2
5.2.	Եվրոպական 8 առանցքային/համընդհանուր կարողությունները (կոմպետենցիաները)	2
5.3.	Հաղորդակցման հմտություններ	2
6.	**ՖԻԼՄԵՐԻ ԴԻՏՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ**	**2**

7.	**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ**	**3**
8.	**ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**3**
9.	**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**	**2**
10.	**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ**	**1**
	10-րդ դասարան	**34**
1.	**ԱՆՁՆԱՅԻՆ ԱՃ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ**	
1.1.	Կարիերայի պլանավորում	1
1.2.	Մոտիվացիա/դրդապատճառ. բնութագիրն ու ձևավորման ուղիները	2
1.3.	Ներկայացման հմտություններ	2
1.4.	Համոզման արվեստ	2
1.5.	Քննական և վերլուծական մտածողություն	3
1.6.	Ձեռներեցության կարողունակություններ	2
1.7.	Լիդերություն. հիմնական հատկանիշները, տեսակները և դրսևորման ձևերը	3
1.8.	Ինքնասպասարկում, ինքնակառավարում	2
1.9.	Արդյունավետ թիմը աշխատանքային գործունեությունում	3
1.10.	Կոնֆլիկտի հաղթահարման հմտությունները	3
1.11.	Ինքնակենսագրական և աշխատանքի որոնում	2
2.	**ՖԻԼՄԵՐԻ ԴԻՏՈՒՄ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ**	1
3.	**ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ**	3
4.	**ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	3
5.	**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ**	1
6.	**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ**	1
	11-րդ դասարան	**15**

1.	**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ**	**15**
ԸՆԴԱՄԵՆԸ՝		117

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, հրապարակումներ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2021թվականի հունվար-հոկտեմբեր, https://armstat.am
2. «ՀՀ-ում կարիերայի ուղղորդման համակարգի զարգացման հայեցակարգ»
3. ՀՀ օրենք «Հանրակրթության մասին», www.arlis.am/documentview.aspx?docid=71908
4. ՀՀ օրենքը «Սոցիալական աջակցության մասին», www.arlis.am/documentview.aspx?docid=94972
5. ՀՀ օրենքը « Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», www.arlis.am/documentview.aspx?docid=51820
6. ՀՀ օրենքը «Պետական բյուջեի մասին», www.minfin.am/hy/page/petakan_byuj/
7. «Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա», www.arlis.am/DocumentView.aspx?docid=24230
8. «Հայաստանի Հանրապետության զբաղվածության ռազմավարությունը», www.irtek.am/views/act.aspx?aid=68183
9. «ՄԿՈՒ զարգացման ազգային ծրագիր», www.irtek.am/views/act.aspx?aid=66602
10. «Աշխատիր, Հայաստան» ռազմավարությունը, գործողությունների շրջանակը, 2019-2023 թվականների ֆինանսական գնահատականը, www.irtek.am/views/act.aspx?aid=152312
11. ՀՀ կառավարության կողմից 2021 թվականին հաստատված «Հանրակրթության պետական չափորոշիչ», www.arlis.am/documentview.aspx?docid=149788
12. Հայաստանի Հանրապետության 2021-2026 թվականների գործունեության ծրագիր , www.gov.am/am/Five-Year-Action-Program/
13. «Կարիերայի ուղղորդում» վերապատրաստման դասընթացի չափորոշիչն ու ուսումնական պլանները, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 24.09.2021, № 1602-Ա/2 հրամանը
14. «Կարիերայի ուղղորդման ակումբներ թիրախային դպրոցներում» գնահատում, Սեյվ դը Չիլդրեն, “Prisma հետազոտություն և վերլուծություն, «ԵՄ-ն հանուն երիտասարդների. ապագայի հմտություններ» Եվրոմիության ծրագիրը 10 դպրոցներում

15. Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր, https://arhmiutyun.org/wp-content/uploads/2020/10/Erakoxm-verjin.pdf
16. Հանրային քաղաքականության ինստիտուտ, «Բարձր որակավորում ունեցող մասնագետները Հայաստանի աշխատաշուկայում» հետազոտության զեկույց, https://edu2work.am/case-studies
17. Կարիերայի ուղղորդման և կարողությունների զարգացման կենտրոն, հրապարակումներ http://www.mycareer.am/arm/resources/
18. Ուսումնամեթոդական ձեռնարկ Հանրակրթության դպրոցներում մասնագիտական կողմնորոշման ծառայություններ իրականացնող մասնագետների համար, Երևան-2021
19. «Կարիերայի կառավարում» ձեռնարկ, Երևան-2015
20. «Կարիերայի կողմնորոշում մեծահասակների համար» ձեռնարկ, Երևան-2015
21. ՄԿՈՒ հաստատություններումկարիերայի կենտրոնների զարգացման ուղեցույց, Երևան-2013